

5958

3231(41.5)  
U-79

1898

323.1 (41.5)

5-79

ՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. Է. Գ. Ը.

# ԻՐԼԱՆԴԻԱՅԻ ԴԱՏԸ

Աշխատասիրեց Ստեփան Աւետիքեանց—Բանանցեցի

ԴԻՆՆ Է 80 ԿՈՊ.



ԲԱԳՈՒ  
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ“  
1898

2010

323.1(41.5)

Կ- 79

Եր.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Մ. Ն. Գ. Ը.

# ԻՐԼԱՆԴԻԱՅԻ ԴԱՏԸ

## ИРЛАНДСКОЕ ДѢЛО

соч. Степана Аветикьяна.

1004  
17384

Աշխատասիրեց Ստեփան Աւետիքեանց—Բանանցեցի



Ի Ա. Գ. ՈՒ  
Տ Պ Ա Ր Ա Ն „Ա Ր Օ Ր“  
1898.

6728 ակ

ՅԵՄԻՆ ԻՍՏՐԱԿՆԵՐԻ ԿՈՒՐՑԻ ԿՈՒՐՑԻ

Дозволено цензурою, С.-Петербургъ, 3-го Января 1898 г.

2001

## I.

Իրլանդիայի ու Անգլիայի միացումը կատարվեց վերջնականապես 1800 թ., երբ Իրլանդիան զրկվեց իր սեպհական պարլամենտից և ինքնուրոյն պետական կազմակերպութիւնից: Մինչև այդ ժամանակ Իրլանդիան ունէր Դուբլին մայրաքաղաքում իր պարլամենտը, որը կազմված էր երկու առանձին ժողովներից՝ լորդերի ժողովից, — վերին պալատ, — և համայնքների ժողովից, — ստորին պալատ: Թէ առաջին և թէ երկրորդ ժողովները լիովին գտնվում էին բարձր հողատէր արիստոկրատիայի ձեռքում, որը, օգտուելով իր այդ գերիշխանութիւնից, դարերի ընթացքում ծծում էր ողորմելի իրլանդական ժողովրդի արիւնը և պահում էր նրան անելանելի չքաւորութեան մէջ, գջլելով նրանից վերջին շապիկն անգամ: Հողատէր արիստոկրատիան, ստուար մեծամասնութեամբ պատկանելով բողոքական դաւանութեան, անողորմ ոտնահարում էր բուն իրլանդական ժողովրդի (որը գլխաւորապէս դաւանում է կաթօլիկութիւն) առանց այն էլ չնչին իրաւունքները: Այդ ատելութեան

գէպի ժողովուրդը Տիմք էին ծառայում և ծառայում են ոչ թէ կրօնական զգացմունքները, այլ զուտ տնտեսական շահերը: Իրերի այդ գրութիւնը թշուառ իրլանդական ժողովրդի համար անվերջ տառապանքների ու գրկանքների աղբիւր էր: Փոքրաթիւ օլիգարխիան,—բարձր դասակարգը, իր ձեռքում ունենալով կառավարութեան ղեկը, տնտեսականապէս խեղդում էր ժողովրդին, բայց նա, իր առջևն ունենալով պատմութեան դասերը, հերոսաբար տանում էր այդ ծանր լուծը, յոյս ունենալով վաղուշ օգտովել երկրի ինքնավարութիւնից, իր ձեռքը գրաւել պարլամենտը, ինչպէս այդ պատահեց Անգլիայում վերջին դարերի ընթացքում: Իր վերքերի վրայ վերք ստանալով հողատէր օլիգարխիայից, անպայման յետ մղված լինելով երկիրը կառավարող մեքենայից, պարլամենտից, իրլանդական ժողովուրդը այնուամենայնիւ ձայն չէր բարձրացնում իր այդ դառն «անկախորեան» գէմ, լաւ իմանալով, որ ներքին խռովութիւնների գէպքում հարևան Անգլիան առաջին յարմար առիթից կ'օգտվի նրա սիրելի «Վանաչ կղզին», Իրլանդիան, կլանելու համար, կը ոչնչացնի պարլամենտը, որ նրա համար ապագայի յոյս ու երջանկութեան պատնէշ էր: Իրլանդական ժողովրդի ղեկավարները խորը համոզված էին, որ մտաւոր առաջադիմութեան հոսանքը վաղուշ իր ճանապարհը կը հարթի, տասնութերորդ դարի ազատարար գաղափարները իրանց յաղթանակը կը տանեն, օլիգարխիան

կը խորտակվի և երկրի ինքնավարութիւնը կանցնի ժողովրդի ձեռքը. այն ժամանակ նա կը տեսնի բազաւոր օրեր, կը լինի անկախ տէր իր երկրի և իր սեպհականութեան: Առաջադիմութեան նշաններ տասնութերորդ դարի վերջերում արդէն նկատվում էին Իրլանդիայում. 1793 թ. ժողովրդական բուռն ագիտացիայի շնորհիւ իրլանդական պարլամենտը մի գիջում արեց. յատուկ օրէնքով կաթօլիկ ազգաբնակչութեան մի մասին, թէև փոքրաթիւ, շնորհվեց ընտրողական իրաւունք: Այդ առաջին յաղթութեան շնորհիւ ժողովրդի մէջ առաւել ևս ամրացաւ այն համոզմունքը, թէ պիտի ամեն գրկանքների ենթարկվելով, աշխատել վաղուշ գրաւել երկրի իշխանութիւնը, այլ ոչ թէ օտարից, Անգլիայից, փրկութիւն խնդրել:

## II.

Վրայ հասաւ 1800 թ.: Անգլիան միացրեց իր հետ Իրլանդիան, ոչնչացրեց Դուբլինի պարլամենտն ու երկրի անկախութեան միւս բոլոր հետքերը: Իրլանդական ժողովրդի դարաւոր ձգտումները անխնայ ոտնահարելով, նա կաշկանդեց նրան ամուր շղթաներով:

Հողատէր օլիգարխիան, լէնդ-լորդերը, տեսնելով ժողովրդի առաջադիմական ձգտումները, լաւ հասկացան, թէ ինչ վտանգ է իրանց սպառնում

ապագայում, ուստի լաւ համարեցին իրլանդական պարլամենտը վաճառել Անգլիային, քան թէ թողնել, որ նա ապագայում զէնք դառնայ ժողովրդի ձեռքում, մի զէնք, որով դարերի ընթացքում տառապող ժողովուրդը կը խորտակէր իր կեղեքողներին: Պարլամենտից զրկվելուն իրլանդական ժողովուրդը հանդիպեց խուլ անբաւականութեամբ. նրա ձայնն այն ժամանակ այժմեան գորեղութիւնը չունէր, որ նա ազգու կերպով բողոքէր այդ անբարեխղճութեան դէմ: Եւ թնչպէս բողոքէր նա, երբ նրա գոյութիւնը ոչոք ճանաչել չէր ուզում, երբ նա գուրկ էր ինքնապաշտպանութեան որ և է միջոցներից: Երբ յարմար բոպէն վրայ հասաւ, Անգլիան բանակցութիւններ սկսեց օրիգարխիայի հետ. այդ բանակցութիւնները շատ երկար չը տւեցին: Անգլիական կառավարութիւնը Գուբլինի պարլամենտի լորդերին ու պատգամաւորներին առաջարկեց տասնհինգ միլիօն բուբլի (միլիօն ու կէս ստերլինգ), և այդ գումարը բաւական եղաւ նրանց անպայման հաւատարմութիւնը ստանալու: Գուբլինի պարլամենտն անհետացաւ: Իրլանդիայի լէնդլորդերը բացի վերոյիշեալ միլիօններից ստացան նորանոր տիտղոսներ, չաղ պաշտօններ Անգլիայում ու Իրլանդիայում ու դարձան հաւատարիմ ծառաներ բրիտանական թագի: Ահա ինչ միջոցներով անգլիական կառավարութիւնը ստեղծեց Իրլանդիայի ու Անգլիայի միութեան դաշնագիրը, որի մասին Քլադստօնը 1886 թ. իր արտասանած

ճառերից մինում ասաց հետեւեալ խօսքերը. «Ես պատմութեան էջերում չեմ գտնում դրանից աւելի քստմնելի խաբէութիւն:» Բայց միայն Քլադստօնը չէ, որի համար միութեան դաշնագիրը այդ բարոյական պատկերն ունի: Քլադստօնի նշանաւոր հակաակորդներից մինը, յայտնի պատմաբան Լէքքին, համարեա նոյն կարծիքն է յայտնում միութեան դաշնագրի մասին: Նա ասում է. «Մի կողմ թողած այդ համաձայնութեան վերացական առաւելութիւնները, միութեան դաշնագիրը իր իրագործման ձևով ներկայացնում է իրանից մի քստմնելի յանցանք, յանցանք, որը ամենախայտառակ պարագաների մէջ իրլանդական ժողովրդի շնքին կապեց մի նոր կառավարութիւն, որը նա չէր ուզում, որի դէմ բողոքում է և որը հիմնայտակարեց Իրլանդիայի հասարակական ու քաղաքական կեանքի կանոնանոր զարգացման ամբողջ ընթացքը»: Բռնի միութիւնը իրլանդական ժողովրդի սև օրերին աւելացրեց սև օրեր: Նրա բնական հասարակական զարգացումը սկզբում կանգ առաւ. հարցերը հարցերի յետևից ծագում էին, բայց մնում էին անվճիռ, գնալով կուտակվում էին միմեանց վրայ ու երկրի կառավարութիւնը քաօսական դրութեան մէջ գնում: Ժողովրդի ամենակենսական պէտքերը մնում էին անուշադիր, իսկ կեանքը նոր և նոր պահանջներ էր դնում նրա առաջ: Նրա գոյութիւնը անպայման կախված էր անգլիական պարլամենտի ու Լօնդօնի կառավարութեան բարե-

հաճութիւննից, որոնք բոլորովին հարկաւոր չէին համարում ուշք դարձնել նրա պահանջների վրայ, այլ միայն մտածում էին նրան սանձահարելու մասին: Իրլանդիայի վերաբերմամբ Անգլիան սկսեց այն դերը խաղալ, ինչ դեր խաղում է դժբախտ բնտանիքի մէջ չար խորթ մայրը իրան յանձնված թշուառ որբերի վերաբերմամբ: Նա զօրեղացնում էր Իրլանդիայում իր ազմինիստրացիան, մեծացնում էր զօրքերի թիւը, ոստիկանական ցանցով քայլ առ քայլ պաշարում էր ամբողջ երկիրը, արտաքոյ կարգի լիազօրութիւններ տալով այնտեղի իր նահանգապետներին, որոնց միջոցով նպատակ ունէր անպայման հնազանդութեան մէջ պահել Իրլանդիան ու արմատախիլ անել ժողովրդի ձգտումները: Յատուկ օրէնքներն ու նահանգապետներին տուած առանձին լիազօրութիւնները սկսեցին խեղդել Իրլանդիան սկսած 1800 թ., միութեան դաշնագրի իրագործման օրից. այդ օրէնքներն ու լիազօրութիւնները անթիւ են ու անհամար: Հրամաններն ու շրջաբերականներն միմեանց յետևից դուրս էին թռչում Լոնդօնից դէպի «Վանաչ կղզին», բայց իրլանդական ժողովուրդը չէր խեղդվում նրանց ծանրութեան տակ: Նա հերոսաբար տանում էր այդ անտանելի լուծը, չէր բնկծվում, խուլ կռիւ էր մղում նոր կարգերի դէմ, քիչ-քիչ արդէն բարձրացնում էր իր ձայնը ու երբեմն այնքան ուժգին, որ լսելի էր դարձնում նրան բրիտանական պարլամենտում, դուրս խլելով նրա ձեռքից

այս կամ այն գէնքը, այս կամ այն վերանորոգութիւնը: Վերջին դարիս Իրլանդիայի պատմութիւնը միակ նիւթ ունի հերոսական կռիւը, իրլանդական ժողովրդի միահամուռ բողոքներն ու շարժումը, որոնց միջոցով միայն նա կարողացաւ ստիպել Անգլիային ուշ դարձնել իր դարաւոր ցաւերի ու վերքերի վրայ: Անգլիայում անգամ քիչ-քիչ սկսեցին լսվել 1800 թ. միութեան դաշնագրի դէմ բողոքող ձայներ, որոնք քաջութիւն ունեցան բացարձակապէս յայտնել, թէ միութեան դաշնագիրը միահագին քաղաքական սխալ է, որ վաղուշ պիտի ուղղել: Բայց այդ ձայները սկզբում դեռ հատ ու կտոր էին. պարլամենտում, ևս առաւել պարլամենտից դուրս, դրանց լսող չը կար: Անգլիացիների աչքում այդպիսի ձայն բարձրացնողները դաւաճաններ էին միայն:

### III.

Ինչպէս վերեն ասացինք, միութեան դաշնագիրը կապած օրից Անգլիան սկսեց Իրլանդիային վերաբերվել, ինչպէս չար խորթ մայր: Նա չը կատարեց իր գլխաւոր խոստումը, որ է հետևեալը. միութեան դաշնագրի մասին եղած բանակցութիւնների ժամանակ անգլիական կառավարութիւնը, որի ղեկն այն ժամանակ գտնվում էր Ուիլլիամ Պիտտի ձեռքում, Իրլանդիայի կաթօլիկ ազգաբնակչութեան

ընդդիմադրութիւնը թուլացնելու նպատակով հրապարակօրէն յայտնեց, որ միացեալ Անգլիայի ու Իրլանդիայի պարլամենտի առաջին օրէնսդրական ակտն է լինելու՝ շնորհումն Իրլանդիայի ամբողջ կաթօլիկ ազգաբնակչութեան ձայն հասարակական ու քաղաքական իրաւունքների, այն չափով, ինչ չափով որ այդ իրաւունքները գոյութիւն ունին բրիտանական պետութեան միւս մասերում: Չճարիտ, երբ միութիւնը իրագործվեց, Պիտտն սկսեց նախապատրաստութիւններ տեսնել իր այդ խոստումն իրագործելու համար, նա պատրաստեց յատուկ օրինագիծ (Bill) պարլամենտին ներկայացնելու նպատակով, որով բոլոր կաթօլիկները լայն քաղաքական իրաւունքներ էին ստանում, բայց այդ օրինագիծը, դեռ պարլամենտը չը հասած, սաստիկ ընդդիմադրութեան հանդիպեց Քէորզ III թագաւորի կողմից, որը օրինագիծը անպայման վնասակար գտաւ ու Պիտտի բերած ոչ մի պատճառաբանութիւնը չը յարգեց: Վերջինս անգոր գտնվեցաւ գնալ թագաւորի կամքի դէմ, քանի որ այդ հարցի վերաբերմամբ իր ետևում չունէր պարլամենտի ստուար մեծամասնութիւնը, որն Անգլիայում մի գերագոյն ոյժ է և որի վրայ հիմնվելով, երկրի կառավարութիւնը կարող է բոլորովին ինքնուրոյն ու անկախ գործել: Այդպիսով հնար չունենալով իր օրինագծի համար ճանապարհ հարթել պարլամենտում, Պիտտը ստիպված եղաւ հրաժարական տալ: Նրա անկումով կաթօլիկներին քա-

ղաքական իրաւունքներ շնորհելու հարցը անորոշ ժամանակով յետաձգվեց, յուսահատութեան մատնելով Իրլանդիայի կաթօլիկ ժողովրդին, որը գուրկ մնալով քաղաքական իրաւունքներից, Անգլիայի գերիշխանութեան ներքոյ էլ շարունակում էր իր շինքի վրայ տանել քաղաքական ու տնտեսական ստրկութեան ծանր լուծը, որով խեղդում էր նրան բողոքական փոքրամասնութիւնը, հողատէր օլիգարխիան: Պիտտի անկումից յետոյ Իրլանդիայի կաթօլիկ ժողովրդի ամենամօտ նպատակը դարձաւ դուրս խլել անգլիական պարլամենտի ձեռքից խղճի ազատութիւն ու բոլոր դաւանութիւնների հաւասարութիւն, որոնց միջոցով նա յոյս ունէր ազատվել իր ուսերը մաշող ծանր լծից, հողատէր արիստօկրատիայի իր վրայ ունեցած քաղաքական ու տնտեսական իրաւունքներից: Պիտտի անկումը թէև յետաձգեց կաթօլիկներին քաղաքական իրաւունքներ շնորհելու հարցը, բայց անպայման մոռացութեան չը մատնվեց նա: Անգլիայի մի փոքրաթիւ ազատամիտ շրջանում նա արծարծվում էր, բայց այդ շրջանից դուրս անգլիացիների կողմից համակրութիւն չէր գտնում: Այն ինչ այդ հարցը Իրլանդիայում առաջ բերաւ ահագին ժողովրդական շարժում, որը չտեսնված ծաւալ ստացաւ, երբ նրա գլուխն անցաւ հռչակաւոր իրլանդացի գործիչ Գաննիէլ Օ'Կոննէլը:

#### IV.

Օ՛հօննէլը շնորհիւ իր փալլուն հռետորական տաղանդի իր շուրջը ժողովեց Իրլանդիայի ամբողջ կաթօլիկ ազգաբնակութիւնը ու այդ ահագին զօրքի գլուխն անցնելով, սկսեց քալլ առ քալլ առաջ ընթանալ դէպի գլխաւոր նպատակը: Իր գործունէութեան մէջ նա ապօրինի միջոցների չէր դիմում, իր յարուցած ահագին ժողովրդական ագիտացիան օրինական շրջանակի մէջ էր պահում: Դրա մէջ էր միայն նա տեսնում իր ոյժը, և շնորհիւ գործունէութեան այդ եղանակին, նա կարողացաւ մի քանի տասնեակ տարիներ մնալ ասպարէզի վրայ: Ժողովրդական շարժումը թէև սկսւեց 1800 թ., բայց նա իսկապէս նկատելի եղաւ 1809 թ., երբ Դուբլինում կազմակերպւեց «Կաթօլիկական կօմիտեա», որի նպատակն էր երկրի այս կամ այն կենտրոնում կազմել հասարակական ժողովներ (միտինգներ) կօմիտեաի առաջարկած հարցերը քննելու ու նրանց վերաբերմամբ խնդրազերներ կազմելու, պարլամենտին ներկայացնելու համար: Կօմիտեաը սկսեց գործել մեծ եռանդով, նրա հրաւերները Իրլանդիայի համարեա բոլոր անկիւններում արձագանք գտան, և ցանկալի շարժումը իր կանոնաւոր ընթացքն ստացաւ: Կօմիտեաի գործունէութիւնը անուշադիր մնալ կառա-

վարութեան կողմից, Իհարկէ, չէր կարող: Իրլանդիայի ազմինիստացիան, Լօնդօնից եկած խիստ հրահանգներից ոյժ ստացած, մեծ եռանդով սկսեց ճնշել գոյութիւն ունեցող շարժումը: Սկզբում նա աջողութիւն ունեցաւ. մի առ ժամանակ ժողովրդական շարժման բուռն հոսանքը թուլացաւ, որին մասամբ նպաստեցին Իրլանդիայի կաթօլիկ բարձր հոգևորականութեան մէջ այն ժամանակ գոյութիւն ունեցող անհամաձայնութիւնները: Այդպէս շարունակվեց մինչև 1823 թ., երբ Օ՛հօննէլին աջողվեց ժողովրդական շարժումը աւելի լայն հիմքերի վրայ դնել, շնորհիւ մասամբ այն համերաշխութեան, որով նրան յաջողվեց կապել ժողովուրդն ու հոգևորականութիւնը: Այդ փոխադարձ համերաշխութեան պտուղն եղաւ «Կաթօլիկական միութիւն» հսկայական ընկերութիւնը, որի անդամ կարող էին լինել ժողովրդի բոլոր դասակարգերի մարդիկ և որը շնորհիւ զորա քիչ ժամանակամիջոցում կարողացաւ իր գաւառական օրգանների ու ճիւղերի ցանցով ծածկել ամբողջ երկիրը: Այդ բոլոր ճիւղերը գործում էին համաձայն ընկերութեան կենտրոնական վարչութեան հրահանգների: Ժողովրդական ագիտացիան գնալով զօրեղանում էր, ընդհանուր շարժումը մեծ ոյժ էր ստանում, որին, շնորհիւ կաթօլիկ հոգևորականութեան ոգևորված քարոզների, ժողովուրդը աւելի ու աւելի էր անձնատուր լինում, չր խնայելով ոչ մի օրինաւոր միջոց իր նպատակներին

հասնելու համար: Օ՛հօննէլի ժողովրդականութիւնը գնալով գորեղանում էր. այն միտինգներում, ուր նա խօսում էր, ամբօխի թիւը հազարներով էր որոշվում, այնքան շատ էին լինում նրան ունկընդերները: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այդ ահագին ագիտացիան առաջ տանելու համար հարկաւոր էին նիւթական մեծ միջոցներ, և այդ միջոցները չէր խնայում իրլանդական ժողովուրդը իր գործիչներին: Օ՛հօննէլի առաջարկութեամբ բոլոր եկեղեցիներում հիմնվեց առանձին գանձանակ, որը և դարձաւ սկզբում ժողովրդական շարժման նիւթական պէտքերի միակ աղբիւրը: Թէև այդ տուրքը կամաւոր էր, բայց իրլանդացի լետին չքաւորն անգամ չէր խնայում իր վերջին կոպէկն այդ սուրբ գանձանակի համար: «Կաթօլիկական միութեան» գործունէութիւնը իր վրայ գրաւեց անգլիական կառավարութեան ուշադրութիւնը, որը, անպայման վտանգաւոր համարելով նրա գործունէութիւնը, վճռեց ամենաեռանդուն միջոցներ գործ դնել նրա դէմ: Չընայած իր բուռն ցանկութեան՝ ոչնչացնել վնասակար ընկերութիւնը, անգլիական կառավարութիւնը սկզբում անզօր գտնվեցաւ այդ անել, քանի որ Օ՛հօննէլի ձեռնարկութիւնը երկրում գոյութիւն ունեցող օրէնքների դէմ չէր մեղանչում: Այդ օրէնքներից նշանաւորներն են նրանք, որոնք տալիս են մեծ Բրիտանիայի բոլոր հպատակներին մտքի, խօսքի, մամուլի, հասարակական ժողովների ու ընկերութիւնների ա-

գատութիւն: «Կաթօլիկական միութիւնը» ոչնչացնելու համար Լօնդօնի կառավարութեան հարկաւոր էր իր ձեռքում ունենալ որ և է գէնք, յատուկ օրէնք, և այդ օրէնքն ստանալու համար նա դիմեց պարլամենտին, ներկայացնելով նրան մի օրինագիծ, որի մէջ ասված էր հետևեալը. «Կաթօլիկական միութիւնը, իբրև վնասակար ընկերութիւն, անպայման լուծվում է ու խտփանվում:» Կառավարութիւնը իր օրինագիծը շատ կարճ էր ձևակերպել. առանց մանրամասն պատճառաբանութիւնների, լաւ իմանալով, որ պարլամենտը առանց որ և է պատճառաբանութեան պատրաստ է տալ կառավարութեան ձեռքը նրա ցանկացած գէնքը: Թէ ինչքան թոյլ էին կառավարութեան առաջ բերած փոքրաթիւ պատճառաբանութիւնները, երևում է հետևալից. «Կաթօլիկների միութեանը» մեղադրելով, նա գլխաւորապէս հիմնվում էր Օ՛հօննէլի իրլանդական ժողովրդին ուղղած շրջաբերականի վրայ, որի մէջ նա հրաւիրում էր իրլանդացիներին հետևել առողջ գատողութեան, հաւատարիմ մնալ կաթօլիկ եկեղեցուն ու հոգևորականութեան, յարգել թագաւորին ու երբէք չըդուրս գալ օրինական ճանապարհից, հեռու պահել իրանց գաղտնի ընկերութիւններից ու քրէական յանցանքներից, ինչնպատակի էլ որ չըլինին ուղղված նրանք. առաջ չը բերել հոգային անկարգութիւններ, որոնք միայն սնտեսական անեղանելի գրութեան մէջ կարող էին

դնել երկիրը: Լօնդօնի կոնավարութիւնը Օ'Կօննէլի շրջաբերականը մի դիմակ էր համարում նրա կողմէնակիցների համար և հաւատացնում էր պարլամենտին, որ այդ բոլորը եզուիտական միջոց է յայտնի նպատակներին հասնելու համար: Պարլամենտը իրան երկար խնդրել չըստիպեց. թէ համայնքների և թէ լօրդերի ժողովները ձայների ասագին մեծամասնութեամբ ընդունեցին կառավարութեան օրինագիծը, որը օրէնքի ոյժ ստանալով, վերջ դրեց Օ'Կօննէլի մեծ գործին, «Կաթօլիկական միութեան» գոյութեանը: Այդ դէպքը պատահեց 1825 թ.: Պարլամենտն աւելի հեռատես գտնվեցաւ՝ քան կառավարութիւնը. նա այդ օրէնքը տուեց նրա ձեռքը իբրև փորձնական միջոց, ժամանակաւորապէս, մինչև 1828 թ.: Եթէ երեք տարուայ ընթացքում կառավարութիւնը նոր օրէնքի միջոցով կարողանար խեղդել Իրլանդիայում ժողովրդական շարժումը, այն ժամանակ պարլամենտն այդ օրէնքը կը դարձնէր մշտական, և կառավարութիւնը, իհարկէ, աւելի մեծ չափով կ'օգտվէր նրանից: Բայց երեք տարուայ փորձը բոլորովին հակառակը ցուցեց. կառավարութիւնը իր նպատակներին չը հասաւ և ստիպվեց խոնարհվել հանգամանքների առաջ: Օ'Կօննէլը բոլորովին չը յուսահատվեց, երբ պարլամենտում ընդունվեց «Կաթօլիկական միութիւնը» խափանելու օրինագիծը: Նա յաճախ կըրկնում էր. «Ես երեք զուգ ձի լծած կարող եմ ազատ թռչել ամենաբարդ պարլամենտական ակտի ձգձրգ-

1004  
17384

ված ու խճճված թելերի արանքներով: Եւ նա շուտով ապացուցեց, որ ընդունակ է այդպիսի ճարպիկ թռիչքներ գործելու: Նրա առաջարկութեամբ «Կաթօլիկական միութիւնը», չը սպասելով կառավարութեան կողմից նոր օրէնքի իրագործելուն, ինքն իրան լուծեց ու իր գործունէութիւնը վերջացած յայտարարեց: Բայց դորա փոխարէն խնդն ևեթ կազմակերպեց նոր ընկերութիւն, որն իր կազմակերպութեան արտաքին ձևով տարբեր լինելով «Կաթօլիկական միութիւնից» ու ոչ մի ձևական նմանողութիւն չունենալով նրան, ազատվում էր նոր օրէնքին ենթարկվելուց, որն ուղղված էր միայն «Կաթօլիկական միութեան» դէմ: Օ'Կօննէլի կազմակերպած նոր ընկերութիւնը յայտարարեց իրան լոկ բարեգործական ընկերութիւն, որի գըլխաւոր նպատակն էր տարածել ժողովրդի մէջ կըրթութիւն, բանալ դպրոցներ ու հիւանդանոցներ: Քաղաքական նպատակների մասին ոչ մի խօսք չէր ասված, այն ինչ ընկերութիւնը նոր դիմակի տակ սկսեց նախկին եռանդով «Կաթօլիկական միութեան» գործը շարունակել: Գործունէութեան արտաքին ձևերն ուրիշ էին, այն ինչ ներքին բովանդակութիւնը նոյնն էր: Այդպէս շարունակվեց մինչև 1828 թ., երբ 1825 թ. ժամանակաւոր օրէնքը պիտի վերջացնէր իր գոյութիւնը: Կառավարութիւնն ու պարլամենտը պարզ տեսնելով իրանց կրած պարտութիւնը Իրլանդիայի շարժումներին վերջ դնելու գործում և ոչ մի հնար չը գտնելով

օրինական միջոցներով իրանց այդ զիտումներն իրագործելու, աւելի լաւ համարեցին մոռացութեան տալ 1825 թ. օրէնքի գոյութիւնը, որն այդպիսով մեռաւ մի րոպէ անգամ կեանք չը վայելելով: 1828 թ. Օ'հօննէլի ամենամեծ գործը, «Կաթօլիկների միութիւնը» կրկին կենդանութիւն ստացաւ ու հսկայական քայլերով սկսեց առաջ գնալ: Ագիտացիան զօրեղացաւ, ժողովրդական շարժումը չը տեսնված ծաւալ ստացաւ: Օ'հօննէլի կազմած միտինգներին երբեմն տասնեակ հազարաւոր իրլանդացիներ ներկայ էին գտնվում: Եարժումը մեծ էր. ժողովրդի ձայնը լսելի էր լինում Իրլանդիայի սահմաններից դուրս: 1829 թ. Օ'հօննէլը մասամբ իր նպատակին հասաւ. նա վերջապէս կարողացաւ համոզել պարլամենտին՝ տալ իրլանդական ժողովրդին նրան խոստացած օրէնքները: Պարլամենտը ձայների մեծամասնութեամբ ընդունեց կաթօլիկների քաղաքական իրաւունքների հաւասարացումը բողոքականների հետ: Այդ օրէնքով Իրլանդիայի իրաւագուրկ կաթօլիկ ժողովուրդը ձեռք բերեց հողատէր բողոքական արիստօկրատիայի հետ հաւասար քաղաքական իրաւունքներ, և վերջինս, արիստօկրատիան՝ մասամբ զրկվեց իր արտօնեալ դրութիւնից: Կաթօլիկների քաղաքական իրաւունքներ ձեռք բերելը առաջին մեծ յաղթութիւնն է, որը տարաւ Իրլանդիան իր ազատութեան համար վարած կռոււմ: Այդ մեծ յաղթութիւնը արդիւնք էր այն լայնածաւալ ազդու ժողովրդական շարժ-

ման, որի գլխաւոր առաջնորդն էր Դանիէլ Օ'հօննէլը:

Վ

1829 թ. յաղթութիւնը թէև մեծ ոգևորութիւն պատճառեց իրլանդացիներին, բայց շնորհիւ մի քանի հանգամանքների դարձաւ փոխադարձ անբաւականութիւնների նոր աղբիւր: Բանը նրանումն էր, որ կաթօլիկներին վերաբերեալ օրինագիծը մշակող պարլամենտական լանձնաժողովը հարկաւոր չը համարեց իր պարապմունքներին մասնակցելու հրաւիրել Օ'հօննէլին, օրինագծի իսկական հեղինակին: Այդ վարմունքը չէր կարող չը վիրաւորել իրլանդացիներին, որոնք իրանց հօշակաւոր առաջնորդին ազգի պարծանք էին համարում ու նրա անունով երգվում էին: Ժողովրդի մէջ Օ'հօննէլը յայտնի էր «ազատող» մականունով. վիրաւորել նրան, նշանակում էր վիրաւորել ամբողջ ազգը: Բացի այդ, ժողովրդի անբաւականութեան պատճառ դարձաւ անգլիական կառավարութեան մի նոր քայլը. 1829 թ. օրէնքը հրատարակելուց յետոյ, կառավարութիւնը, որի գլուխն էր կանգնած այն ժամանակ Րօբերտ Պիլը, պարլամենտում անցկացրեց մի նոր օրէնք, որով Իրլանդիայում չունեւոր դասակարգի քաղաքական, ընտրողական իրաւունքները սահմանափակվում էին: Անբաւականութեան այդպիսի սերմեր ցանելով, այդպիսի նորանոր հարուածներ տալով իրլանդացիներին, անգլի-

ական կառավարութիւնը կարծես անգիտակցաբար ժողովրդի նոր շարժում էր առաջ բերում: Պիլի օրէնքը հրատարակելուց յետոյ, ժողովրդական մի միտինգում Օ'Կոննէլն ասաց. «Մեզ հարկաւոր է նոր յաղթութիւն, որով կարողանանք կրկին անգամ հարուածել կառավարութեան յանդուգն քաղաքականութեան: Ներկայ մինիստրները, դաւաճանելով իրանց կուսակցութեան, չեն կարող հաւատարիմ մնալ մեր կուսակցութեան. խղճի ազատութիւն շնորհելով մեզ, նրանք զիջան ոչ թէ առողջ դատողութեան, այլ իրերի անողորմ պահանջներին»:

Նոր ժողովրդական շարժումն իրան երկար սպասել չը տուեց: «Կաթօլիկական միութիւնը» իր նոր կազմակերպութեամբ նոր ուժ տուեց վիթխարի շարժման, այս անգամ նպատակ դնելով իրան ոչ այլ ինչ, եթէ ոչ Իրլանդիայի քաղաքական անկախութիւնը: Իրլանդացիների յոյսերը կրկնապատկեցան շնորհիւ այն հանգամանքի, որ այդ միջոցին, 1830 թ., Օ'Կոննէլը պարլամենտի անդամ ընտրվեց: Աւելորդ է ասել, որ այդ շարժումը աւելի եռանդուն ընդդիմադրութեան հանդիպեց կառավարութեան կողմից, որն առանց պարլամենտին դիմելու սկսեց զուտ ագմինիստրական միջոցներ գործ դնել Իրլանդիայում նոր շարժումն իր սողմի մէջ սպանելու համար: Նրան յաջողվեց մի առ ժամանակ մեղմացնել շարժումը. 1830 թ. մինչև 1840 թ. մեծ փոթորիկներ չը պատահեցան:

Այդ ժամանակամիջոցում Օ'Կոննէլն իր փոքրաթիւ կուսակցութեամբ գործում էր պարլամենտում: Այդ տասնամեայ պարլամենտական գործունէութիւնը անհետևանք չանցաւ: Օ'Կոննէլին աջողվեց համոզել պարլամենտին՝ տալ Իրլանդիային երկու նոր օրէնք. 1-ը՝ եկեղեցական տասանորդը յօգուտ պետական բողոքական եկեղեցու վճարելու պարտաւորութիւնը դնել հողատէր բողոքական արիստոկրատիայի վրայ, իսկ կաթօլիկ երկրագործ ժողովրդին, Ֆէրմերներին, անպայման ազատել այդ հարկից. 2-ը՝ լայնացնել կաթօլիկների իրաւունքները երկրի ներքին ինքնավարութեան գործում, ինչպէս՝ քաղաքային ու համայնական ընտրութիւնների գործում: Բայց Օ'Կոննէլի պարլամենտական գործունէութեան գլխաւոր նպատակն այդ օրէնքները չէին. դրանք նրա համար նախապատրաստական միջոցներ էին: Նա իր ամբողջ կեանքի նպատակն էր դրել երկրի քաղաքական անկախութիւնը. այդ մեծ նպատակին հասնելու համար նա կռիւ սկսեց նոյն իսկ պարլամենտի դէմ: 1834 թ. նա բացարձակապէս առաջարկեց բրիտանական պարլամենտին ոչնչացնել 1800 թ. միութեան դաշնագիրը, ասելով, որ այդ քայլը անհրաժեշտ է նորա համար, որ դորանով միայն կարելի է ապագայում անհնարին դարձնել Իրլանդիայի անպայման անջատումն Անգլիայից, անջատում, որ կորստաբեր հետևանքներ կունենայ երկու կողմերի համար էլ: Օ'Կոննէլի ճառը շատ երկար էր. շարունակվեց համարեա ան-

ընդհատ ամբողջ եօթը ժամ: Պարլամենտը չը տեսնված համբերութեամբ լսում էր, համակրութեան ոչ մի նշան չը ցոյց տալով, ի հարկէ: Մեռելային լուսթիւն էր տիրում դահլիճում. այդ լուսթիւնը երբեմն միայն խանգարվում էր մի բուռն իրլանդացի պատգամաւորների ոգևորված ծափահարութիւններով: «Յետ դարձրէք Իրլանդիային նրա պարլամենտը, — ասում էր Օ'Կոննէլը, — Իրիտանական պարլամենտը անընդունակ է Բրլանդիային վերաբերեալ օրէնսդրական գործերում: Միութիւնը ձեռք է բերված անօրինակ լանցանքների միջոցով: Իրլանդիան զրկված է իր սահմանադրութիւնից, իրլանդական՝ ժողովուրդը՝ իր գոյութեան ամենաէական միջոցներից: Անգլիայի ներկայ քաղաքականութեան հետևանքը կարող է լինել Իրլանդիայի լաւիտենական անջատումն իր խորթ մօրից: Իմ հայրենիքը կառավարվել է մինչև այժմ ու հիմա էլ կառավարվում է ոչ թէ սահմանադրական օրէնքներով, այլ կառավարչական բռնակալութեամբ: Ահա ես ինչու խնդրում եմ Անգլիայից լետ դարձնել Իրլանդիային նրա պարլամենտը:» Օ'Կոննէլի առաջարկութիւնը պարլամենտը մերժեց ձայների ահազին մեծամասնութեամբ, 523 ձ. ընդդէմ 38: Վերջիններիս թւում մի անգլիացի կար միայն. մնացած 37-ը իրլանդացիներ էին: Օ'Կոննէլը լաւ էր հասկանում, որ իր առաջարկութիւնները բրիտանական պարլամենտը չի ընդունել: Նրա գլխաւոր նպատակն էր այդ միջոցով գորեղացնել ժողո-

վրդական շարժումն Իրլանդիայում, և նա իր նպատակին հասաւ: 1840 թ. շարժումը հրդեհի պէս բռնկեց. ամբողջ երկիրը, որին քիչ չը նպաստեց նոյն թւին Օ'Կոննէլի հիմնած մի նոր մեծ ընկերութիւն Repeal Association անունով: Կառավարութիւնն այդ ժամանակ ձեռք բերեց մի նոր օրէնք, որով աւելի ևս սահմանափակվում էր ընտրողական իրաւունքը Իրլանդիայում: 65 տարեկան Օ'Կոննէլը գիշեր ցերեկ շրջում էր երկրի խորքերում, քաղաքից քաղաք, գիւղից գիւղ թափառելով, միտինգներ կազմելով. նա այդ ժողովներում երիտասարդական աշխուժով խօսում էր ամբողջ ժամերով, արծարծելով Իրլանդիայի անկախութեան հարցը: Նոր շարժման գորեղանալուն քիչ չը նպաստեց Nation լրագիրը, որը ծնունդ ստացաւ 1842 թ. և իր շուրջը ժողովեց երկրի քաղաքական անկախութեան գործին անձնանուէր երիտասարդութիւնը: 1843 թ. Օ'Կոննէլը Գուբլինի քաղաքային խորհրդի քննադատութեան առաջարկեց 1800 թ. միութեան զաշնագրի ոչնչացման հարցը, որը երկար վիճաբանութիւններից լետոյ ընդունվեց 41 ձայնով ընդդէմ 15: Այդ դէպքը մեծ տպաւորութիւն գործեց ամբողջ երկրում ու մեծ զարկ տուեց ընդհանուր գործին: Ժողովրդական շարժումը հասաւ իր գագաթնակէտին: Այդ տարուայ (1843 թ.) ընթացքում մինը միւսի լետեից երկրի զանազան կենտրոններում կազմակերպվեցան հրէշաւոր միտինգներ, որոնց մասնակցողների թիւը հարիւր

հազարների էր հասնում: Միայն մայիս ամսում կայացաւ 11 միտինգ, որոնց մասնակցողները թիւը երկու միլլիօնից աւելի էր: Այդ բոլոր ցուցերը կրում էին խաղաղ բնաւորութիւն. խռովութեան ոչ մի նշանաւոր դէպք չը պատահեց: Ամբոխի ցոյց տուած օրինակելի դիսցիպլինան զարմացնում էր նոյն իսկ անգլիացի նահանգապետներին, որոնք անգոր էին դիմադրել միտինգներին, ապօրինի ոչ մի դէպք չը գտնելով նրանց գործունէութեան մէջ: Այդ դիսցիպլինան հետեւանք էր Օ'Կոննէլի ու իրլանդացիների միւս արժանաւոր առաջնորդների դիւթական զօրութեան, որոնք զարմանալի արիութեամբ կարողանում էին ժողովրդի սանձն իրանց ձեռքում պահել ու տանել նրան օրինաւոր ճանապարհով: Ժողովուրդը ենթարկվում էր նրանց շնորհիւ այն խորը հաւատի, որով վերաբերվում էր նա իր գործիչներին: Օ'Կոննէլը թշնամի էր բռնութիւններին ու ապօրինի միջոցներին: Վիթխարի շարժում առաջ բերելով ու տանելով նրան օրինաւոր ճանապարհով, նա պարզ ցոյց էր տալիս, թէ ինչքան մեծ է ժողովրդի համակրութիւնը դէպի երկրի քաղաքական անկախութեան գործը և թէ վաղ ուշ նա կիրադործէ իր ցանկութիւնը: «Ոչ թէ կոպիտ բռնութեան, ալրստամբութեան ու արիւնահեղ խռովութիւնների միջոցով եմ մտադիր ես յաղթութիւն տանել, որն ինձ համար թանգ է աշխարհիս երեսին ամեն բանից ու իմ ամբողջ կեանքի նպատակն է, ո՛չ,

ո՛չ, ես կը տանեմ յաղթութիւնը օրինական, սահմանադրական միջոցներով, հասարակական կարծիքի ուժով, չորս միլլիօն իրլանդացի ազգասէրների դարաւոր ձգտումների միացեալ ուժերով», — ասում էր Օ'Կոննէլը:

Չը նայած այդ յայտարարութեան՝ վիթխարի միտինգները չէին կարող իրանց վրայ չը դարձնել կառավարութեան ուշադրութիւնը, որն իր համբերութիւնը կորցնելով, վճռեց ամեն միջոց գործ դնել ժողովրդական շարժումը կրկին անգամ խեղդելու: Կառավարութիւնը նրանով սկսեց իր նոր քաղաքականութիւնը, որ անպայման արգելեց զէնքի (գլխաւորապէս հրացանների) Իրլանդիա ներմուծելը: Գորանից յետոյ վճռեց արգելել միտինգները: Այդ միջոցում (1843 թ. վերջերում) մեծ միտինգ էր նշանակված Գուբլինի մօտ գտնվող Կլօնտարֆ աւանում: Երբ երկրի զանազան կողմերից ժողովրդի ստուար բազմութիւն ճանապարհ ընկաւ դէպի Կլօնտարֆ, շատերն արգէն ժողոված էին լիշեալ աւանում. երկրի կառավարչապետը Լօնդօնից ստացած հրահանգների հիման վրայ, միտինգի նախընթաց օրը հրատարակեց յատուկ հրովարտակ, որով անպայման արգելում էր Կլօնտարֆի միտինգը, սպառնալով հակառակ դէպքում, եթէ միտինգը կայանայ, զէնք գործ դնել: Օ'Կոննէլը սաստիկ շփոթվեց. նրա գործունէութեան ամբողջ սիստեմը վտանգի էր ենթարկվում, ուստի նա վճռեց այդ սիստեմն ազատել ու թող չը տալ արիւնահե-

ղութիւն, որով նրա համոզմամբ, Իրլանդիան ոչինչ ձեռք բերել չէր կարող, բացի անվերջ թշուառութիւններից: Դեռ միտինգը չը կայացած՝ նա դիմեց հաւաքված ամբոխին մի յայտարարութեամբ, որով համոզում էր ցրվել իրանց տները, խուսափել արիւնահեղ ընդհարումներից, որոնք նրա ասելով մեռցնել միայն կարող էին իրլանդական գործը: Ժողովուրդը լսեց իր առաջնորդին ու ցրվեց: Վտանգաւոր ընդմիջում անցաւ, բայց շնորհիւ այդ հանգամանքի Օ'Կոննէլի ժողովրդականութիւնը զգալի կերպով ընկաւ: Այդ անկման քիչ չը նպաստեց «Երիտասարդ Իրլանդիա» կուսակցութիւնը, որն սկսեց այդ դէպքից յետոյ սաստիկ դատապարտել Օ'Կոննէլի բռնած ընթացքն ու մինչև անգամ մեղադրել նրան դաւաճանութեան մէջ:

### VI.

Կառավարութիւնը, տեսնելով ինչ հեշտութեամբ խափանեց Կլոնտարֆի միտինգը, վճռեց բոլորովին արմատախիլ անել իրլանդական շարժումը: Այդ նպատակով նա Օ'Կոննէլին ու նրա մօտիկ աշխատակիցներին դատի ենթարկեց, նախապէս բանտարկելով նրանց: Կառավարութիւնը մեղադրում էր նրանց ներքին խռովութիւնների՝ մէջ, որով նրանք իբր թէ նպատակ ունէին Թագուհու հպատակների մէջ ատելութիւն առաջ բերել դէպի Նորին Մեծութեան կառավարութիւնը, Իրլանդիան

Անգլիայից բաժանելու նպատակով: Այդ հռչակաւոր դատը մի քանի ամիս շարունակվեց, իրան գրաւելով հասարակութեան ուշադրութիւնը: Կառավարութիւնը ամեն տեսակ միջոցներ ձեռք էր առել իր նպատակներին հասնելու համար. դատաւորների ցուցակը կազմելիս ոչ մի կաթօլիկ դատաւոր չէր նշանակել. ցուցակի մէջ մտել էին միայն բողոքականները, Օ'Կոննէլի քաղաքական թշնամիները: Կողմնապահութիւնը աչքի էր ընկնում ամեն քայլում, թէ վկաների և թէ մեղադրվողների հարց ու փորձի ժամանակ: Նախագահի վերջնական եզրակացութիւնը (резюме) դատախազի մեղադրական ճառից չէր զանազանվում: Այդ պայմանների մէջ մեղադրվողները պաշտպանվել, արդարացնել իրանց, ի հարկէ, չէին կարող: 1844 թ. փետրվարին դատը վերջացաւ. վճիռը յայտարարվեց միայն մալիսին, որով Օ'Կոննէլն ու միւս բոլոր մեղադրվողները ենթարկվում էին բանտարկութեան ու տուգանքի:

Կատաւորների այդ վճիռը մեծ իրարանցում առաջ բերեց թէ Իրլանդիայում և թէ Անգլիայում. այդ իրարանցումն արձագանք գտաւ նոյն իսկ պարլամենտում: Այն ժամանակուայ յայտնի իրաւաբաններից մինը, պարլամենտի անդամ Թովմաս Ուելլզ, վիճաբանութիւնների ժամանակ արտասանեց մի ճառ, որով բացարձակապէս յայտնեց, որ դատաւորների վճիռը զուրկ է ոչ միայն բարոյական, այլ և իրաւաբանական ուժից, քանի որ արդարագա-

տութեան ամենատարրական ձևերը գործավարութեան ժամանակ անխնայ ոտնահարվել են: Նոյն մտքով խօսեց և հռչակաւոր պատմաբան Մակօլէյը, որը, աւելի հեռու գնալով, քստմենելի անուանեց այն ձևերն ու միջոցները, որոնց դիմել էր կառավարութիւնը դատաւորների ցուցակը կազմելիս: Վիճաբանութիւնների մէջ խառնվեց ու ապագայ լորդ Բիկօնսֆիլդ Բիգրաւէլին, որն այն ժամանակ ղեռ ազատամիտների բանակին էր պատկանում: Ապագայ մինիստր-նախագահ, որն իր կառավարութեան ժամանակ պահպանողականների քաղաքականութիւնն էր բանեցնում Իրլանդիայի վերաբերմամբ, հետևեալ կերպով նկարագրեց իրլանդացիներին. «Այդ ժողովուրդը մի թշուառ, ողորմելի ժողովուրդ է: Նա բնակվում է մի կղզում, ուր տիրապետում է նրա համար օտար մի կրօն, ուր իշխում է հոգատէր արիստօկրատիան, որը մշտական բնակութիւն ունի Անգլիայի մայրաքաղաքում: Սովատանջ ժողովուրդ, իր տանը չապրող, բայց ժողովուրդի արիւնը ծծող արիստօկրատիա, օտար, բայց գերիշխող եկեղեցի, թույլ ու երկիրը քաօսական դրութեան մէջ պահող տեղական իշխանութիւն, ահա, — բացականչեց Բիգրաւէլին, — ահա ամբողջ իրլանդական հարցը: Ինչ կտանք մենք, — շարունակեց նա, — եթէ խօսեինք մեր իշխանութիւնից զուրս մի ուրիշ երկրի մասին, որ գտնվէր նոյն անելանելի դրութեան մէջ: Մենք կտանինք թշուառ երկրի միակ ելքն է լեզափոխութիւնը:

Բայց Իրլանդիայում լեզափոխութիւն չի կարող լինել: Ինչո՞ւ: Հէնց այն պատճառով, որ Իրլանդիան անխորտակելի կերպով կապված է մի ուրիշ, անհամեմատ զօրեղ երկրի հետ: Իսկ դուրս հետևանքներն ինչ են: Այն, որ Իրլանդիայի միութիւնը Անգլիայի հետ կատարեալ անէծք է թշուառ երկրի համար: Ուրեմն ինչ պարտաւորութիւններ ունի անգլիական կառավարութիւնը դէպի Իրլանդիան: Այն, որ իր հեռատես ու ողջամիտ քաղաքականութեամբ պիտի աշխատէր խաղաղ կերպով ու միջոցներով իրագործել Իրլանդիայում այն վերանորոգութիւններն ու փոփոխութիւնները, որոնք լեզափոխութիւնը կարող է ձեռք բերել ուժով: Ահա ամբողջ Իրլանդական հարցի փոքրիկ, բայց լրիւ պատկերը»:

Դատավարութեան միջոցին ժամանակաւոր ազատութիւն ստանալով, դատաւորների վճիռը յայտնելուն պէս, 1844 թ. մայիսին Օ'Կոննէլը իր ընկերներով կրկին բանտարկութեան ենթարկվեց: Բանտ նստելով, նրանք բողոքեցին դատաւորների անարդար վճուի դէմ, վճուաջինջ գանգատ յայտնելով պարլամենտի վերին պալատին, լորդերի ժողովին: Վերջինս գործը յայտնեց իր միջից ընտրած առանձին կօմիտեաի, որը բաղկացած էր հինգ անդամից: Նոյն 1844 թ. սեպտեմբերին այդ կօմիտեալը 3 ձայնով ընդդէմ 2-ի գոյութիւն ունեցող օրէնքներին հակառակ գտաւ դատաւորների ցուցակ կազմելն ու հետևաբար նրանց կայա-

ցած վճիւրը: Օ'Կոննէլն ու նրա հաւատարիմ զինուոր-  
ները ազատութիւն ստացան: Այդ դէպքի տպաւո-  
րութիւնը մեծ էր Անգլիայում, իսկ ևս առաւել  
Իրլանդիայում, ուր ժողովրդի խնդութիւնն ու  
ոգևորութիւնը չափ ու սահման չունէր: Օ'Կոն-  
նէլն իր ընկերներով կատարեալ յաղթական գնաց-  
քով դուրս եկաւ բանտից, իր յետևում ունենալով  
ամբոխի մի ահագին ծով, որն ամբողջ վերստ տա-  
րածութիւն ծածկել էր ստուար բազմութեամբ  
և որի թիւը հասնում էր 200000: Դա կատա-  
րեալ առասպելական ցոյց էր, բայց Իրլանդիայում  
շատ սովորական է ու բնական: Բոլորն էլ սպա-  
սում էին, որ ժողովրդական մեծ հռետորը,  
տրիբունը, կենդանութիւն կը տալ հսկայական  
շարժման, բայց այդ յոյսերը չիրագործվեցան: 69  
տարեկան Օ'Կոննէլը արդէն զրկվել էր իր վաղեմի  
աշխուժութիւնից. 1843 թ. անվերջ փոթորիկները,  
դատն ու բանտը իրանց բարոյական ու ֆիզիքա-  
կան տանջանքներով անջնջելի հետքեր թողեցին  
նրա կազմվածքի վրայ: Իր բազմաչարչար կեանքի  
վերջին մի քանի տարիները մեծ ազգասէրը խա-  
ղաղութեան մէջ անցկացրեց, երբեմն միայն երե-  
ւալով հասարակական ժողովներում: Դա վախճան-  
վեց 1847 թ. մայիսի 15-ին, 72 տարեկան հասա-  
կում և թաղվեց Դուբլինի գերեզմանատանը: Կոն-  
նէլը մեռաւ, բայց իր հետ գերեզման չը տար և  
Իրլանդիայի դատը: Նրա մահից յետոյ մի ուժա-  
մանակ մեղմացաւ շարժումը, բայց իրլանդական

ժողովրդի ձգտումները նոյնը մնացին և, ինչ-  
պէս կը տեսնենք, դարձան աղբիւր մի նոր, հե-  
րոսական շրջանի:

### VII.

Մենք ստացինք, որ 1843 թ. մեծ շարժման  
անաշոյղ վախճանը, Կլոնտարֆի դէպքը, զրկեց մա-  
սամբ Օ'Կոննէլին նրա մեծ ժողովրդականութիւնից  
ու իրլանդացիների մէջ փոխադարձ անբաւակա-  
նութիւններ առաջ բերաւ: Օ'Կոննէլից բաժան-  
վեց «Երիտասարդ Իրլանդիա» (Young Ireland)  
կոչվող կուսակցութիւնը, որի երիտասարդ անդամ-  
ները բացարձակ յեղափոխութիւն, մինչև անգամ  
արիւնհեղութիւն էին քարոզում: Օ'Կոննէլը,  
ինչպէս տեսանք, անպայման դէմ էր գործունէու-  
թեան այդ եղանակին, իր սիստեմը աւելի զօրա-  
ւոր գտնելով: Երիտասարդութիւնը այդ պատճա-  
ռով նրան թողեց. նա իր դրօշակի վրայ գրեց  
«Կռիւ դարաւոր թշնամու դէմ, արիւնահեղ կռիւ  
հարկ պահանջած դէպքում»: Օ'Կոննէլի մահից  
յետոյ «Երիտասարդ Իրլանդիա» կուսակցութիւնը  
փորձեց կանգնել նրա տեղը, անցնել ժողովրդա-  
կան շարժման գլուխը, իր յետևից մղել ժողովուր-  
դը, և այդ մասամբ նրան յաջողվեց: Երիտասար-  
դութիւնն սկսեց բացարձակ քարոզել, որ օրինական  
ճանապարհով, սահմանադրական միջոցներով Իր-  
լանդիան երբէք անկախութիւն չի ձեռք բերիլ,

միակ ելքն արիւնասէղ ապստամբութիւնն է։  
 Վրայ հասաւ 1848 թ., իր հետ բերելով  
 Ֆրանսիական երրորդ լեղափոխութիւնը։ Յուլի-  
 սեան կառավարութիւնը տապալվեց. լեղափոխու-  
 թիւնը արձագանք գտաւ արեւմտեան Եւրոպայի  
 համարեա՛ թէ բոլոր անկիւններում։ «Երիտասարդ  
 Իրլանդիան», ոգևորված նոր գաղափարներով ու  
 ձգտումներով, այդ ընդհանր յարմար համարեց իր  
 դիտաւորութիւններն իրագործելու համար, ինչպէս  
 այդ արեցին արեւմտեան Եւրոպայի այս ու այն-  
 տեղ գոյութիւն ունեցող լեղափոխական կուսակ-  
 ցութիւնները։ Ի միջի այլոց «Երիտասարդ Իրլան-  
 դիան» մեծ յոյսեր դրաւ 1848 թ. Ֆրանսիա-  
 կան հանրապետական կառավարութեան վրայ,  
 որի գլուխն էր կանգնած հռչակաւոր Լամարտի-  
 նը։ Երիտասարդ իրլանդացիները խորը համոզ-  
 ված էին, որ հանրապետական կառավարութիւնը  
 նրանց օգնութեան ձեռք կը մեկնի Անգլիայի լծից  
 ազատվելու համար. այդ նպատակով նրանք մի  
 պատգամաւորութիւն ուղարկեցին Պարիզ, Լամար-  
 տինի մօտ։ Բայց նրանք մոռացան, որ բանաս-  
 տեղծ պետական գործիչը ոչ միայն ազատութեան  
 վարդապետ էր, այլ և ճարպիկ դիպլոմատ։ Լա-  
 մարտինը, սիրալիր ընդունելով իրլանդացիներին,  
 պատասխանեց, որ Փրանսիայի համար խիստ թանգ  
 է սերտ բարեկամական կապեր պահպանել ամբողջ  
 բրիտանական պետութեան հետ, այլ ոչ թէ նրա  
 մի որ և իցէ մասի։ Հիասթափված իրլանդացիները

յետ դարձան իրանց «Կանաչ կզզին», իրանց յոյսն  
 իրանց բազուկների վրայ դնելով։

Անգլիական կառավարութիւնը մօտիկ ծանօ-  
 թանալով «Երիտասարդ Իրլանդիայի» իսկական  
 նպատակների հետ, վճռեց ամենաեռանդուն մի-  
 ջոցների դիմել այդ կուսակցութիւնը ոչնչացնելու  
 համար։ Նա անմիջապէս դիմեց պարլամենտին ու  
 պահանջեց արտաքոյ կարգի լիազօրութիւններ.  
 պարլամենտը կատարեց նրա այդ ցանկութիւնը։  
 Կառավարութիւնը իր բազմաթիւ բանտերի դռնե-  
 րը բաց արեց. դատի ենթարկեց «Երիտասարդ Իր-  
 լանդիայի» գլխաւոր առաջնորդներին ու անորոշ ժա-  
 մանակով նետեց նրանց բանտերի խորշերը։ Այսպիսի  
 միջոցներով կառավարութիւնը կարճ ժամանակում  
 խեղդեց բացարձակ շարժումը։ Երիտասարդութիւնը  
 անգոր գտնվեցաւ դիմադրել կառավարութեան, քա-  
 նի որ իր քամակում չունէր Օ'Կոննէլի լէգիօնները,  
 ժողովրդի մեծամասնութիւնը։ «Երիտասարդ Իրլան-  
 դիայի» շարժումը, — գրում է իրլանդացի գործիչ  
 Մակ-Կարտին, — երևեցաւ ու անհետացաւ, ինչպէս  
 թեթեւ քամի։ Նա իր ոտի տակ չունէր ամուր հող,  
 քանի որ ոչ մի աջակցութիւն չըստացաւ Իրլան-  
 դիայի գիւղական ամբոխի կողմից։ Նրա առաջ բե-  
 րած շարժումը մի մանկական խաղ էր, այլ ոչ թէ  
 ապստամբութիւն։ «Երիտասարդ Իրլանդիայի» 1848  
 թ. բացարձակ շարժումն Անգլիան խեղդեց և հէնց  
 դրանով ստիպեց իրլանդացիներին այլ միջոցների  
 դիմել։ Առաջ եկան բազմաթիւ գաղտնի ընկերու-

թիւններ, որոնք մինչ այդ ժամանակ համարեա գոյութիւն չունէին Իրլանդիայում: Օ' Կոննէլի գործունեութեան եղանակը, ինչպէս տեսանք, բոլորովին ուրիշ էր. նա գաղտնի ընկերութիւնները անօգուտ ու մինչև անգամ վնասակար էր համարում: Այն ինչ 1848 թ. Անգլիայի բռնած դիրքը բնական ծնունդ տուաւ գաղտնի ընկերութիւններին, որոնց ցանցով շուտով ծածկվեց ամբողջ երկիրը: Երկար տարիներ այդ խուլ շարժումը գոյութեան ոչ մի արտաքին նշան չը ցոյց տուեց. նա գտնվում էր նախապատրաստական շրջանի մէջ: Գաղտնի թերթերը, գրիչները և տպարանները՝ եռանդով գործում էին երկրի խորքերում: Թափառական քարոզիչները, գիշեր ցերեկ շրջելով երկրի զանազան մասերը, իրանց վարդապետութիւնները տարածում էին ամբոխի բոլոր խաւերում: Այդ պրօպագանդիստները կոչվում էին «ֆէնի»: Անձնանուէր ֆէնիները բանտերն էին նետվում, կախաղան էին բարձրանում, բայց չընայած դորան, նրանց թիւը գնալով մեծանում էր: Բացի գաղտնի հրահանգներից, բրօշուրներից ու թերթիկներից՝ յամենայն դէպս ֆէնին իր մօտ պահում էր ատրճանակ, վառօդ, զնդակ, դաշոյն, թույն. երբեմն պէտք էին գալիս դրանք: Անգլիայում, ժողովրդի խաւերում, առասպելներ էին պատմում ֆէնիների մասին: Անգլիացի մայրը իր չարածճի երեխային զսպելիս երբեմն իրլանդացի ֆէնիի անուան էր լիշում: «Տես, սիրելիս, գալիս է

զարհուրելի իրլանդացի ֆէնին. նա դաշոյն, թույն ու վառօդ ունի իր մօտ...»

Գաղտնի ընկերութիւնները, անցնելով իրանց նախապատրաստական շրջանը, առաջ բերին նոր հսկայական շարժում, որը կոչվեցաւ «ֆէնիանիզմ»: Այդ շարժումը բացարձակ արիւնահեղ տպստամբութիւն էր, որի գլուխն անցան աքսորից ու բանտերից փախած «Երիտասարդ Իրլանդիայի» նախկին անդամները: Փախստականները, իբրև փորձված զինւորներ, վճռեցին իրենց ձեռքն առնել տպստամբութեան դրօշակը: Եարժումը իր գագաթնակէտին հասաւ 1867 թ.: Ֆէնիները այս անգամ էլ, ինչպէս նրանց նախորդները 1848 թ., վճռեցին օտարի օգնութեան դիմել: Նրանք դիմեցին Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներին: Երկրի կառավարութիւնը, ի հարկէ, բաւականացաւ էժանագին խոստումներով, բայց այնտեղ սալրող բազմաթիւ իրլանդացի գաղթականները օգնութեան հասան դրամով, զէնքով, իսկ շատերն անձամբ եկան ու մտան ֆէնիների դրօշակի տակ: Ֆէնիանիզմը խոր արմատներ ձգեց երկրի բոլոր անկիւններում: Ամերիկայի իրլանդացիների համակրութիւնը եւ փափազը՝ իրենց ծննդավայրը «Կանաչ կղզին» ազատված տեսնել, կրկնապատկեցին ֆէնիների ոյժերը, ու սրանք աւելի համարձակ սկսեցին գործել: Անգլիայում ընդհանուր տագնապը գնալով զօրեղանում էր. կառավարութիւնը լարեց իր բոլոր ոյժերը: Ֆէնիները մեծ պատրաստութիւններ էին տեսել, երկիրը

բաժանել էին զինուորական շրջանների և իւրաքանչիւրը յանձնել էին առանձին հրամանատարի, Ֆէնիական գեներալի, ժողովրդին գէնք էին բաժանել ու գործելու հարկաւոր հրահանգները վաղօրօք տարածել: Իւրաքանչիւրի դերը որոշված էր. ամեն ոք սպասում էր ընկնել քաջի պէս, ծածկել իր ոսկորներով հայրենի հողը: 1867 թ. մարտին ընդհանուր ապստամբութիւնը պիտի հրդեհէ պէս բռնէր ամբողջ Իրլանդիան: Ապստամբութիւնն սկսվեց, բայց ոչ մի անգամից և ոչ երկրի բոլոր անկիւններում: Կառավարութիւնը, որի ղեկը գլխաւորում էր այն ժամանակ Իիզրայէլի ձեռքում, զօրքով ծածկեց ամբողջ երկիրը: Բրիտանական զրահակիր նաւերը շրջապատեցին «Կանաչ կղզին» իրենց հրէշաւոր թնդանօթների բերաններն ուղղելով ծովեզերեայ բնակավայրերին: Սկսվեց մի անհասարկ, օրհասական կռիւ: Ֆէնիական գեներալներից շատերը, չը նայած իրենց անձնանուէր քաջութեան, ընկան, շատերը գերի տարվեցան ու մահուան դատապարտվեցան: Ֆէնիական անկանոն զնդերը, վատ զինուած ամբոխը, ցրվեցան. շատերը մեռան քաջի ու հերոսի մահով, շատերը համարձակ կախազան բարձրացան, շատերը բանտ նետվեցան ու տաժանակիր աշխատանքների ենթարկվեցան: Ամբողջ Իրլանդիան ծածկվեց զինուորական դատարանների ցանցով, որոնք Իիզրայէլից ստացած հրահանգների հիման վրայ գործում էին առանց զթուլթեան որ և է նշույլի: Կառավարութիւնը այդպիսով ջարդեց,

չախջախեց Ֆէնիներին, բայց նրանց յարուցած շարժումն առանց բարի հետևանքների չը մնաց Իրլանդիայի համար:

### VIII.

Ֆէնիների ապստամբութիւնը պարզ ապացուցեց, որ Անգլիայի բռնած ընթացքը դէպի Իրլանդիան վտանգաւոր ու կորստաբեր է նոյն իսկ Անգլիայի համար: Վաղ—ուշ ապստամբութիւն կրկին կարող էր ծագել աւելի ահռելի ուժով. պետութիւնը գնալով կը քայքայվէր այդ ներքին խռովութիւններից: Անգլիական պարլամենտի մի խոշոր մասը, ազատամիտ կուսակցութիւնը, որի ղեկը 60-ական թւականների վերջերում նոր էր անցել Գլադստօնի ձեռքը, սկսեց բացարձակ բողոքել Իիզրայէլի կառավարութեան ձեռք առած անողորմ խիստ միջոցների դէմ Իրլանդիայի վերաբերմամբ, պնդելով, որ Իիզրայէլի սոսկալի սիստեմը անգոր է գսպել իրլանդացիներին. գէնքի ու վառօդի ուժով ոչինչ չի կարելի շինել. Իրլանդիան խաղաղացնելու միակ միջոցը վերանորոգութիւններն են, որոնցից կառավարութիւնը չը պիտի խոյս տայ, ինչպէս այդ խոստովանում էր նոյն Իիզրայէլին իր ազատամիտ եղած ժամանակ, 40-ական թւականների վերջերին: 1868 թ. մարտին, երբ Ֆէնիների ապստամբութիւնից հազիւ մի տարի էր անցել, Գլադստօնը, իբրև գլուխ ամբողջ ազատամիտ բա-

նակի, արիաբար յայտնեց պարլամենտում, որ հասել է ժամանակը, երբ Անգլիան պիտի խղճմտանքով վերաբերվի դէպի Իրլանդիան: Այն ժամանակ, ինչպէս ասացինք, կառավարութեան ղեկը գտնուվում էր պահպանողական Գիզրայէլի ձեռքում, իսկ Գլազստօնը ազատամիտ ընդդիմադրական կուսակցութեան պարագլուխն էր: «Եթէ մենք զգուշ մարդիկ ենք, — ասաց Գլազստօնն իր ճառում, — պիտի ձեռք առնենք միջոցներ անհնարին դարձնելու վտանգաւոր ապագան: Եթէ մենք ազնիւ մարդիկ ենք, պիտի սրբենք այն սև բիծը, որն ամբողջ լուսաւոր մարդկութեան առաջ դարերի ընթացքում ստուեր է ձգել Անգլիայի բարի անուան վրայ շնորհիւ նրա անբարեխիղճ յարաբերութիւնների դէպի Իրլանդիան: Եթէ մենք մարդասէր ենք, պիտի ականջ դնենք այն հառաչանքներին, որոնք լսւում են դժբախտ երկրից, որի ողորմելի դրութիւնը ստիպում է ազգաբնակչութեան պանդխտութեան զիմել: Եթէ մենք բարեխիղճ մարդիկ ենք, պիտի ձեռք մեկնենք բազմաչարչար Իրլանդիային յանուն ճշմարտութեան ու արդարադատութեան, չիշելով, որ երբ գործը պարզված է ու հասել է արդարադատութեան ժամը, իւրաքանչիւր յետաձգումն հաւասար է արդարադատութեան մերժման, ուրիշ կերպ ասած, անբարեխիղճութեան»:

1868 թ. վերջին Գիզրայէլի պահպանողական կառավարութիւնն ընկաւ: Գլազստօնն առաջին անգամ նոր կառավարութեան գլուխն անցաւ և կող-

մակերպեց իր կողմնակիցներից ազատամիտ միաստրութիւն: Գլազստօնի կառավարութեան գլուխ անցնելովը Իրլանդիայի համար սկսվեց առաջադիմութեան նոր շրջան, վերանորոգութիւնների, ըէֆօրմների շրջան: Իր ծրագրի մէջ Գլազստօնը մտցրեց երկու խոշոր օրինագծեր Իրլանդիային վերաբերեալ. մինով նա նպատակ ունէր ոչնչացնել Իրլանդիայում բողոքական պետական եկեղեցու գերիշխանութիւնը, միւսը վերաբերում էր հողային բարդ ու մութ հարցերին: Առաջին օրինագիծը 1869 թ. նստաշրջանին յաջողութեամբ անցաւ պարլամենտում, չընայած պահպանողականների ու լօրդերի բուռն ընդդիմադրութեան: Նոր օրէնքը վերջնականապէս վճռեց կրօնական հարցն Իրլանդիայում, որն առաջ անվերջ խռովութիւնների պատճառ էր դառնում: Շնորհիւ այդ օրէնքի Իրլանդիայում փոքրաթիւ հեռուողներ ունեցող բողոքական եկեղեցին զրկվեց այդ երկրում պետական եկեղեցու կոչումից, անհետացան եկեղեցական հարկերը, դատարանները, կալուածներն ու եկամուտները: Եկեղեցական հարկերի ծանրութիւնը, թէև ըստ նախկին օրէնքի պիտի կրէր բողոքական հողատէր արիստոկրատիան, բայց de facto ընկած էր կաթօլիկ ազգաբնակչութեան շինքին: 1869 թ. օրէնքը վերցրեց նրա շինքից այդ ծանրութիւնը: Բողոքական եկեղեցու կայքերը անցան պետութեան ձեռքը. գանձարանը մուտք ունեցաւ 16 միլիօն ֆուլնտ ստերլինգ աւելորդ գումար (մօտ 160

միլ. րուբլի, որի կէսը Քլադստօնի կառավարութիւնը վճռեց, պարլամենտի համաձայնութեամբ, գործածել եկեղեցական վերանորոգութիւնը իրագործելու համար, իսկ միւս կէսը գործ դնել Իրլանդիայում դպրոցներ, հիւանդանոցներ, որբանոցներ, անկեղանոցներ ու այլ օգտաւէտ հիմնարկութիւններ կառուցանելու ու հաստատելու համար:

1870 թ. Քլադստօնը անցկացրեց պարլամենտում իր առաջին օրինագիծը հողային հարցերին վերաբերեալ, որը, չընայած լօրգերի ընդդիմադրութեան, այնուամենայնիւ օրէնքի ոյժ ստացաւ: Այդ օրէնքի գլխաւոր նպատակն էր իրլանդացի հասարակ երկրագործին, ֆէրմէրին, զնել աւելի ապահով դրութեան մէջ և փոքրիշատէ ազատել նրան հողատիրոջ, լէնդ-լօրդի, անզուսպ կամայականութիւնից: Այդ դիտմամբ հողատէրերի նախկին անսահման իրաւունքները միքանի փոփոխութիւնների ենթարկվեցան, ինչպէս՝ նոր օրէնքի զօրութեամբ հողատէրը պարտաւորվում էր նիւթական լիովին բաւարարութիւն տալ երկրագործին այն դէպքում, եթէ նա երկրագործին զբրկում է հողից առանց յարգելի պատճառների, կամայականութեամբ, չընայած նրան, որ երկրագործը կանոնաւոր կերպով հատուցանում է հողատիրոջ հողային տուրքը, ըէնտան, և բարեխղճութեամբ կատարում է իր բոլոր միւս պարտաւորութիւնները. բացի այդ հողատէրերը պարտաւորվում էին նիւթական վարձատրութիւն տալ երկրագործներին

այն դէպքում, եթէ վերջիններս կապալով վերցրած հողերի վրայ որևէ ծախսեր էին անում, կամ նրանց մշակելու ձևերը կատարելագործում ու օգտաւէտ նորամուծութիւններ մտցնում երկրագործութեան մէջ: 1870 թ. օրէնքի մէջ Քլադստօնի աշխատակից Բրայտի առաջարկութեամբ մտան միքանի յօդուածներ, որոնք նպատակ ունէին իրլանդացի գիւղացիների համար մատչելի դարձնել հող գնելն լէնդ-լօրդերից: Այդ յօդուածները պարտաւորեցնում էին պետական գանձարանը կրեդիտ բաց թողնել իրլանդացի գիւղացիներին այն դէպքում, եթէ նրանք ցանկութիւն կյայտեն հող գնելու. միայն կրեդիտը պիտի լինէր գնելի հողի արժողութեան երկու երրորդականից ոչ աւելի: Երբ 1870 թ. հողային օրէնքը սկսվեց իրագործվել, երևան եկան շատ թերութիւններ, որոնք պարզ ապացոյց էին, որ Քլադստօնի օրէնքը դեռ շատ հեռու է իրլանդական հողային հարցը վճռելուց: Բայց այսպիսի բարդ ու մութ հարցը, ինչպիսին Իրլանդիայի հողային հարցն է, անհնարին էր մի օրէնքով վճռել: Քլադստօնի օրէնքն այնուամենայնիւ մեծ առաջադիմութիւն էր հողային հարցի պատմութեան մէջ. այդ օրէնքը անգլիական հողային օրէնսգրութեան մէջ մտցրեց նոր սկզբունքներ, դորանով հասարակ երկրագործը, ֆէրմէրը, ստացաւ յայտնի իրաւունքներ, այն ինչ մինչև այդ ժամանակ նա իրաւագուրկ մի արարած էր հողատիրոջ առաջ, սեփականատիրոջ մի տեսակ ստրուկ էր:

Գլադստոնի օրէնքներն ու նրա մտցրած րէ-  
ֆօրմները մեծ ազդեցութիւն ունեցան Իրլանդիա-  
յի առաջադիմութեան վրայ: Ֆէնիկների ապստամ-  
բութեան ժամանակ անողորմ հալածված ժողո-  
վուրդը, բազմաթիւ անբուժելի վէրքեր ստացած  
Իրլանդիայի ամբոխը, կրկին սկսեց գլուխ բարձրա-  
ցնել, կրկին սկսեց մտածել բախտաւոր ապագայի  
մասին: Ֆէնիկներ չէին երևում. նրանք իրանց սիս-  
տեմի հետ մի առ ժամանակ անհետացան: Արիւ-  
նահեղութիւններն ու Գիզրայէլի կառավարութեան  
սոսկալի հալածանքներն այնպէս ազդել էին ժողո-  
վրդի վրայ, որ նա իսկույն Լեթ Ֆէնիկների լեռե-  
ւից չէր գնալ, եթէ վերջիններս այդ միջոցին կըր-  
կին երևան գային:

Գլադստոնի վերանորոգութիւններն առաջ բե-  
րին Իրլանդիայում նոր ազգային մեծ շարժում,  
որի ղեկավարներն ընդունեցին Օ'Կոննէլի քաղա-  
քականութիւնը ու նրա գործունէութեան եղանա-  
կը, որն էր՝ ձգտել Իրլանդիայի քաղաքական ան-  
կախութեան. սահմանադրական ճանապարհով, օ-  
րինաւոր ազիտացիայի միջոցով: Այդ նոր շարժու-  
մը, որը կոչվեցաւ Հոմըրուլ (Home-Rule Mou-  
vement), ծնունդ ստացաւ 1870 թ. և շարունակ-  
վում է մինչև այժմ: Վաղուշ այդ մեծ շարժ-  
ման հետևանքն է լինելու Իրլանդիայի քաղաքա-  
կան անկախութիւնը, նրա ժողովրդի դարաւոր  
ձգտումների իրագործումը: Այդ վիթխարի շարժ-  
ման ընթացքում ամենանշանաւոր դերը իրլանդա-

յի գործիչներից վիճակվեց Պարնէլլին, Իրլանդիա-  
յի այդ «անթագակիր թագաւորին»:

1870 թուի գարնանը Իրլանդիայի գլխաւոր  
կենտրոններում կայացան մի շարք նախապատրաս-  
տական ժողովներ, որոնք նպատակ ունէին որոշել  
ու ձևակերպել նոր շարժման էական պահանջները:  
Այդ ժողովներից առաջինը կայացաւ Բուլբլին մայ-  
րաքաղաքի Bilton Hotel ժողովրդական դահլի-  
ճում 1870 թ. մայիսի 19-ին, ուր այդ օրը հա-  
ւաքվել էին Բուլբլինի քաղաքացիներից մօտ 65  
հոգի «Իրլանդիայի ներկայ դրութեան մասին խոր-  
հրդակցելու համար»: Այդ փոքրիկ ժողովը կազ-  
մըված էր զանազան դասակարգերի, զանազան  
քաղաքական ու կրօնական համոզմունքների տէր  
մարդկանցից. բայց չընայած այդ հանգամանքին,  
վիճաբանութիւնները պարզեցին, որ բոլոր ժողո-  
վականները ոգևորված են մի գաղափարով՝ տես-  
նել հայրենիքի ապագայ երջանկութիւնը և այդ  
մեծ նպատակին դիմել ձեռք ձեռքի տուած, գոր-  
ծել անպայման համերաշխութեամբ, ընդհանուր  
թշնամու գիմաց մոռանալ անձնական ու կուսակ-  
ցական երկպառակութիւնները, միանալ ու կազմել  
մի հաւաքական զօրեղ ոյժ, դաշնակցութիւն: Երբ  
լայտնած զանազան կարծիքները բազմակողմանի  
քննադատութեան ենթարկվեցան, ժողովականնե-  
րից մինը առաջարկեց ժողովին ընդունել հետևեալ  
որոշումը. «Ներկայ ժողովը կարծում է, որ Իրլան-  
դիայի բազմաթիւ վէրքերի իսկական բուժիչ մի-

ըոցը Իրլանդիայի համար սեպհական պարլամենտ հիմնելն է երկրի ներքին գործերը վարելու բոլոր իրաւունքներով ու լիազօրութիւններով: Այդ որոշումն ընդունվեց միաձայն: Այդ հետեւանքն առաջ բերեց մեծ ոգևորութիւն:

Ժողովը վճռեց իր միջից ընտրել մի կօմիտէա ընդունած որոշումի հիմքերը պարզ և մանրամասնօրէն ձևակերպելու համար: Կօմիտէան սկսեց մեծ եռանդով գործել. հրաւէրներ ուղարկեց երկրի զանազան անկիւնները նոր ընկերութիւններ կազմակերպելու համար: Շնորհիւ այդ հրաւէրների քիչ ժամանակից յետոյ գոյութիւն ստացաւ մի նոր մեծ ընկերութիւն «Իրլանդիայի ինքնավարութեան միութիւն» անունով: Նոր միութեան հիմնական պահանջները ձևակերպված էին հետևեալ կերպով. 1) Ձեռք բերել Իրլանդիայի համար իր ներքին գործերը վարելու իրաւունք՝ առանձին պարլամենտի միջոցով, 2) Պետական (անգլիական) պարլամենտից պահանջել յատկացնել իրլանդական պարլամենտին-երկրի ներքին կառավարութեան օրէնքներ հրատարակելու իրաւունք, այդ կառավարութեան բոլոր ճիւղերն իր իրաւասութեան տակն ունենալով, 3) Բացի այդ իրլանդական պարլամենտին իրաւունքներ յատկացնել անկախ վարվելու երկրի ֆինանսների հետ. որոշել տարեկան մուտքը, ծախսը, որոշել հարկերի չափն ու քանակութիւնը, նոր հարկեր սահմանել, կամ եղածը ոչնչացնել, հաւաքել հարկերն առանց ընդ-

հանուր պետական բարձր ֆինանսական վարչութեան միջամտութեան, ծախսեր անել առանց այդ վարչութեան հաճութիւնը հարցնելու, այն պայմանով միայն, որ Իրլանդիան էլ իր սեպհական միջոցներից մասնակից լինի ընդհանուր պետական ծախսերին. 4) Թողնել ընդհանուր պետական պարլամենտին այն բոլոր իրաւունքները, որոնք վերաբերում են ընդհանուր պետական թագի ու կառավարութեան շահերին, հետու գաղութների օրէնսդրութեան, օտար պետութիւնների հետ գոյութիւն ունեցող յարաբերութիւններին, առհասարակ անձեռնմխելի թողնել ընդհանուր պետական պարլամենտի այն իրաւունքները, որոնք վերաբերում են Միացեալ Պետութիւնը, Անգլիան և Իրլանդիան, պաշտպանելու և օտար արշաւանքներից ապահովելու գործին և 5) Իրագործել ընդհանուր պետութեան այդ կազմակերպութիւնը առանց թագի շահերին վնասելու և ընդհանուր սահմանադրութեան էական հիմքերը խախտելու: Կարճ ասած, իրլանդացիները կտրական կերպով պահանջել սկսան, որ Իրլանդիան լինի հպատակ երկիր ոչ թէ անգլիական պարլամենտի ու կառավարութեան, այլ անգլիական թագի, որի բարձր հովանաւորութեան տակ երկու երկիրները, Անգլիան և Իրլանդիան, պիտի լինին երկու դաշնակից պետութիւններ, իրարից անկախ երկիրներ՝ իւրաքանչիւրն իր սեպհական պարլամենտով ու ներքին ինքնուրոյն վարչութեամբ: Բրիտանական պարլա-

մենտը մի քանի դէպքերում գերիշխող կարող է լինել, բայց այդ գերիշխանութիւնը երբէք չըպիտի վերաբերվի Իրլանդիայի ներքին գործերին: Այսպէս ձեւակերպելով իրանց հիմնական պահանջները, «Իրլանդիայի ինքնավարութեան միութիւնը» հրաւէր կարգաց բոլոր իրլանդացիներին միանալ և բոլոր օրինաւոր ու սահմանադրական միջոցներով դէպի սուրբ գործը գրաւել Իրլանդիայի ու Բրիտանիայի հասարակաց կարծիքը, ընդհանուր շարժման հոսանքի առաջը մղել ամեն դասակարգի ու ամեն համոզմունքի տէր մարդկանց՝ իրագործելու այն ձգտումները, որոնց համար իրլանդացիներից շատերը կեանք անգամ չեն խնայել:

### IX.

Իրերն այդ դրութեան մէջ էին, երբ ասպարէզ դուրս եկաւ Պարնէլլը, որին նրա քաղաքական գործունէութեան ընթացքում վիճակվեց կատարել այնքան փառաւոր գործեր:

Չարլզ Ստիւարտ Պարնէլլը ծնվել է 1846 թ. Աւօնդելում, որը գտնվում է Վիկտուր կոմսութեան մէջ: Նրա նախահայրերը սկզբում բնակվելիս են եղել Անգլիայում, որտեղից 17-րորդ դարում տեղափոխվելով Իրլանդիա, մշտական բնակութիւն են հաստատել այդ երկրում, ահագին կալուածներ ձեռք բերելով: Նրանցից մինը, Ջօն Պարնէլլը 18-րորդ դարու երկրորդ կիսում իրլանդական պարլամենտի ստորին պալատում պատգա-

մաւորի տեղ ձեռք բերեց. իսկ 1787 թ. նրա որդի Հէնրի Պարնէլլը կարողացաւ մինչև անգամ Իրլանդիայի կառավարիչների շարքը մտնել, ստանալով Ֆինանսների մինիստրի պաշտօն: 1800 թ. հայր ու որդի Պարնէլլները բուռն ընդդիմադրութիւն ցույց տուին միութեան դաշնագրի կապելու, Իրլանդիայի պարլամենտի ոչնչացման, բայց նրանց ձայնը, ի հարկէ, մնաց ձայն բարբառոյ յանապատի:

Երբ միութեան դաշնագիրն իրագործվեց, Ջօն և Հէնրի Պարնէլլները, չընայած իրանց բողոքին, իբրև Իրլանդիայի պատգամաւորներ, մտան Անգլիական պարլամենտը: Անգլիայում Հէնրի Պարնէլլը շուտով գրաւեց իր վրայ բարձր դասակարգի ուշադրութիւնը, որի շնորհով 1832 թ. լորդ Գրէյի մինիստրութեան մէջ ստացաւ զինւորական մինիստրի պաշտօնը: Ընտրած շաւղով առաջ գնալով, նա 1841 թ. լորդութիւն ստացաւ բարօն Կօնգլէտօն տիտղոսով: Այդ լորդ Կօնգլէտօնը ունէր մի եղբորորդի, Ջօն Հէնրի Պարնէլլ, որն իր հօրեղբօր բարձր դիրքի շնորհիւ կարողացաւ ամուսնանալ ամերիկացի ծովապետ Չարլզ Ստիւարտի աղջկայ հետ: Այդ ամուսնութիւնից ծնվեց «Իրլանդիայի անթագակիր թագաւորը», Չարլզ Ստիւարտ Պարնէլլը:

Պարնէլլն իր թէ սկզբնական, թէ միջնակարգ ու թէ բարձրագոյն ուսումն ստացաւ Անգլիայում: 60-ական թւականների վերջերում աւարտելով Կէմբրիջի համալսարանը, նա գնաց

ճանապարհորդելու Հիւսիսային Ամերիկա, որտեղից դարձաւ հայրենիք 1871 թ., ճիշտ այն ժամանակ, երբ Իրլանդիայում նշմարվել սկսան նոր ժողովրդական շարժման նշանները: Գառնալով հայրենիք, նա բնակութիւն հաստատեց իր ծնընդավայրում, Աւօնդելում, գոյութիւն ունեցող ագգային շարժումից իրան հեռու պահելով: Այդ շարժումն սկզբում կարծէք նրա համար բնաւ գոյութիւն չունէր. իր կալուածներում այդ երիտասարդ լէնդ-լօրդը մի քանի տարի շարունակ, մինչև 1874 թ., առանձնացել էր միւս բոլոր աշխարհից. մեծ հետաքրքրութեամբ պարապում էր գիւղատնտեսութեամբ, ազատ ժամերն սրսորդական զուարճութիւնների նուիրելով: Գեռ ուսանողութեան ժամանակ Պարնէլլը մեծ ձգտում ունէր դէպի մեքենայագործութիւնը, երկրաչափութիւնն ու բրնական գիտութիւնները, որի ճիւղերից նրա ուշադրութիւնն ամենից առաւել գրաւում էին քիմիան ու հանքաբանութիւնը. իր կալուածներում նա շինեց մի փայտագործարան և մի ուրիշ գործարան, որտեղ պատրաստում էին խոզանակներ: Որսորդութեան ժամանակ նա աւելի զբաղւում էր գանազան հանքերից ժողովածուներ կազմելով, քան որսով, որն իսկապէս մի պատճառ էր դէպի Վիկտուրի դաշտերն ու հովիտները հեռանալու և այնտեղ շրջելու համար: Իր Ֆէրմէրների հետ Պարնէլլը վարվում էր մեծ բարեխղճութեամբ ու ամեն կերպ աշխատում էր բաւականութիւն տալ նրանց կարիքներին ու թե-

թեւացնել նրանց տնտեսական դրութիւնը, որով քիչ անբաւականութիւն չէր պատճառում իր հարեան կալուածատէրերին, որոնց կարծիքով Պարնէլլն իր մարդասէր վարմունքով «երես էր տալիս» Ֆէրմէրներին, անբարոյականացնում ու փչացրնում էր նրանց, քանի որ լէնդ-լօրդի կարծիքով Ֆէրմէրի դրութիւնը անասունի դրութիւնից քիչ բանով, գուցէ և ոչնչով, չըպիտի գանազանուի:

X.

Ինչպէս վերեն ասացինք, Պարնէլլն սկզբում ուշ չէր դարձնում իր հայրենիքի հասարակական գործերի վրայ: 1872 թ. սկզբներից այդ գործերն սկսան քիչ-քիչ իրանց գրաւել երիտասարդ լէնդ-լօրդի ուշադրութիւնը. գնալով, հետաքրքրութիւնը շարժվում էր նրա մէջ, թէև նա շարունակում էր նախկին եռանդով զբաղվել իր տնտեսական գործերով:

Նրան շատ դուր եկաւ 1872 թ. Գլադստօնի մի նոր վերանորոգութիւնը Իրլանդիայում, յայտնի Ballot Act օրէնքը, որով ամբողջ Իրլանդիային շնորհվեց գաղտնի քուէարկութեան իրաւունք, որն առհասարակ անկախ ու ինքնուրոյն պայմանների մէջ է դնում ընտրողներին: «Ինձ թւում էր, — ասում էր Պարնէլլը վերջին ժամանակները, որ այդ օրէնքի միջոցով Իրլանդիայի քաղաքական գրու-

Թիւնը կարող է մեծ փոփոխութեան ենթարկվել: Այդ օրէնքի գործադրութիւնը, իմ կարծիքով, հնարաւոր էր դարձնում յայտնի չափով անկախ իրլանդական կուսակցութեան կազմակերպութիւնը, կուսակցութեան, որը կարող լինի պարզ և ազդու կերպով արտայայտել ժողովրդի մեծամասնութեան հայեացքները, կարող լինի համալքների ժողովում գործել առանց ենթարկվելու քաղաքական երկու մեծ կուսակցութիւնների ազդեցութեան, իր անկախութեան դրօշակը բարձր պահելով, կարող լինի գործել, առանց անգլիական մի որևէ կուսակցութեան հետ դաշն կապելու, հարուածներ հասցընել թէ պահպանողականներին և թէ ազատամիտներին, գործունէութեան այդ եղանակին հետևել մինչև Իրլանդիայի օրինաւոր պահանջների իրագործման օրը»:

1874 թ. Անգլիայում ու Իրլանդիայում կայացան պարլամենտական ընդհանուր ընտրութիւններ, որոնք լաւ հետևանքներ ունեցան համրուլականների, ազգային ազատութեան կողմնակիցների համար: 1869 թ. ընդհանուր ընտրութիւններից յետոյ Իրլանդիան տուեց 10 համրուլական պատգամաւոր, 55 ազատամիտ և 38 պահպանողական, այն ինչ 1874 թ. ընտրութիւնները 60 համրուլական, 12 ազատամիտ և 31 պահպանողական պատգամաւոր. այդպիսով համրուլական շարժումն սկսեց առաջ գնալ. այդ բոլորի համար էլ ակներև էր:

1874 թ. յաջող ընտրութիւններից յետոյ Պարնէլլը վճռեց դուրս գալ քաղաքական գործունէութեան ասպարէզ, նախ գործերի դրութիւնը լաւ ուսումնասիրելով: Այդ ժամանակ նա 29 տարեկան հազիւ կար: Դուբլինի պատգամաւորներից մինը, զնդապետ Տէլլօր, Դիգրայէլի նոր կառավարութեան մէջ մինիստրի պաշտօն ստանալով, ըստ օրէնքի պիտի ենթարկվէր վերընտրութեան, այսինքն պիտի թողնէր իր պատգամաւորական լիազօրութիւններն ու նորից ընտրվէր իր ընտրողական շրջանում: Տէլլօրը պահպանողական կուսակցութեան էր պատկանում. Պարնէլլն օգտվեց դէպքից ու վճռեց իր թեկնածութիւնն առաջարկել ընտրողներին իբրև համրուլական կուսակցութեան ներկայացուցիչ: Այն ժամանակ նա մի բոլորովին անծանօթ անձնաւորութիւն էր առանց որոշ ծրագրի և փոքր էր շատ է նշմարելի անցեալի: Շատերը կասկածանքով էին նայում նրա վրայ, կարծելով, թէ բողոքական հարուստ երիտասարդ լէնդ-լորդը պատգամաւորական կոչումն աշխատում է ձեռք բերել ոչ թէ իր ժողովրդին որևէ ծառայութիւն մատուցանելու համար, այլ իր համար փայլուն անձնական կարիեր ստեղծելու զիտաւորութիւնով: Այդ պատճառով «Համրուլական միութիւն» (այդ ընկերութիւնը գոյութիւն ստացաւ 1873 թ. ու բռնեց 1870 թ. կազմակերպուած «Իրլանդական ինքնավարութեան միութիւն» ընկերութեան տեղը) ընկերութեան կենտրոնական կոմիտէտը վճռեց ա-

ւելի մօտիկ ծանօթանալ այդ նոր մարդու հետ, նախ քան նրա թեկնածութիւնն առաջարկելը: Կօմիտէտի հրաւերի համաձայն Պարնէլլն այցելեց նրա մասնաւոր ժողովներից մինը, որտեղ իսկոյն կարողացաւ համակրութիւն ձեռք բերել: Կօմիտէտի գլխաւոր անդամներից երկուսը, Զօն Մարտին՝ 1848 թ. շարժման առաջնորդներից մինը, և Արտուր Սեօլլիվան առաջարկեցին կօմիտէտին ընդունել Պարնէլլի թեկնածութիւնը:

Կօմիտէտն ընդունեց և յանձնարարեց Սեօլլիվանին պաշտօնապէս առաջարկել Պարնէլլի թեկնածութիւնը Բուրբլինի «Ռօտօնդա» դահլիճում կայանալի միտինգում: Նշանակած օրը Պարնէլլն առաջին անգամ գնաց հասարակական ժողով, իբրև հռետոր, այլ ոչ թէ ունկնդիր: Նա շատ անհանգիստ էր երևում: Պատրաստած ճառը մի քանի անգամ սերտել էր և սրտի տենդային բաբախումով սպասում էր այն ըուպէին, երբ պիտի սկսեր խօսել: Հասաւ այդ ըուպէին: Պարնէլլն առաջին անգամ սկսեց խօսել ժողովրդի հետ երես առ երես, բայց անաջող: Այն մարդը, որը մի տասնեակ տարուց յետոյ պիտի վճռէր Իրլանդիայի ու նրա հետ ամբողջ Միացեալ Պետութեան ապագան, ունեցաւ մի շատ համեստ դերիւտ: Ահա ինչպէս է նկարագրում Պարնէլլի առաջին ճառը Սեօլլիվանը. «Երբ ես առաջարկեցի նրա թեկնածութիւնը, հասարակութիւնը համակրութեան ցոյցեր արեց: Խրախուսված զբանով, Պարնէլլն ամբիօն բարձրացաւ

ճառ արտասանելու: Ի մեծ զարմանս ամբողջ հասարակութեան, նա բոլորովին շփոթվեց. անդադար կանգ էր առնում, սխալվում էր, խառնում էր դարձուածքները, շատ նախադասութիւններ չէր վերջացնում, նորն էր սկսում, նրա ձայնը հազիւ էր լսվում: Նա բոլոր ժամանակ զոգում էր. գունատված դէմքի վրայ պարզ նշմարվում էին սաստիկ ջղային գրգռման հետքեր: Բոլոր ժամանակ հանդիսականները, մտնելով նրա դրութիւնը, համակրութեան ցոյցերով աշխատում էին քաջալերել նրան և երբ նա աւարտեց իր ճառը, ճանապարհ գցեցին նրան մինչև իր տեղը բուռն ծափահարութիւնով: Բայց չընայած դրան, շատերը հիասթափված շարժում էին գլուխներն ու զանազան գուշակութիւններ անում, ասելով. «Եթէ Պարնէլլին յաջողվի երբ և իցէ ընտրվել պարլամենտի անգամ, նա անշուշտ «համր պատգամաւորի» հօշակ կըստանայ, ու նրա մասին կտեսն. «single speech Parnell», որ կընշանակի «Պարնէլլ, որն իր կեանքում արտասանել է միայն մի ճառ»:

## XI.

Այդ անաջող դերիւտի հետեանքն այն եղաւ, որ ընտրութիւնների ժամանակ Պարնէլլը պարտութիւն կրեց, իսկ նրա հակառակորդ Տէլլօրը յաղթանակը տարաւ: Բայց այդ անաջողութիւնից նա չըլուսահատվեց. նա հաւատում էր իր ապա-

գալին, և այդ հաւատը գնալով ամրանում էր նրա մէջ: Հետեւեալ 1875 թ. վախճանվեց Ջօն Մարտինը, որը պատգամաւոր էր Միտ կոմսութեան կողմից: Մարտինի բարեկամներն առաջարկեցին ընտրողներին Պարնէլլի թեկնածութիւնը, որն այս անգամ ընտրվեց ահագին մեծամասնութեամբ: 1875 թ. ապրիլին Պարնէլլն առաջին անգամ երևեցաւ անգլիական պարլամենտում իբրև Իրլանդիայի Միտ կոմսութեան պատգամաւոր: Նա այդ ժամանակ դեռ շատ երիտասարդ էր, հազիւ 30 տարեկան: Նրա պարլամենտում երևալը ոչոքի ուշադրութիւնը չըգրաւեց: 1875 և 1876 թ. պարլամենտական նստաշրջանների ժամանակ նա մի աչքի ընկնող դեր չըխաղաց. նրա գոյութիւնը նրկատելի էր միայն իր փոքրաթիւ բարեկամների շքրջանում: Իր հռչակաւոր քաղաքական գործունէութեան այդ սկզբի տարիները նա ամբողջապէս նուիրեց իրլանդական պարլամենտական կուսակցութեան դրութեան հետ բազմակողմանի ծանօթանալու գործին և մշակեց իր ապագայ գործունէութեան այն հանճարեղ սիստեմը, որի միջոցով նա կարողացաւ երկար տարիներ կռվել աջողութեամբ Մեծ Բրիտանիայի պարլամենտի հետ:

Այն ժամանակ, երբ Պարնէլլը մուտք գործեց պարլամենտ, իրլանդական կուսակցութիւնը, չընայած որ իր շարքում ունէր մի քանի տասնեակ պատգամաւորներ, ոչ մի նշմարելի ազդեցութիւն չէր կարողանում գործել գործերի ընդհա-

նուր ընթացքի վրայ. նրա գոյութիւնը համարեա աննկատելի էր: Ըստ վաղեմի սովորութեան իւրաքանչիւր տարի նա առաջարկութիւններ էր անում պարլամենտին՝ ինքնավարութիւն շնորհել Իրլանդիային, որն, ի հարկէ, տաք վիճաբանութիւններից յետոյ, ձայների ահագին մեծամասնութեամբ մերժվում էր, ոչ մի տպաւորութիւն չըթողնելով թէ պարլամենտում և թէ պարլամենտից դուրս: Գործերի այդ դրութիւնը հետեւանք էր իրլանդական կուսակցութեան թուլութեան, իսկ այդ թուլութիւնն առաջ էր գալիս նրա ղեկավարների անընդունակութիւնից, որոնք իրանց չափաւորութեան շնորհիւ Իրլանդիայի ազգաբնակչութեան մեծամասնութեան կողմից չէին վայելում այն համակրութիւնը, որն առհասարակ ուժ է տալիս հասարակական գործիչներին: Կուսակցութիւնը չունէր որոշ տակախիւ, որը պարլամենտում այնքան, եթէ ոչ աւելի, անհրաժեշտ է, որքան պատերազմի դաշտում. նրա կազմակերպութիւնը թույլ հիմքերի վրայ էր դրած: Անդամներից շատերն Իրլանդիայի ինքնավարութեան գործին վերաբերվում էին մեծ անտարբերութեամբ, թէև արտաքուստ, ձևի համար, պարլամենտում պաշտպանում էին այդ խնդիրը: Կուսակցութեան պարագլուխն էր այդ ժամանակ ոմն Իսահակ Բեօտտ, որը թէև խորը համոզված էր, որ Իրլանդիային անհրաժեշտ է ինքնավարութիւն շնորհել, բայց զուրկ էր այդպիսի մեծ հարցը պաշտպանելու ընդունակութիւ-

նից: Նա մի ծայրայեղ չափաւոր մարդ էր, մի ջէնտլմէն, որն իր հասարակական գիրքն ու կապերն աւելի թանկ էր գնահատում, քան իր պաշտպանած գործը: Բացի այդ՝ ծանրաբեռնված լինելով անձնական պարտքերով ու անթիւ մուրհակներով, նա բաւականին ընկած էր հասարակութեան աչքում, ուստի առանձին հեղինակութիւն չունէր իր կուսակցութեան շրջանում: Շնորհիւ Ի. Բեօտտի թուլութեան, իրլանդական կուսակցութիւնը չէր օգտվում պարլամենտում հարկաւոր անկախութեամբ, ուստի և ինքնուրոյն դեր խաղալու հնար չունէր: Նա առանց մի որոշ նպատակի միանում էր անգլիական այս կամ այն կուսակցութեան հետ, իսկ կուսակցութիւններն իրլանդացիների ձայներով օգտվում էին միայն իրանց նրպատակներին հասնելու համար, ոչինչ ուշադրութիւն չըդարձնելով նրանց պահանջների վրայ: Շնորհիւ պարլամենտական կուսակցութեան այդ չափաւոր, անգոյն, աննպատակ ու անպտուղ գործունէութեան, Իրլանդիայում ժողովրդական անբաւականութիւնը գնալով գորեղանում էր. շատերը, մանաւանդ ֆէնիները, օգտվելով իրերի այդ դրութիւնից, բացարձակ քարոզում էին, որ սահմանադրական միջոցներով Իրլանդիան երբէք ազատութիւն չի ձեռք բերիլ, իր ցանկացած վերանորոգութիւնները չի ստանալ:

Պարնէլլը, մուտք գործելով պարլամենտ և ամբողջ երկու տարի մօտիկից ուսումնասիրելով գոր-

ծերի դրութիւնը, եկաւ այն համոզմունքին, որ իրլանդական կուսակցութիւնը շատ թույլ է. երկրի շահերը պահանջում են անպայման կերպարանափոխել կուսակցութեան կազմակերպութիւնը և, որ ամենագլխաւորն է, նրա պարլամենտական տակտիկան, գործունէութեան եղանակը, սիստեմը: Նա սկսեց քարոզել, որ իրլանդական կուսակցութիւնը պիտի բոլորովին անկախ գիրք բռնի անգլիական կուսակցութիւնների վերաբերմամբ ու գործի անպայման ինքնուրոյն կերպով. նա պէտք է պարլամենտում կռիւ մղի, այլ ոչ թէ սրա կամ նրա հետ դաշը կապի մի որևէ ողորմութիւն ստանալու յուսով: Իրլանդիային վերաբերեալ վերանորոգութիւնները նա պէտք է դուրս խլի պարլամենտի ձեռքից, այլ ոչ թէ խնդրի իբրև վարձատրութիւն իր մատուցած ծառայութիւնների: Բացի այդ Պարնէլլը հասկացաւ, որ անհրաժեշտ է վերջ տալ այն գաղտնի, խուլ ստելութեան, որը նշմարվում էր ընդհանուր ազգային գործը պաշտպանող երկու հակառակ բանակների մէջ, սահմանադրականների ու վճռական միջոցների դիմողների, ֆէնիների, մէջ: «Այդ նպատակին հասնելու համար իրլանդական կուսակցութիւնը, — ասում էր Պարնէլլը, — պիտի ընդարձակի իր ծրագիրը, աւելացնի իր պահանջներն ու փոխի գործունէութեան եղանակը, միանգամ ընդմիշտ հրաժարվելով այն անիրագործելի յոյսերից, որոնք բարձում է անգլիական կուսակցութիւնների վրայ: Հօմբուլական-

ների կուսակցութիւնը,—ասում էր նա,—պիտի բարձրացնի իր գլուխը ու հաստատ քայլերով առաջ ընթանայ իբրև ազգային ձգտումների իսկական դրօշակակիր: Այն ժամանակ նրան կըյաջողվի դէպի իրան գրաւել սահմանադրական միջոցների հակառակորդներին, կըյաջողվի իր գոյութեան համար նոր ամուր հիմնաքար գտնել Ամերիկայի իրլանդացիների շրջանում, որոնց համակրութիւնը աւելի կըհարթի մեր ճանապարհը: Իր յարուցած շարժման ընդհանուր հասարակական բնաւորութիւն տալու համար ու աւելի ուժ ներշնչելու նպատակով Պարնէլլն անհրաժեշտ գտաւ Իրլանդիայի քաղաքական վերանորոգութեան հարցը անխորտակելի կապերով կապել հողային հարցի հետ, անձնական փորձից իմանալով, թէ որքան մեծ է հողային վերանորոգութիւնների պահանջը Իրլանդիայի գիւղական ամբօխի համար, որի անտեսական ողորմելի դրութիւնը գնալով աւելի ու աւելի ծանրանում է և որը ձգտում է քաղաքական անկախութեան գլխաւորապէս իր անտեսական դրութիւնը լաւացնելու համար: Ահա այն հիմնական խնդիրները, որոնց իրագործելուն ու վճռելուն Պարնէլլը նուիրեց իր ամբողջ պարլամենտական գործունէութիւնը սկսած 1877 թ.

## XII.

1874 թ. Գլադստօնը պարտութիւն կրեց պարլամենտում ու ստիպուած եղաւ այդ պատճառով հրաժարական տալ: Նրա տեղը բռնեց պահպանողական Գիզրաէլին, որից ոչ մի բարիք իրլանդացիների համար սպասել չէր կարելի: Անցաւ ամբողջ երեք տարի, որի ընթացքում կառավարութիւնը յօգուտ Իրլանդիայի ոչինչ չարաւ: 1877 թ. պարլամենտական նստաշրջանը ըստ սովորականին բացվեց գահական ճառով, որի մէջ Իրլանդիայի օգտին ոչ մի խոստում չը կար: Պարնէլլը լաւ հասկացաւ, որ առանց կռուի Իրլանդիան ոչինչ ձեռք բերել չի կարող, և նա վճռեց յայտարարել պարլամենտին այդ կռիւր: Նա ասաց. «Քանի որ Անգլիան թույլ չի տալիս Իրլանդիային կառավարել իր սեփական գործերը, Իրլանդիան իր կողմից կարող է խանգարել, մինչև անգամ անհնարին դարձնել Անգլիայի կառավարչական մեքենայի կանոնաւոր գործունէութիւնը: Իրլանդիան կարող է այդ անել իր պարլամենտական կուսակցութեան միջոցով: Այդ կուսակցութիւնը Իրլանդիայի շահերը յաջողութեամբ պաշտպանելու համար չը պիտի բաւականանայ տեսական, աննպատակ վերացական բողոքներով, որոնք առաջ են բերում միայն անպտուղ, հստորական տուրնիրներ, այլ նա պիտի ձգտի իւրաքանչիւր ըրպէ իր գոյութիւնը զգալ տալ պարլամենտին, մասնակցելով նրա բոլոր պարապ-

մունքներին, ամեն անգամ Իրլանդիայի միահամուռ պահանջները դնելով նրա առաջ: Իրլանդական կուսակցութիւնը իր եռանդուն գործունէութեամբ պիտի ցոյց տայ պարլամենտին, որ նրա կանոնաւոր գործունէութիւնը կուսակցութիւնը անհնարին կը դարձնի մինչև այն ժամանակ, քանի Իրլանդիան իրագործված չի տեսնիլ իր կենսական պահանջները»: Պարլամենտի ու կառավարութեան կանոնաւոր գործունէութեան խանգարումը Պարնէլլն ընտրեց մի միջոց, որով նա կարող էր առաջ մղել իր ժողովրդի պահանջները, պարլամենտի ուշադրութիւնը գրաւելով նրանց վրայ: Այդ դիտմամբ 1877 թ. նստաշրջանի հէնց սկզբից նա սկսեց զիմել այսպէս ասված «օբստրուկցիօնիզմի»: «Օբստրուկցիօնիզմը» ծնունդ է ստացել Անգլիայում. նա մի միջոց է, որով պարլամենտական հռետորները իրանց համար մի անհաճելի օրինագծի քննադատութիւնը ձգձգում են, նրա առիթով երկար ու ձիգ ճառեր արտասանելով: Ետ անգամ պատահում է «օբստրուկցիօնիզմի» շնորհիւ մի որ և իցէ օրինագծի քննադատութիւնը չի վերջանում մինչև նստաշրջանի վերջը: Կառավարութիւնը այդպիսի դէպքերում ըստ գոյութիւն ունեցող օրէնքի յետ է վերցնում օրինագիծը, և եթէ նա ցանկութիւն ունի անպատճառ իրագործել այդ օրինագիծը, հետևեալ նստաշրջանին պիտի նորից մտցնի նրան պարլամենտ, որն այդ անգամ էլ պիտի ենթարկվի մանրամասն

քննադատութեան և որը կարող է կրկին «օբստրուկցիօնիզմի» զոհ գնալ: Երբ մի օրինագիծ օբստրուկցիօնիզմի շնորհիւ մինչև նստաշրջանի վերջը չի ընդունվում, շատ հազիւ է պատահում, որ հետևեալ նստաշրջանին կառավարութիւնը նրան կրկին մտցնի: Այդ դէպքում նա, իրան յաղթուած տեսնելով, սովորաբար բոլորովին յետ է վերցնում իր առաջարկած օրինագիծը: Օբստրուկցիօնիզմի միջոցով յաղթութիւն տանելը հռետորներից մեծ ընդունակութիւններ է պահանջում. հարկաւոր է ժամերով խօսել ո՞ւմ առաջ. Անգլիական պարլամենտի առաջ, Մեծ Բրիտանիայի հարիւրաւոր ընտրեալների առաջ, որոնց ուշադրութիւնը հռետորը պիտի ժամերով իր վրայ գրաւի ու կենտրոնացնի: Պարլամենտական կռիւմ այդ միջոցով յաղթանակ տանելը մատչելի է այնպիսի հսկաներին, ինչպիսին էր Պարնէլլը:

Այն ժամանակուայ պարլամենտական կանոնադրութիւնը, որը վերջերս մի քանի փոփոխութիւնների ենթարկվեց, վիճաբանութիւնների ազատութեան համարեա թէ ոչ մի սահման չէր դնում. իւրաքանչիւր պատգամաւոր կարող էր խօսել, ինչ քան որ ուզում էր: Ժողովի նախագահի, սպիկէրի, իշխանութիւնը միայն բարոյական բնաւորութիւն ունէր: Երբ հարկաւոր էր լինում մի որ և իցէ անզուսպ հռետորի կարգի հրաւիրել, նա լիջում էր միայն նրա անունը փոխանակ «այս ինչ շրջանի պատգամաւոր» ասելու, որով նա, սպիկէրը,

պարտ է զիմել պատգամաւորներին, առանց նրանց անուներ լիշելու. վերջին միջոցը գործադրվում է սովորական զէպքերում: Բայց անուն լիշելն էլ շատերի վերաբերմամբ մի անզօր զէնք է սպիկէրի ձեռքում: Պարլամենտական ներքին կեանքի այդ կարգերը հնարաւոր էին դարձնում «օբստրուկցիօնիզմի» զարգանալը, որն իսկապէս սկիզբ ստացաւ Քլադստօնի առաջին մինիստրութեան ժամանակ (1868—1874 թ.), երբ պահպանողական ընդդիմադրական կուսակցութեան անդամները «օբստրուկցիօնիզմի» միջոցով աշխատում էին տապալել Քլադստօնի ազատամիտ վերանորոգութիւնները: Օբստրուկցիօնիզմը աներեւակայելի ուժ ստացաւ Պարնէլլի ժամանակ ու նրա շնորհիւ: Մինչև վերջինիս ասպարէզ դուրս գալը այդ միջոցին զիմում էր Իրլանդիայի պատգամաւոր Բիզգարը, որը, ոչ մի աջակցող չունենալով, անվերջ հարուածներ էր կրում այդ պատճառով թէ անգլիական կուսակցութիւններից և թէ իր իրլանդացի ընկերներից, որոնց պարագլուխն էր չափաւոր, անգոյն Բեօտար: Պարնէլլը, գնահատելով Բիզգարի եռանդը, ձեռք մեկնեց նրան ու արագ քայլերով սկսեց զիմել իր նպատակներին: Նա աւելի առաջ գնաց: Բիզգարն օբստրուկցիօնիզմի էր զիմում իրլանդական գործերի քննադատութեան ժամանակ, այն ինչ Պարնէլլը հարկաւոր համարեց ոչ պակաս եռանդով նոյն միջոցին զիմել բուն անգլիական գործերի վերաբերմամբ՝ կառավարութիւնը ղժուար դրու-

թեան մէջ դնելու նպատակով: Պարնէլլն իր հարուածների ծանրութիւնը առաջին անգամ անգլիացիներին զգալի դարձրեց 1877 թ. նստաշրջանի ժամանակ, երբ երկիրը կառավարում էր պահպանողական Դիզրաէլի մինիստրութիւնը: Այդ թուականի մարտին համայնքների ժողովում քննվում էր բանտերին վերաբերեալ մի կարեւոր օրինագիծ: Օրինագիծի երկրորդ ընթերցանութիւնից յետոյ Պարնէլլը մի քանի անգամ խօսք խնդրեց, խիստ քննադատութեան ենթարկելով պահպանողականների քաղաքականութիւնը: Վերջիններս զայրացած կրտրում էին նրա խօսքը, բայց նա շարունակում էր աջ ու ձախ հարուածել: Պահպանողականները աւելի զայրացան, երբ ազատամիտների շարքերում համակրութեան նշաններ նկատեցին, Պարնէլլի հասցէին ուղղված: Պարնէլլից յետոյ խօսք պահանջեց Բիզգարը, որից յետոյ դարձեալ մի քանի անգամ տեղից բարձրացաւ Պարնէլլը ու շարունակեց խօսել: Այդ օրուայ բուռն օբստրուկցիօնիզմը այն հետեանքն ունեցաւ, որ կառավարութիւնը ցանկութիւն ունենալով շուտով վերջացնել լիշեալ օրինագծի քննադատութիւնը, ընդունեց իրլանդացի պատգամաւորների առաջարկութիւնը՝ յետաձգել քննադատութիւնը միւս օրուան, քանի որ արդէն զիշերվայ ժամի 3-ն էր, իսկ նիստը զեռշարունակվում էր: Պարնէլլը հէնց այդ էր ցանկանում. կառավարութեան այդ զիշումը նրա համար յաղթութիւն էր: Դիզրաէլին իր այդ փոքրիկ

պարտութիւնը վատ նշան համարելով ու ցանկանալով, որ այլ ևս այդպիսի երևույթներ չբերկնովին պարլամենտում, մի նամակով դիմեց իրլանդական պարագլուխ Բեոտտին, որի մէջ բողոք էր յայտնում նրա կուսակցութեան «մի քանի երիտասարդ անդամների» գործունէութեան դէմ: Այդ նամակի մէջ Դիգրաէլին հարկաւոր էր համարել մի քանի կօմպլիմենտներ ուղղել իրան՝ Բեոտտին, ինչպէս՝ «Ձեր անկեղծ յարգանքը դէպի պարլամենտի արժանաւորութիւններն ամենքին յայտնի է և այլն»: Այդ ու դրա նման միւս գովասանքները կաշառեցին Բեոտտին, որն իր բոլոր ջանքերը լարեց իր «երիտասարդ անգուսպ աշխատակիցներին սանձահարելու», բայց անաջող: Պարնէլլը նրան յայտնեց, որ նա՝ Պարնէլլը, իրլանդական ժողովրդի կողմից ընտրված անկախ պարլամենտական կուսակցութեան անդամ է, այլ ոչ թէ մի որևէ վարչութեան ստորագրեալ պաշտօնեայ: Բեոտտի անտակա քայլերն այն հետևանքն ունեցան, որ Պարնէլլին միացան իրլանդական կուսակցութեան մի քանի ուրիշ անդամներ:

Այդ դէպքից մի քանի ամիս յետոյ Պարնէլլը պարլամենտում մի փոթորկալի նիստի հերոս հանդիսացաւ: Յուլիսի 25-ին հարաւային Ա.Փրիկայի գործերին վերաբերեալ մի օրինագծի քննադատութեան ժամանակ, որի պատճառով արիւնասեղ պատերազմ ծագեց Բօէրների ու Զուլուսների մէջ, ահատամիտ կուսակցութեան անդամ Ջէնկիսի վր-

րայ պահպանողականները վիճաբանութիւնների ժամանակ մեղադրանք բարձեցին, թէ նա, Ջէնկիսը, ՚ի չարն է գործ դնում պարլամենտական ազատութիւնը: Ջէնկիսը, բողոքելով այդ մեղադրանքի դէմ, պահանջեց, որ իր մեղադրողների խօսքերը արձանագրութեան մէջ մտցնվեն: Նրա այդ պահանջը մեծ եռանդով սկսեց պաշտպանել Պարնէլլը, որն ՚ի միջի այլոց ասաց. «Նս կարծում եմ, որ այսուհետև այլ ևս անհնարին է համբերել: Պարլամենտի յարգելի անդամների մեծամասնութիւնը մեր համբերութեանը սահման է դրել այժմ իր այն քստմնելի մեղադրանքներով, որ նա հարկաւոր համարեց ուղղել իմ ու ինձ հետ համերաշխ գործող պատգամաւորների հասցէին»: Կառավարութեան ներկայացուցիչ ու պահպանողականների պարագլուխ Նորսկոտտը խիզիւն և եթտեղից կանգնեց ու պահանջեց, որ Պարնէլլի խօսքերը նույնպէս մտցնվեն արձանագրութեան մէջ: Նախքան կառավարութեան այդ պահանջը կատարելը՝ սպիկէրն առաջարկեց Պարնէլլին յետ վերցնել իր խօսքերը: Այն ժամանակ Պարնէլլը տեղից կանգնեց ու, չընայած իր հակառակորդների բարձրացրած աղմուկին, առանց մի փոքր անգամ շփոթվելու, ասաց հետևեալը. «Իբրև իրլանդացի, իբրև ներկայացուցիչ այն թշուառ երկրի, որն աննկարագրելի տանջանքներ ու վէրքեր է կրում շնորհիւ անգլիացիների միջամտութեան նրա տնային գործերում, շնորհիւ անգլիացիների անգթութեան

ու բռնակալութեան, ես մի առանձին բաւականութիւն եմ զգում՝ խանգարել կառավարութեան զիտաւորութիւնները ներկայ օրինագծի քննադատութեան վերաբերմամբ»։ Այդ խօսքերը անկարագրելի փոթորիկ առաջ բերեցին. շատերը, տեղից ցատկելով, բռունցք էին ցոյց տալիս Պարնէլին։ Պարլամենտը ծովի նման ալեկոծում էր. «անհաշտ թշնամի», «քստմնելի դաւաճան», «արիւնարբու ֆէնի» և այլ գրանց նման լիշոցներ առատութեամբ թափվում էին Պարնէլի գլխին, իսկ նա, շրջապատված իր հաւատարիմ իրլանդացիներով, անապատի տաքարիւն առիւծի նման իր կրակոտ հայեացքով զինաթափ էր անում իր անգուսպ հակառակորդներին։ Երբ փոթորիկը փոքր ինչ հանդարտվեց, Նորսկոտտը տեղից կանգնեց և առաջարկեց, որ Պարնէլի խօսքերը արձանագրվեն և իսկոյն և եթ պարլամենտի քննութեան ենթարկվեն։ Վերոյիշեալ օրինագծի քննութիւնն ընդհատվեց և ժողովն անմիջապէս զբաղվեց Նորսկոտտի առաջարկութեան քննութեամբ։ Վերջինս կարծում էր, որ հասել է յարմար ըոպէս Պարնէլին պատասխանատուութեան ենթարկելու, ուստի առաջարկեց ժողովին՝ միշտբաթ ժամանակով զրկել Պարնէլին պարլամենտական պարապմունքներին մասնակցելու իրաւունքից։ Այն ժամանակ ժողովի նախագահը, սպիկերը, զիմեց Պարնէլին, առաջարկելով նրան բացատրութիւն տալ ժողովին իր խօսքերի առիթով։ Բայց նա սաստիկ յուզման

պատճառով, թէ բուն տակտիկական զիտումներից զրդված, չէր շտապում տեղից բարձրանալ։ Կրկին անգամ զիմեց նրան սպիկարը, նա էլի տեղից չբարձրացաւ, երրորդ անգամ զիմեց, — այն ժամանակ Պարնէլը կանգնեց և սկսեց խօսել։ Նախ քան իր խօսքերի իմաստը բացատրելը, նա սկսեց մանրամասն քննադատել պարլամենտական գործավարութեան ձևերը, իսկ երբ սպիկէրը լիշեցրեց, որ նա բուն հարցից փախուստ է տալիս, այն ժամանակ Պարնէլը դարձաւ ժողովին աւելի կծու ու համարձակ նկատողութիւններով։ Իր ճառն աւարտելուց յետոյ նա, համաձայն ընդունված սովորութեան, թողեց դահլիճը, ուր պիտի զբաղվէին նրա գործի քննութեամբ։ Իրեն ուղեկից ունենալով պահանջողական մեծամասնութեան անգուսպ ազմուկների և կատաղի լիշոցների հոսանքը, Պարնէլը դուրս գնաց դահլիճից ու բարձրացաւ պարլամենտի վերին յարկում գտնվող «սպիկէրի վերնատուն» անուանով օթեակը, որտեղից նա սկսեց զիտել, թէ ինչ վախճան կունենայ իր գործի քննութիւնը։ Նորսկոտտի առաջարկութիւնը ձևակերպված էր այսպէս. «Այքի առաջ ունենալով, որ պ. Պարնէլը գիտակցաբար և տոկունութեամբ աշխատում է միշտ խանգարել գործերի կանոնաւոր ընթացքը, որով նա յանցանք է գործում պարլամենտի դէմ, ստորացնելով նրա բարձր արժանաւորութիւններն ու գցելով նրա վարկը, — նա, պ. Պարնէլը, զրկվում է ժողովարանի պարապ-

մունքներին մասնակցելու իրաւունքից մի շարաթ ժամանակով, մինչև հետևեալ ուրբաթ օրը»: Այդ առաջարկութիւնը բոլորովին անսպասելի կերպարանք ընդունեց: Պարլամենտի անդամներից շատերը չէին կարող չըլիշել, որ ներկայ պահպանողական մեծամասնութեան ներկայացուցիչները, երբ Քլադստօնի կառավարութեան ժամանակ (1868—1874) ընդգիծադիր կուսակցութեան շարքերում էին գտնվում, կառավարութիւնը տապալելու համար նոյն միջոցներին, համարեա թէ նոյն կծու դարձուածքներին էին դիմում, որոնք այժմ լրսվում են Պարնէլլից: Բացի այդ, Պարնէլլի խօսքերի բազմակողմանի քննութիւնը պարզեց, որ նա պարլամենտում ընդունված ձևերին հակառակ ոչ մի քայլ չարեց: Նա ասաց, որ՝ «մի առանձին բաւականութիւն է զգում խանգարել դիտումները» սչ թէ պարլամենտի, որ ճշմարիտ կարող էր յանցանք համարվել նրա դէմ, այլ «կառավարութեան», որ բոլորովին օրինաւոր ու բնական ձգտում է ընդգիծադիր կուսակցութեան իւրաքանչիւր անդամի կողմից: Այդ խորհրդակցութիւնից յետոյ պարլամենտը անհնարին գտաւ կատարել կառավարութեան ներկայացուցիչ Նորսկօտտի պահանջը: Կառավարութեան դրութիւնը շատ դժուարացաւ. նա կատարեալ պարտութիւն էր կրում: Այդ դժուարութիւնից ազատելու համար, ժողովականների մեծամասնութիւնը վճռեց Նորսկօտտի առաջարկութեան վերջնական քննադատութիւնը յետաձգել

մինչև հետևեալ ուրբաթ օրը, որով և նա մըշտական մոռացութեան մատնվեց: Երբ սպիկէրը յայտնեց ժողովի այդ վճիռը, Պարնէլլի կողմնակիցները դուրս թռան դահլիճից և մեծ ցոյցերով առաջնորդեցին Իրլանդիայի ապագայ «անթագակիր թագաւորին» «սպիկէրի վերնատնից» դէպի դահլիճը, ուր նրանց ցոյցերը իրանց գագաթնակէտին հասան: Սպիկէրը, նիստը փակելով, վերջ դրեց աներևակայելի աղմուկին:

Նորսկօտտի առաջարկութեան հերքումը մի փայլուն, անօրինակ յաղթանակ էր Պարնէլլի համար: Նրա ժողովրդականութիւնը արագութեամբ աճում էր Իրլանդիայում: Նա աւելի ևս համոզվեց, թէ օբստրուկցիօնիզմը ինչ մեծ գէնք է իր ձեռքում: Այդ գէնքով նա աւելի մեծ եռանդով սկսեց առաջ մղել իր սկսած կռիւր: Բացի Բիգգարից նա այդ ժամանակ ունէր ուրիշ հինգ հաւատարիմ զինակիցներ: Այդ եօթը հոգուց բազկացած փոքրիկ խումբը հրաշքներ էր գործում շնորհիւ իր կրակոտ առաջնորդի: Նոյն 1877 թ. յուլիս ամսում Պարնէլլին աջողկեց կրկին անգամ զգալ տալ պարլամենտին օբստրուկցիօնիզմի ուժը. յուլիսի 31-ի նիստը, որում քննվում էր նոյն աֆրիկական օրինադիժը, շարունակվեց ամբողջ քսան և վեց ժամ անընդհատ: Համարեա բոլոր ժամանակ խօսում էր Պարնէլլը, որի տեղը երբեմն բռնում էին նրա ընկերները, երբ նա հանգիստ էր առնում: Պարնէլլի փոքրիկ խմբի եռանդուն գործու-

նէութիւնը գնալով, աւելի ու աւելի էր գրաւում զէպի իրան Իրլանդիայի ազգաբնակութեան համակրութիւնը: Ինչպէս վերեն ասացինք, Պարնէլլի ժողովրդականութիւնը մեծ չափերով առաջ էր գնում, որ շատ կարևոր էր նրա պաշտպանած գործի համար: 1877 թ. Պարնէլլը Բիզգարի հետ այցելեց Դուբլինը, ուր «Րօտանդա» դահլիճում ժողովրդի ահագին բազմութիւն ոգևորուած ցուցեր արաւ նրանց: Պարնէլլն իր ճառով աւելի ևս վառեց ժողովրդի ագնիւ զգացմունքները. այդ օրից սկսվեց նրա փառաւոր գործունէութեան շրջանը հայրենի հողի վրայ: Այդ օրուայ ժողովը պարզեց ամենքի համար, որ հասել է ըսպէն, երբ ժողովուրդը պիտի վճռի՝ ո՞ւմ յետևից գնալ, Պարնէլլի, թէ Բեօտտի: Վերջինս էլ լաւ հասկանում էր, որ անհրաժեշտ է այդ հարցը վճռել և վերջ տալ զրանով անորոշ դրութեան. ուստի հրապարակով պատրաստականութիւն յայտնեց իսկոյն և եթ թողնել կուսակցութեան պարագլխի դերը, եթէ Իրլանդիան իրան կողմնակից կը յայտարարի Պարնէլլի քաղաքականութեան: Այդ հարցը եթէ ոչ վերջնականապէս վճռելու, գոնէ պարզելու համար 1878 թ. յունվարին Դուբլինում իրլանդական գործիչների մի ժողով կազմվեց: Այդ ժողովում Պարնէլլը գերակշռող դեր էր խաղում: Նա թէև Բեօտտի տեղը չը բռնեց, բայց բարոյական մեծ յաղթութիւն ունեցաւ: Ժողովում Բեօտտը, պարզելով իր ծրագիրը, արտասա-

նեց մի բաւականին անգոյն ճառ, որը վերջացրեց հետևեալ խօսքերով. «Ես լիովին համոզված եմ, որ իրլանդացիներին կը յաջողվի համոզել անաչառ անգլիացիներին, որ Իրլանդիային անհրաժեշտ է շնորհել ինքնավարութիւն»: Պարնէլլն անմիջապէս խօսք խնդրեց և ի միջի այլոց ասաց հետևեալը. «Եթէ ես այսօր թող չեմ տալիս ինձ առաջարկել երկրին գործունէութեան այս կամ այն եղանակը, այս կամ այն յատուկ քաղաքականութիւնը և մինչև անգամ հրաժարվում եմ ներկայ ժողովի հայեցողութեան առաջարկել այս կամ այն հարցը, — այդ միայն այն պատճառով, որ ես դեռ երիտասարդ եմ և կարող եմ սպասել: Կարծում եմ որ երկիրն էլ կարող է սպասել. այն երկիրը, որը մինչև այժմս զարմանալի համբերութեամբ տարել է իր ուսերի վրայ թշուառութեան ծանր լուծը, մի առ ժամանակ էլ կարող է համբերութիւն ունենալ: Պ. Բեօտտը բաւականին յոյս սփռեց այն քաղաքականութեան վրայ, որին նա հետևել է վերջին չորս տարուայ ընթացքում: Եւ ինչ էք կարծում. ես ուրախութեամբ կը համաձայնվեի նրա հետ, եթէ նոյն կարծիքն ունենայի անգլիացիների մասին: Հնարաւոր է, մինչև անգամ շատ հաւատալի է, որ նրան կը յաջողվի համոզել անաչառ անգլիացիներին շնորհել Իրլանդիային ինքնավարութիւն, բայց դժբախտաբար ես չեմ կարծում, թէ համայնքների ժողովը երբ և իցէ անաչառ անգլիացիներին լինի բողկացած, կամ գոնէ

այնպիսիներէ մեծամասնութիւն ունենայ: Հէնց այդ անաչառներն այնտեղից բացակայ են և հազիւ թէ յաջողի նրանց մուք գործել այնտեղ: Եթէ մենք պարլամենտում գործ ունենայինք այնպիսի մարդկանց հետ, որոնք ընդունակ լինէին ուշ դարձնել արգար պահանջների վրայ, այն ժամանակ, ի հարկէ, կարելի էր յուսալ, որ պ. Բեօտտի քաղաքականութիւնը յաջող ելք կուեննայ. բայց մենք գործ ունինք ոչ թէ մարդկանց հետ, այլ կուսակցութիւնների, որոնք իրանց նեղ կուսակցական շահերն ամեն բանից վեր են դասում»: Փոխադարձ զիջումների շնորհիւ ժողովին աջողվեց համաձայնութիւն կայացնել կուսակցութեան անդամների մէջ: Ժողովը, թողնելով Բեօտտին կուսակցութեան պարագլուխ, հասկացրեց նրան, որ նա իր քաղաքականութեանը պիտի աւելի եռանդուն բնաւորութիւն տայ: Բացի այդ ժողովն ընդունեց Պարնէլի հետևեալ առաջարկութիւնը. «Իրլանդական կուսակցութեան անդամները պարլամենտական գործավարութեան շրջանում պիտի օգտվին անպայման ազատութեամբ այն հարցերի վերաբերմամբ, որոնք անմիջական կապ չունին կուսակցութեան գլխաւոր ծրագրի հիմնական կէտերի հետ»:

Այդ համաձայնութեան հետևանքն այն եղաւ, որ 1878 թ. նստաշրջանի ժամանակ Պարնէլը շարունակեց գործել բոլորովին ինքնուրոյն կերպով, հետևելով իր ընդունած տակտիկային: Բեօտտի

ազդեցութիւնը գնալով, աւելի ու աւելի թուլանում էր: «Հօմբուլականների միութիւն» կոչվող ընկերութիւնը, որը կազմված էր Անգլիայում այն իրլանդացիներից, որոնք ապրում էին այդ երկրում, Բեօտտի տեղ նոյն 1878 թ. իւր նախագահ ընտրեց Պարնէլին: Նոյն ժամանակ Իրլանդիայում հանգանակութիւն բացվեց յօգուտ պարտքերով ծանրաբեռնված Բեօտտի ի վարձատրութիւն նրա գործունէութեան, բայց բոլորովին անաջող: 1879 թ. մայիսին Բեօտտը վախճանվեց. նրա մահով անհետացաւ Պարնէլի միակ աչքի ընկնող հակառակորդը: Բեօտտի մահից յետոյ կուսակցութիւնը ժամանակաւոր պարագլուխ ընտրեց Շոու պատգամաւորին, թէև գործերի ղեկն անցաւ Պարնէլի ձեռքը. նա դարձաւ մի խոշոր պարլամենտական ուժ: Ինքը պահպանողական Իրլանդիայի մինիստրութիւնն ստիպված եղաւ աչքի առնել այդ ուժը, Պարնէլի հեղինակութիւնը, նշանակելով նրան այդ ժամանակ կազմված մի յանձնաժողովի անդամ, որին կառավարութիւնը հրահանգներ էր ավել օբստրուկցիօնիզմը սանձահարելու համար միջոցներ մշակելու և ներկայացնելու պարլամենտի քննադատութեան:

1879 թ. Պարնէլի գործունէութիւնը կենտրոնացաւ գլխաւորապէս պարլամենտից դուրս Իրլանդիայում, ուր նա իրան յատուկ եռանդով զբաղվեց հողային հարցով: Այդ հարցը նոր չէր ծնունդ առնում: 1879 թ. նա իր գոյութիւնը նոր ուժով

զգալ տվեց գետնախնձորի բերքի պակասութեան պատճառով. գետնախնձորը Իրլանդիայի գիւղաբնակ թշուառ սղգաբնակութեան ամենագլխաւոր կերակուրն է: Սյդ թուի դեռ սկզբներում իրլանդացի գործիչ Միքայել Դէւիտտը, երկրի զանազան անկիւններում մի շարք ժողովներ կազմելով, սկսեց արծարծել այն միտքը, թէ հարկաւոր է ժողովրդի տնտեսական շահերը պաշտպանելու համար մի առանձին հողային ընկերութիւն կազմել բազմաթիւ ճիւղերով: Դէւիտտի ձեռքով սկսած նախապատրաստութիւնները յաջողութեամբ առաջ էին գնում, երբ 1879 թ. յունիսին Պարնէլլը մուտք գործեց Իրլանդիա և սկսեց իր հռչակաւոր «հողային ագիտացիան»: Մի քանի ամիս շարունակ նա առանց մի ըոպէ հանգիստ առնելու թրջում էր Իրլանդիայի մի անկիւնից միւս անկիւնը, ուր բազմամարդ ժողովներում ճառախօսում էր ամբողջ ժամերով, մատնացոյց անելով ժողովրդին այն միջոցների վրայ, որոնցով կարելի է վճռել հողային հարցը: Նա ասում էր, որ հողային հարցի վճռման համար, ինչպէս և ինքնավարութեան հարցի, պիտի ընթանալ խաղաղ սահմանադրական ճանապարհով և խորհուրդ էր տալիս այդ հարցին վերաբերեալ պարլամենտական վիճաբանութիւններում նոյնպէս զիմել օբստրուկցիօնիզմի: Բացի այդ նա խորհուրդ էր տալիս գիւղացի երկրագործներին (ֆէրմէրներին) միանալ ու պահանջել հողատէրերից հողային տուրքը (րէնտա) փոք-

րացնել և այդ նպատակին հասնելու համար ընդհանուր համաձայնութեամբ ընդհատել հողային տուրքի հատուցումը, որով միայն կարելի է ստիպել լէնդլօրդերին կատարել երկրագործների արդարացի պահանջը: Պարնէլլը համոզում էր հողագուրդի ժողովրդին, որ գործունէութեան այդ եղանակը վերջ ՚ի վերջոյ կըստիպի ում հարկն է մտածել՝ թէ լաւ չի լինիլ արդեօք հողը յանձնել նրան—մշակողներին, այլ ոչ թէ անգութ լէնդլօրդերին, որոնք մայրաքաղաքներում ապրելով, հանգիստ խղճով վայելում են երկրագործի դաժան աշխատանքի պատուղները: 1879 թ. հողային ագիտացիան վերջնականապէս պարզեց այն նպատակը, որին պիտի զիմէին իրլանդացիները հողային հարցի վերաբերմամբ. այդ նպատակն է՝ իւրաքանչիւր գիւղացի պիտի ունենայ իր էական կարիքներին բաւականութիւն տվող հողային սեփականութիւն: Պարնէլլի աշխատակիցներից մինը, Օ'Կոննոր Պաուէր, հետեւեալ կերպով ձևակերպեց հողային հարցը, «Եթէ դուք սռաջարկէք ինձ համառօտ կերպով բացատրել ձեզ՝ ինչո՞ւմն է կայանում իրլանդական հողային հարցը, ես կասեմ, որ նա կայանում է հողը իրլանդական ժողովրդին յանձնելում: Եթէ դուք հարցնէք՝ ինչպէս վճռել նրան համաձայն գիտութեան, փորձի ու առողջ գատողութեան պահանջների, ես կարճ կըպատասխանեմ ձեզ՝ լէնդլօրդիզմի ռնջացմամբ ու հողատէր

գարձներով նրան, ով ապրում է այդ հողի վրայ ու մշակում նրան»:

1879 թ. եռանդուն ազիտացիայի հետևանքըն այն եղաւ, որ կազմակերպվեց «Իրլանդական հողային միութիւն» անունով մի վիթխարի ընկերութիւն, որն իր բազմաթիւ ճիւղերն սփռելով ոչ միայն Իրլանդիայում, այլ և Իրլանդիայից դուրս, միջոցներ տուեց սովատանջ ժողովրդին կռիւ մղել իր փայփայած նպատակներին հասնելու համար: Նոր ընկերութեան յաջող գործունէութեան համար անհրաժեշտ էին նիւթական ահագին միջոցներ, ուստի Պարնէլլը յանձնարարութիւն ստացաւ իր աշխատակիցներից Ջօն Դիլլօն յայտնի գործիչի հետ միասին գնալ Հիւսիսային Ամերիկա հանգանակութիւն անելու յօգուտ իրլանդական գործի: Պարնէլլն իսկոյն ճանապարհ ընկաւ Ամերիկա, ուր Միացեալ Նահանգներում մեծ ընդունելութիւն գտաւ այնտեղի իրլանդացիների շրջանում: Նա այնտեղ մի քանի ամիս շարունակ գործեց, ընդհանուր համակրանք ու ոգևորութիւն առաջ բերելով դէպի իրլանդական հարցը: Նա մասնակցեց քառասունից աւելի բազմամարդ միտինգներին, ուր իր ճառերով փոթորկալի ոգևորութիւն էր յարուցանում ունկնդիրների շարքերում: Նա ճառեր արտասանեց հինգ նահանգների օրէնսդրական ժողովներում, և իր այդ փառաւոր յաղթական գնացքը պսակեց մի անօրինակ դէպքով. նա հրաւէր ստացաւ ճառ արտասանելու Միացեալ Նահանգների

գերագոյն օրէնսդրական ժողովում, կօնգրեսում, ուր մեծ հռետօրին արժանավայել ընդունելութիւն ցոյց տուին ու մեծ ցոյցերով ճանապարհ դրին:

Միացեալ-Նահանգներից Պարնէլլն անցաւ Կանադա, բայց այնտեղ նա կարողացաւ միայն երկու միտինգ կազմել, որովհետեւ Անգլիայից բոլորովին անսպասելի լուր ստացաւ, որ պահպանողական պարլամենտը լուծվել է և նշանակվել են ընդհանուր ընտրութիւններ: Պարնէլլը տեսաւ, որ վրձնական բոպէն հասել է, ուստի իսկոյն նաւ նստեց ու ճանապարհ ընկաւ հայրենիք: 1880 թ. մարտի 21-ին նա ոտք կոխեց Իրլանդիայի ափի վրայ և իսկոյն և եթ սկսեց ընտրողական ազիտացիան: Նա գիշեր-ցերեկ աշխատում էր, գրում էր, խօսում էր միտինգներում, հրահանգներ էր տալիս իր զինակիցներին, քանի որ ժամանակ շատ քիչ էր մնացել մինչև վճռական օրը. ընտրութիւնները նշանակված էին ապրիլի 1-ին:

Պարնէլլի ճանապարհորդութեան նիւթական հետևանքները ոչ պակաս փայլուն էին. նա Ամերիկայից բերեց 72.000 ֆունտ ստէրլինգ (մօտ 720.000 ռ.), որը իրլանդացիները թողին լիովին նրա կարգադրութեան ներքոյ: Պարնէլլն այդ գումարը յատկացրեց սովեալներին օգնելու գործին ու հողային և առհասարակ ազգային շարժման զանազան պէտքերին:

XIII.

1880 թ. ընդհանուր ընտրութիւնները վերջացան Գլադստօնի ազատամիտ կուսակցութեան յաղթութեամբ: Դիզրայէլին ասպարէզից իջաւ: Նրա տեղը բռնեց Գլադստօնը, որը կառավարեց երկիրը մինչև 1885 թ. Վերջինիս հինգամեայ կառավարութիւնը մեծ տեղ է բռնում իրլանդական հարցի պատմութեան մէջ, քանի որ այդ ժամանակամիջոցում Անգլիայի քաղաքականութիւնը դէպի Իրլանդիան հիմնովին փոխվեց և ստացաւ այն ընթացքը, որն այնքան ցանկալի էր իրլանդական կուսակցութեան համար: Այդ հինգ տարուայ ընթացքում երկիրը կառավարող Գլադստօնեան ազատամիտ կուսակցութիւնը, հաւատարիմ մնալով իր դրօշակակրին, կամաց-կամաց եկաւ այն համոզմունքին, որ անհրաժեշտ է պետութեան միութիւնը չրխախտելու համար շնորհել Իրլանդիային ինքնավարութիւն իր ներքին գործերը կառավարելու համար: Ազատամիտ կուսակցութեան այդ համոզմունքը հետեւանք էր այն անյաջող կուռին, որն այդ կուսակցութիւնը մղեց իրլանդացիների դէմ Գլադստօնի նոր կառավարութեան սկզբի տարիներում: Այդ կռիւը ցոյց տվեց նրանց, թէ որքան անօգուտ ու մինչև անգամ վնասակար է այն քաղաքականութիւնը, որը զուրկ է որևէ բարոյական սկզբունքից, որի գլխաւոր յատկանիշը կուպիտ ֆիզիքական ուժն է և որը, փոխանակ հաշտեցնելու

Իրլանդիան իր դրութեան հետ, աւելի ևս սաստկացնում էր այնտեղ ընդհանուր անբաւականութիւնը ու ուժ էր տալիս ժողովրդի առաջնորդներին: Տեսնելով, որ իր ընտրած ճանապարհը վաղուշ կրտանի արիւնահեղ յեղափոխութեան, որ իրլանդական հարցը, իր ներկայ դրութեան մէջ մընալով, կրճառայի իբրև ներքին փոթորիկների մի անվերջ աղբիւր, ազատամիտ կուսակցութիւնը և նրա հանձարեղ պարագլուխ Գլադստօնը մի ընդունեց անգամ չըտատանվեցին թողնել բուն ուժի քաղաքականութիւնը և իրանց ձեռքն առնել իրլանդական հարցի պաշտպանութիւնն ու իրագործումը, այն հարցի, որի դէմ նրանք մի քանի տարի շարունակ պահպանողականներից ոչ պակաս եռանդով էին կռվում: Այդ վճռական քայլն անելով, ազատամիտ կուսակցութիւնը մեծ ծառայութիւն մատուցեց ոչ միայն Իրլանդիային, այլ և ազատութեան ու առաջադիմութեան գործին առհասարակ, հետևապէս և համայն մարդկութեան: Այդ մեծ գործը, որը հասունացաւ 1880—1885 թ. ընթացքում իր անօրինակ հետեւանքով համարեա ամբողջապէս պարտական էր Պարնէլլին, որը Գլադստօնի երկրորդ մինիստրութեան ժամանակ պարլամենտում ամենագլխաւոր, երբեմն ամենի վրայ իշխող, զեր էր խաղում: Եթէ նա չըլինէր, եթէ իրլանդական կուսակցութիւնը իրան առաջնորդ չունենար մի այդպիսի ընդունակ, հեղինակաւոր, տոկուն, երկաթէ կամքի ու եռանդի տէր մարդ,

շատ հաւանական է, որ գործերը չէին ընդունիլ այն ընթացքը, որ ստացան. գուցէ Իրլանդիան կրկին նետէր իրան լեղափոխութեան դիրկը, կամ շարունակէր ողորմութիւն աղերսել անգլիական կուսակցութիւններէց, երբ այդ կուսակցութեան սեփական շահերը կըստիպէին նրանց տալ անբաղդ երկրին խնդրած աննշան ողորմութիւնը: Հիմայ տեսնենք, թէ ինչպէս ազատամիտ կուսակցութիւնը փոխեց իր քաղաքականութիւնը Իրլանդիայի վերաբերմամբ և ինչ դեր խաղաց Պարնէլլն այդ գործում:

1880 թ. ընդհանուր ընտրութիւնների ամբողջ հետաքրքրութիւնը կենտրոնացած էր արտաքին քաղաքականութեան վրայ, որը շնորհիւ Բիգրայէլի (լորդ Բիկօնսֆիլդ) 1877-78 թ. ուստաճկական պատերազմի վերաբերմամբ բռնած դիրքի բաւականին բարդվել էր ու մի քանի այրող հարցերի աղբիւր էր դարձել: Երբ ընտրողական պալքարը սկսվեց, Իրլանդիան շնորհիւ այդ հանգամանքի, չընայած մինչև անգամ 1879—80 թ. հողային բուռն ագիտացիային, իր վրայ առանձին ուշադրութիւն չըգրաւեց մինչև անգամ ազատամիտների կողմից, որոնք Բիգրայէլի արտաքին քաղաքականութիւնը գատափետելով, իրանց բոլոր ոյժերը լարել էին նրա կառավարութիւնը տապալելու, որ և յաջողվեց նրանց, 1889 թ. Միգլօտեանում, իր ընտրողական շրջանում, արտասանած մի ճառում Գլադստօնը խոստովանեց,

որ 1880 թ. ընտրութիւնների ժամանակ նա անուշադիր թողեց իրլանդական հարցը: Նա ասաց. «Իրլանդական գործերը 1880 թ. իմ ընտրողական ճառում տեղ չէին բռնում: Խոստովանում եմ ձեզ, որ իմ հայեցողութեան ներքոյ կային այնքան բազմաթիւ հարցեր, որոնք շնորհիւ պահպանողական կուսակցութեան բանսարկութիւններին, շօշափում էին Բրիտանական շահերը երկրագնդիս համարեա բոլոր ծայրերում, որ ես և ինձ հետ շատերը ոչ մի արժէք չէինք տալիս այն փոթորկալի ճգնաժամին, որն արդէն նշմարվում էր հորիզոնի խորքում և սպառնում էր կատաղի հեղեղի նման դուրս գալ իր սահմաններից և խորտակել մեզ բոլորիս»:

1880 թ. նորընտիր պարլամենտը ըստ սովորականին բացվեց գահական ճառով, որի մէջ Իրլանդիայի համար ոչ մի բարի խոստում չը կար: Ճառի մէջ չը կար և ոչ մի խօսք հողային հարցի մասին, որն այդ ժամանակ իրլանդացիներին ամենից շատ էր հետաքրքրում: Պարնէլլը, որ այդ ժամանակ Գուլբլինում կայացած մի ժողովում իրլանդական պարլամենտական կուսակցութեան պարագլուխ էր ընտրված Շոուի տեղ, գահական ճառի ընթերցումից լետոյ դիմեց համայնքների ժողովին մի առաջարկութեամբ, որի մէջ պահանջում էր մի շարք նոր օրէնքներ Իրլանդիայի տնտեսական դրութիւնը թեթեւացնելու համար: Այդ առաջարկութիւնը առաջ բերեց երկար ու տաք վիճաբանութիւններ, որի ժամանակ

Իրլանդիայի կառավարիչ Փօրստէրը յայտնեց, որ այդպիսի օրինագծեր մշակելու և քննելու ժամանակ չունի պարլամենտը ներկայ նստաշրջանի ընթացքում: Իրլանդիայի պատգամաւորները, մեղմացնելով Պարնէլլի պահանջները, յայտնեցին, որ եթէ պարլամենտը ժամանակ չունի հողային հարցին վերաբերվող նոր օրինագծեր քննելու, գոնէ նա պարտ է յանձնարարել կառավարութեան՝ ժամանակաւոր միջոցներ ձեռք առնել լէնդ-լորդերին փոքր ինչ սանձահարելու համար, որոնք գնալով աւելի ու աւելի խիստ են վարվում երկրագործների հետ, ամբողջ խմբերով արտաքսելով նրանց իրանց ողորմելի խրճիթներից և անելանելի չքաւորութեան մէջ գցելով նրանց հողավարձն իր ժամանակին չը վճարելու պատճառով: Փօրստէրը պատասխանեց, որ քանի հողային յարաբերութիւնների մէջ գործող օրէնսդրութիւնը գոյութիւն ունի ու չի ոչնչացած դեռ, կառավարութիւնը ոչ մի յանձնարարութիւն հակառակ այդ օրէնսդրութեան իմաստին չի ընդունիլ պարլամենտից, ուստի նա, Փօրստէրը, խորհուրդ է տալիս երկու հակառակ կողմերին իրանց փոխադարձ յարաբերութիւնների մէջ չափաւորութեան սահմաններից դուրս չը գալ: Վիճաբանութիւններից յետոյ իրլանդացիների պահանջը ձայների ահագին մեծամասնութեամբ մերժվեց: Հօմբուլականների թիւը, որոնց գլուխն էր անցած Պարնէլլը, այդ ժամանակ արդէն 65-ի էր հասնում: Կուսակցութիւնը

չստ փոքր էր դեռ բայց հարուստ էր իր բարոյական ոյժով, ուստի առաջին անյաջողութիւնից չըլուսահատվեց և չըշեղվեց իր ընտրած ճանապարհից: Այդ անյաջողութիւնը թերահաւատութիւն ծագեցրեց իրլանդացիների մէջ դէպի Գլադստօնի ազատամիտ կառավարութիւնը, աւելի ևս տոկունութիւն տուեց նրանց ու ստիպեց աւելի ևս պահանջող լինել:

«Պահանջելով, այլ ոչ թէ խնդրելով մենք կարող ենք ստիպել կառավարութեանը փոխել իր քաղաքականութիւնը դէպի Իրլանդիան», — յաճախ ասում էր Պարնէլլը:

Փօրստէրի տարած յաղթութիւնից յետոյ իրլանդացիները մի նոր օրինագիծ առաջարկեցին պարլամենտի քննութեան, որի նպատակն էր երկրագործների արտաքսելու առաջն առնել: Կառավարութիւնը սկզբում համակրութիւն չը ցոյց տուեց այդ օրինագծին, բայց տեսնելով իրլանդացիների հաստատամտութիւնը, հարկաւոր համարեց մի քանի զիջումներ անել նրանց, ուստի առաջարկեց պարլամենտին մի օրինագիծ, որով արգելում էր, թէև ոչ անպայման, երկրագործների արտաքսելը, եթէ հողավարձի չը վճարելը հետևանք է հունձի պահասութեան կամ որ և է բնական ընդհանուր աղէտի: Պահպանողական կուսակցութիւնը մեծ ընդգիմադրութիւն ցոյց տուեց այդ օրինագծին: Կառավարութիւնն ապացուցանում էր քննվող օրինագծի անհրաժեշտութիւնը, առաջ բերելով թւեր, որոնք ցոյց էին տալիս, թէ

ինչ թշուառութիւնների են ենթարկուած Իրլանդիայում երկրագործ գիւղացիները շնորհիւ լէնդլորդերի անբարեխղճութեան: Կառավարութեան տեղեկագրից երևաց, որ 1877 թ. իրանց բնակավայրերից արտաքսուել են 463 հոգի, 1878 թ. 980 հոգի, 1879 թ. 1238 հոգի, իսկ 1880 թ. միայն առաջի կիսամեակում 1690 հոգի և այսպէս հողագուրկ ողորմելիների թիւը գնալով մեծանում էր անօրինակ արագութեամբ: Աիճաբանութիւնների ժամանակ Գլադստօնը ի միջի այլոց ասաց, որ այնպիսի երկրում, որպիսին Իրլանդիան է, երկրագործին իր հողից զրկել ու արտաքսելը հաւասար է մահուան դատաւճոխ: Չը նայած պահպանողականների բուռն ընդդիմադրութեան, օրինագիծը համայնքների ժողովում ընդունվեց և անցաւ լորդերի ժողովը, որը մերժեց նրան ձայների ահագին մեծամասնութեամբ: Լորդերի այդ քաջը բաւականին կերպարանափոխեց իրերի դրութիւնը: Բանը նրանումն էր, որ Գլադստօնը միջոցներ չը ձեռք առաւ լորդերի ժողովին ընդունել տալու լիշեալ օրինագիծը: Այդպիսի միջոցներ շատ էլ դժուար չէր ձեռք բերել. նա կարող էր ժողովրդի մէջ շարժում առաջ բերել լորդերի դէմ, կարող էր լուծել համայնքների ժողովը և դիմել երկրին՝ վերջինիս կարծիքն իմանալու լորդերի արած քայլի մասին: Բայց Գլադստօնը այդ նպատակով ոչինչ չարեց, ուստի նրա մարդասէր օրինագիծը մնաց մեռած տառ: Լորդերի պալատի այդ

վարմունքը մեծ իրարանցում առաջ բերեց Իրլանդիայում և պատճառ դարձաւ հողային ագիտացիայի զօրեղանալուն, որի առաջը չը կարողացան առնել ոչ կառավարութեան խոստումը՝ հետևեալ նստաշրջանին նոր հողային օրինագիծ առաջարկել պարլամենտին և ոչ առանձին յանձնաժողով նշանակելը, որին յանձնարարված էր բազմակողմանի ուսումնասիրել երկրագործների դրութիւնը Իրլանդիայում: Հողային ագիտացիան աւելի զօրեղացաւ 1880 թ. սեպտեմբերին, երբ այդ տարուալ նստաշրջանը փակվեց: Էննիս քաղաքում կազմված մի բազմամարդ միտինգում Պարնէլը ձևակերպեց ագիտացիայի նպատակները, յայտնելով, որ երկրագործների հաստատամտութիւնից ու եռանդից է կախված հողային փրկարար օրէնքներ ձեռք բերելը, ուստի նրանք պիտի համախմբվեն ու զարժեն անպայման համերաշխութեամբ: Պարնէլի, Դէվիտի ու Դիլլօնի առաջնորդութեամբ հողային շարժումը յաջողութեամբ շարունակում էր իր ընթացքը: Նրանց խորհրդով Իրլանդիայում սկսեց գործադրվել հողային ագիտացիայի մի նոր սիստեմ, որը կոչվեց «Բօյկօտ»: Այդ սիստեմը նպատակ ունէր եռանդուն միջոցներով զինաթափ անել ժողովրդի տնտեսական բարօրութեան ռիսերիմ թշնամիներին: «Բօյկօտ» նմանվում էր բանւորական գործադուլին և գլխաւորապէս կախնում էր նրանում, որ երկրագործները, ահագին դաշնակցական ընկերութիւններ կազմելով, մերժում էին լէնդ-

լօրդերին հողավարձ հատուցանել: «Բօլկօտ» բառը ծնունդ ստացաւ 1880 թ. Այդ ժամանակ Իրլանդիայի Մալօ կոմսուլթեան մէջ ապրում էր մի ֆէրմէր Զէմս Բօլկօտ անունով, որը հրաժարվեց միանալ միւս երկրագործների դաշնակցութեան, ուստի «Հողային Միութեան» կարգադրութեամբ բռնի կերպով արտաքսվեց երկրից՝ երկրագործների միահամուռ ցանկութեամբ: Թէև այդպիսի դէպքեր երբեմն պատահում էին, բայց առհասարակ շարժումը օրինական ճանապարհներով էր իր նպատակին դիմում: Պարնէլլն ու նրա ընկերներն իրանց ճառերում միշտ խորհուրդ էին տալիս օրինականութեան սահմաններից երբէք չը դուրս գալ, բայց շատ դէպքերում սովատանջ ժողովուրդը ուշ չէր դարձնում նրանց խելացի խորհուրդներին, ուստի յաճախ պատահում էին քրէական յանցանքներ, մարդասպանութիւններ, որոնց զոհ էին գնում բռնակալ լէնդ-լօրդերն և այն իրլանդացիները, որոնք դաւաճանում էին ընդհանուր գործին:

Կառավարութիւնն անուշադիր թողնել այդ դէպքերը, ՚ի հարկէ, չէր կարող, ուստի Իրլանդիայում կարգը պահպանելու համար նա վճռեց դիմել խիստ միջոցների: Ամենից շատ այդ նպատակով աշխատում էր Փօրստէրը, Իրլանդիայի կառավարիչը, որին յաջողվեց համոզել Գլադստօնին դիմել խիստ միջոցների: Նախ քան այդ քալն անելը, կառավարութիւնը 1880 թ. նոյեմբերին վրձ-

ուեց դատի ենթարկել հողային շարժման ղեկավարներին, այսինքն Պարնէլլին, Իլլօնին, Բիգգարին, Իէվիտտին ու Սեկստօնին, որոնց նա մեղադրում էր ազգաբնակիւթիւնը դէպի յանցանքներ դրդելու: Դատը, ընդհանուր ուշադրութիւն իր վրայ կենդրոնացնելով, շարունակվեց մի քանի շաբաթ ու վերջացաւ մեղադրվողների կատարեալ լազթանակով. երդուեալների դատարանը նրանց արդար ճանաչեց: Այդ դատավճիռն աւելի ևս զօրեղացրեց Պարնէլլի ու նրա ընկերների ժողովրդականութիւնը, իսկ ազատամիտ կառավարութեան ստիպեց բացարձակ հետևել Փօրստէրի առաջարկած քաղաքականութեան:

1881 թ. պարլամենտական նստաշրջանը բացվեց գահական ճառով, որի մէջ կառավարութիւնը յայտարարեց, որ իրլանդական շարժումը սանձաչարեւ համար խիստ միջոցների կարիք է զգում, ուստի յայս ունի, որ պարլամենտը օգնութեան կը գայ նրան, կառավարութեան: Ի միջի այլոց ասված էր, որ կառավարութիւնը մտադրութիւն ունի հողային օրէնքներն աւելի ևս լայնացնել յօգուտ ֆերմէրների, բայց դա իսկապէս մի խարդախ խաղ էր իրլանդացի պատգամաւորներին փոքրը ինչ խողաղացելու համար: Պարնէլլը հասկացաւ, թէ ինչ որոգայթներ է պատրաստում կառավարութիւնը Իրլանդիայի համար, ուստի, իր շուրջը հաւաքելով իր բոլոր հաւատարիմ զինակիցներին, նա սկսեց եռանդով բողոքել խիստ միջոցներին,

րի դէմ. նա մի քանի օր շարունակ պարլամենտում անողորմ կռիւ մղեց կառավարութեան դէմ, երբեմն նրան անելանելի դրութեան մէջ դնելով: Կռիւն աւելի սուր կերպարանք ստացաւ յունվարի 24-ին, երբ Փօրստէրը պարլամենտի քննութեան առաջարկեց մի օրինագիծ, որով Երլանդիայի տեղական վարչութեան համարեա անսահման լիազօրութիւն էր տրվում առանց դատարանի խիստ պատասխանատուութեան ենթարկել այն բոլոր անձանց ու ընկերութիւններին, որոնք կասկածելի կը համարվեն որ և է յանցաւոր դիտաւորութիւնների մէջ: Օրինագիծը ձեւակերպված էր խիստ անորոշ կերպով: Նրա ընդունելութիւնը վարչութեան, ազմինիստրացիայի, կամայականութեան չափ ու սահմանը կը ոչնչացնէր, որով երկրի թըշվառութիւնը կը հասցնէր կատարեալ ծայրայեղութեան, ուստի իրլանդացի պատգամաւորները վրձուեցին «կրակի ու ջրի միջով անցնել» իրանց վիթխարի առաջնորդի յետեւից Փօրստէրի օրինագիծը տապալելու համար: Մի ամբողջ շաբաթ շարունակվեց կռիւր. տեղի ունեցան դէպքեր, որոնց նմանը շատ դժուար էր գտնել պարլամենտի պատմութեան էջերում: Պարնէլը լարեց իր հանճարի բոլոր ոյժերը. իր յետեւից ունենալով 65 հոգուց բաղկացած փոքրիկ խումբը, նա կատաղի կռիւ էր մղում ամբողջ պարլամենտի դէմ, որը փութորկալից ովկիանոսի նման տատանվում էր, սպառնալով կլանել նրան և նրա հաւատարիմ ընկեր-

ներին: Նա ամբողջ ժամերով խօսում էր, աջ ու ձախ հարուածելով իր հարիւրաւոր ռիւերիմ թշնամիներին, որոնք կատաղի բացազանչութիւններով ընդհատում էին նրա ճառերը, սպառնալով պատառ-պատառ անել նրան ու դուրս շարտել պարլամենտի լուսամուտներից: «Ո՞վ ես դու, անգուսպ ֆէնի, վաչրենի իրլանդացի», — հարցնում էին նրանից: «Ես, — պատասխանում էր նա, — ես իրլանդական ազգի առաջնորդն եմ, այն հալածված, արհամարհված, սովատանջ ազգի, որը վաղուշ պիտի խորտակի իրան կաշկանդող շղթաները, պիտի շարտի իր ուսերից ստրկութեան դաժան լուծը, պիտի վերջ տալ ձեր անգութ բռնակալութեան: Ես պիտի դուրս խլեմ ձեր ձեռքից Երլանդիայի ազատութիւնը, նրա փառքը, նրա ապագայ երջանկութիւնը, որի համար պիտի կռվեմ մինչև այն րոպէն, երբ դուք ուժասպառ անձնատուր կըլինէք ինձ և ձեր զրօշակները կըխոնարհեցնէք իմ առաջ»: Այդ ու գրա նման կրակոտ ճառերն աննրկաբազրելի իրարանցում ու ազմուկ էին առաջ բերում պարլամենտում, որի պատճառով նիստերը վերջանում էին կառավարութեան համար անհետեանք: Գլադստօնը ստիպված եղաւ վեց անգամ հարց բարձրացնել Փօրստէրի օրինագծի անյետաձգելի լինելու մասին, բայց անյաջող. իրլանդացիներն անհնարին էին դարձնում օրինագծի քննադատութիւնը: Վերջապէս պարլամենտը վրձուեց ամենաճայրայեղ միջոցների դիմել օրինագի-

ծը քննելու համար. իրլանդացիներից շատերին ուժով հեռացրին դահլիճից, բայց երբ այդ չօգնեց, այն ժամանակ արտաքսեցին ամբողջ իրլանդական կուսակցութիւնը Պարնէլլի հետ միասին: Անօրինակ տեսարանների հանդիսարան էր պարլամենտի դահլիճը այդ հռչակաւոր օրերի ժամանակ: Իրլանդացիներն ուշ չէին դարձնում սպիկէրին, որը հրաւիրում էր նրանց թողնել դահլիճը. այն ժամանակ նրանց բռնի ուժով վեր էին քաշում նստարաններից, սկսվում էր կատարեալ ըմբիշների կռիւ, փոքրաթիւ իրլանդացիները պտուտած հագուստներով դուրս էին նետվում դահլիճից, երբեմն լուսամուտներով: Բայց Պարնէլլը շրջապատված իր հաւատարիմ իրլանդացիներով կրկին մուտք էր գործում դահլիճը, կրկին սկսվում էր փոթորկալից կռիւը... Այդ դէպքերին սպիկէրը վերջ դրեց նրանով, որ հրամայեց պարլամենտի դռները ժամանակաւորապէս փակել իրլանդացիների առաջ: Գործակալութեան այդ բռնի ձեւերը միջոց տուին կառավարութեան իր նպատակին հասնել: 1881 թ. փետրվարի վերջերին Փօրստէրի օրինագիծը վերջնականապէս ընդունվեց և օրէնքի ոյժ ստացաւ: Բայց այդ դեռ բաւական չէր. նոյն տարուայ մարտին կառավարութիւնն առաջարկեց պարլամենտին նոյն բնաւորութեամբ մի ուրիշ օրինագիծ, որը նոյնպէս ընդունվեց և անմիջապէս սկսվեց գործադրվել Իրլանդիայում: Խիստ միջոցների գործադրութիւնը

փոխանակ սանձահարելու Իրլանդիան, աւելի ևս զօրեղացրեց իրլանդացիների շարժումը և խիստ ատելութիւն առաջ բերեց դէպի Գլազստօնի կառավարութիւնը, որի դրութիւնը գնալով դժուարանում էր շնորհիւ Իրլանդիայում կատարվող նորանոր դէպքերի: Կառավարութիւնը հասկացաւ, թէ ինչ ծայրայեղութեան մէջ է ընկել նա, ուստի վճռեց փոքր ինչ մեղմացնել Իրլանդիային հասցրնվող հարուածների ծանրութիւնը: Այդ նպատակով 1881 թ. ապրիլին Գլազստօնը պարլամենտի քննութեան առաջարկեց Իրլանդիային վերաբերեալ հողային մի նոր օրինագիծ:

Երբ 1880 թ. Գլազստօնը ձեռք առաւ կառավարութեան ղեկը, հողային բեֆօրմներ չէին մտնում նրա ծրագրի մէջ: Բեֆօրմների հարցը ծագեց և իր վրայ դարձրեց կառավարութեան ուշադրութիւնը շնորհիւ Պարնէլլի և նրա ընկերների եռանդուն գործունէութեան, որոնք ոչ մի յարմար առիթ բաց չէին թողնում՝ ապացուցանելու կառավարութեան ու պարլամենտին հողային բեֆօրմների անհրաժեշտութիւնը: Վերջ ի վերջոյ կառավարութիւնը վճռեց նրանց մի քանի զիջումներ անել ու այդպիսով փոքր ինչ մեղմացնել իր ընդգիծադրութիւնը իրլանդացի ազգասէրների պահանջներին, որոնք սաստիկ գայրացած էին Գլազստօնի դէմ 1881 թ. Իրլանդիային վերաբերեալ յատուկ օրէնքների պատճառով: Այդ զիջումները գուշակում էին իրլանդացիներին ապագայում փա-

ուսուր յաղթութիւններ, քանի որ հողային նոր օրինագիծը շօշափում էր շատ կարևոր հարցեր: 1881 թ. ապրիլի 7-ին, ներկայացնելով այդ օրինագիծը պարլամենտին, Գլադստոնը արտասանեց մի բաւականին երկար ճառ, որի մէջ նա ի միջի ալլոց նկատեց, որ ներկայ օրինագիծը կազմելիս, նա ստիպված եղաւ գործ ունենալ այնպիսի դժ- ժուար, բարդ ու մութ խնդիրների հետ, որոնց նմանը նա հազիւ կարող է լիջել իր երկարամեայ քաղաքական գործունէութեան շրջանում: Օրինագիծը հիմնված էր այն պահանջների վրայ, որոնք «երեք F (ֆ)» \*) անունով վաղուց 'ի վեր իրլանդացի գործիչների pia desiderata-ն էին համարվում: Նրա գլխաւոր նպատակն էր երկրագործների նիւթական, ապահովացումն հողատէրերի համար հարկազիր հողավարձի (րէնտա) միջոցով, որի չափն իւրաքանչիւր անգամ պիտի որոշէին առանձին հողային դատարաններ, այլ ոչ թէ իւրանք հողատէրերը: Բացի այդ նոր օրինագիծը խիստ միջոցներ էր տալիս տեղական վարչութեան ձեռքը ազքատ, տնտեսապէս քայքայված երկրագործներին հողից արտաքսելու առաջն առնելու համար, իսկ մինչև այդ ժամանակ հողատէրերը՝ անանկացած երկրագործների վերաբերմամբ օգ-

\*) Fair rent, fixity of tenure եւ free sale, այսինքն՝ հողավարձի արդար գնահատումն, հողից օգուելու իրաւունքի ապահովութիւն եւ այդ իրաւունքի ազատ վաճառումն:

տվում էին համարեա անսահման իրաւունքներով:

Գլադստոնի այդ նոր օրինագիծը եռանդուն ընդդիմադրութեան հանդիպեց պահպանողականների կողմից, որոնք բացարձակ կերպով սկսեցին մեղադրել Գլադստոնին սօցիալիզմի ու կոմունիզմի մէջ, ասելով, որ նա կողոպտում է իրլանդացի հողատէրերին: Օրինագիծին ընդդիմադրում էր նաև իրլանդական կուսակցութիւնը, որը, սկզբունքով հաւանութիւն տալով նրան, աշխատում էր լայնացնել օրինագիծը մի քանի կարևոր յաւելուածներով յօգուտ իրլանդացի երկրագործներին: Ազատամիտ կուսակցութիւնն սկզբում հաւանութիւն տուեց իրլանդացիների մի քանի առաջարկութիւններին, ուստի նրանք աւելի սկսան պահանջել: Ամբողջ չորս ամիս շարունակեցին վիճաբանութիւններն այդ օրինագծի մասին. վերջապէս, ընդունվելով համալնքների ժողովում, նա անցաւ լօրդերի ժողովը, ուր հանդիպեց նոր, աւելի մեծ դժուարութիւնների: Լօրդերն իրանց բոլոր ոյժերը լարեցին՝ կամ տապալել Գլադստոնի օրինագիծը, կամ նշանաւոր փոփոխութիւնների ու յաւելուածների միջոցով անպէտք, անօգուտ դարձնել նրան: Սակայն Գլադստոնն այս անգամ չը խոնարհվեց լօրդերի առաջ, որոնք, տեսնելով նրա ընդունած վճռական դիրքը, ընդունեցին առաջարկած օրինագիծը, մի քանի աննշան փոփոխութիւններ միայն մտցրելով նրա մէջ: 1881 թ. օգոստոսի 22-ին Գլադ-

ստօնի հողային օրինագիծն այդպիսով օրէնքի ոյժ ստացաւ: Այդ ժամանակ Պարնէլլի և նրա ընկեր- ների համար մի հարց ծագեց՝ նոր օգտաւէտ օ- րէնքի հրատարակման պատճառով փոխել արդեօք գործելու եղանակը, տակտիկան, թէ շարունակել ընթանալ առաջուայ ճանապարհով, այսինքն ան- ընդհատ կռիւ մղել կառավարութեան ու անգլիա- կան կուսակցութեան դէմ: Պարնէլլի կարծիքով նոր օրէնքն օգտաւէտ էր. նա մտցնում էր Իր- լանդիայում նշանաւոր փոփոխութիւններ յօգուտ երկրագործների, փոփոխութիւններ, որոնց նշա- նակութիւնը հերքել անկաշեղի է, բայց այնուա- մենայնիւ մեծ սխալ կը լինի իրլանդական կուսակ- ցութեան կողմից ընդունել նոր օրէնքը գրկաբաց ու խնդութեամբ, քանի որ դա ապացոյց կը լինի, որ իրլանդացիները բոլորովին բաւական են կայա- ցած գիշումներով և այլ ևս չեն մաքառել անգ- լիական կարգերի դէմ, իսկ դա մեծ վնասներ կա- րող էր հասցնել իրլանդական կուսակցութեան գլխաւոր նպատակի իրագործման: Այդ պատճառով Պարնէլլը չը բաւականացաւ այդ առաջին յաղթու- թիւնով և չը փառաբանեց Գլազստօնի կառավա- րութիւնը. նա բացարձակ յայտարարեց, որ առա- ջին յաղթութիւնը պիտի առաջ մղի իրլանդացի- ներին դէպի նոր կռիւներ, որոնք անշուշտ կը պսակվեն աւելի փառաւոր յաղթութիւններով: Այդ դիրքը Պարնէլլն ընդունեց շնորհիւ և այն հան- գամանքի, որ Իրլանդիան այդ ժամանակ գտնվում

էր խիստ օրէնքների ծանրութեան տակ, որից երկրի կառավարիչ Փօրստէրն օգտվում էր առանց քաշ- վելու: 1881 թ. սեպտեմբերին Դուբլինում տե- ղական գործիչների մի ժողով կայացաւ, որտեղ Պարնէլլը յայտնեց, որ հողային նոր օրէնքի ընդու- նելութիւնը չի ոչնչացնում նախկին ուղղութեամբ նոր քայլեր անելու կարևորութիւնը: «Իրլանդա- ցիները, — ասաց Պարնէլլը, — մեծ ուշադրութեամբ պիտի հետևեն, թէ ինչպէս է գործադրվում նոր օրէնքը, որի պակասութիւնները հենց այդ գոր- ծադրութեան ժամանակ երևան կը գան: Բացի այդ երբէք չը պիտի մոռանալ մեր գլխաւոր նպատակը, որն է հետևեալը. հողը հողատերերից պիտի անցնի երկրագործների ձեռքը, և այժմեան հողագուրկ գիւղական բանւորն ինքը պիտի լինի տէր այն դաշտի, որը մշակվում է նրա արիւն- քրտինքով:»

Պարնէլլի բռնած դիրքը դէպի հողային նոր օրէնքը բաւականին գրգռեց Գլազստօնին, որը մի յարմար առիթի էր սպասում իր դայրոյթը յայ- տնելու նրան: Հոկտեմբերի 7-ին Լիդս քաղաքում կայացած մի ժողովում Գլազստօնը մի ճառ ար- տասանեց, որի մէջ մեծ արհամարհանքով խօսեց »պարլամենտի մէջ գոյութիւն ունեցող մարդկանց մի խմբակի մասին, որին չի կարելի մինչև անգամ կուսակցութիւն անուանել, քանի որ նա բարոյա- կան արժանաւորութիւններ չունի կուսակցութիւն կոչվելու իրաւունքից օգտվելու»: Այդ «խմբակի»

առաջնորդին «Կօրքի պատգամաւորին» \*) զայրացած Քլադստօնը ուղղակի մեղադրում էր, որ նա ամեն կերպ աշխատում է խանգարել օգտակար օրէնքի կանոնաւոր գործադրութիւնը, որ նա՝ Պարնէլլը, պատրաստ է քարոզել նոր վարդապետութիւն, որը կարելի է անուանել «կողոպտման աւետարան»։ Իր ճառը Քլադստօնը վերջացրեց, յոյս յայտնելով, որ իրլանդական ժողովրդի առողջ դատողութիւնը, «չը նայած Պարնէլլի բռնակալութեան», կը թելադրի նրան խելացի կերպով օգտվել հողային նոր օրէնքով։ Բացի այդ Քլադստօնը հարկաւոր համարեց մի քանի սպառնալի խօսքեր ուղղել Պարնէլլի հասցէին, եթէ նա կը շարունակի նոր դժուարութիւններ առաջ բերել Իրլանդիայում։

Այդ ճառի մէջ՝ Պարնէլլը տեսաւ, որ առաջին նախարարը միջնադարեան ասպետների նման ձգտել է իր ձեռնոցը, մի տեսակ մենամարտութեան հրաւիրելով իրան։ Պարնէլլն անվհերքութեամբ ընդունեց հրաւերը, մի ընդամենը անգամ չը մտածելով լեռ նահանջելու մասին։ Հոկտեմբերի 9-ին Իրլանդիայի Վիկտօրի քաղաքում մի բազմամարդ միտինգ կայացաւ, ուր ներկայ եզոզները աննկարագրելի ոգևորված ցոյցերով հանդիպեցին Պարնէլլին, բուռն կերպով բողոքելով այն մեղադրանքների դէմ, որ Քլադստօնը բարձել էր «Իրլանդիայի անթագակիր թագաւորի» վրայ։ Պարնէլլն

\*) Պարնէլլն այդ ժամանակ արդէն Կօրք քաղաքի պատգամաւորն էր, որի կոչումը նա կրեց մինչև իր մահը։

խկոյն ամբիոն բարձրացաւ ճառ արտասանելու, որի մէջ խիստ քննադատութեան ենթարկելով Քլադստօնի վերջին ճառը, ասաց մօտաւորապէս հետևեալը. «Կառավարութիւնն ամեն կերպ աշխատում է Իրլանդիայում կարգ պահպանել, բայց նա բարոյական ոյժ չունի այդ անելու։ Ա՛յ, բացառանչեց նա,—անգլիացիները զուրկ են այդպիսի ոյժից Իրլանդիայում. իրլանդական ժողովուրդը, մեծից սկսած մինչև փոքրը, դէմ է նրանց գերիշխանութեան։ Կառավարութեան սպառնալիքները, ի հարկէ, շատ համարձակ են, բայց ինձ թվում է, որ նրանք սաստիկ նման են այն շվիցին, որով դպրոցի փոքրիկ աշակերտը, անցնելով գիշերուայ ժամին գերեզմանատնով, աշխատում է խրախուսել իրան։ Իսկ ինչ վերաբերում է ինձ, ես հաւատում եմ ապագային։ Ինչպէս Քլադստօնը ներկայ 1881 թ. հողային օրէնքով հրապարակապէս հրաժարվեց իր նախկին սկզբունքներից, նույնպէս մենք մօտիկ ապագայում կը տեսնենք, ինչպէս այդ պետական մարդու այժմեան խրոխտ դարձուածքները փետուրի պէս կը ցրվեն օդի մէջ, երբ նա իր առաջ կը տեսնի միացած և իր առաջնորդների շուրջը խմբված իրլանդական ժողովրդին»։ Հետևեալ օրը հասարակական ճաշի ժամանակ Պարնէլլը մի մարդարէութիւն արաւ իր հայրենիքի ապագայի մասին. նա ասաց. «Յաճախ ինձ պատահում է մտածել, որ Իրլանդիան դեռ չի անցել թշուառութիւնների այն վիթխարի հո-

սանքի միջով, որով նա պիտի անցնի, նախ քան Աւետեաց երկրի փրկարար կեանքին արժանանալը: Հաւանական է, որ մենք դեռ շատ տառապանքներ պիտի կրենք, հաւանական է, որ մեզ նոր նեղութիւններ ու զրկանքներ են սպասում, աւելի անողորմ, աւելի անգութ, քան եղել են մինչև այժմ:“

Այդ մարգարէութիւնը մասամբ կատարվեց: Հոկտեմբերի 12-ին Լօնդօնում կայացաւ մինիստրներին արտակարգ խորհուրդ, և նոյն օրուայ երեկոյեան Փօրստերն իր հետ տարաւ Իրլանդիա Պարնէլլին բանտարկելու հրամանը: Եւ այդպէս 1881 թ. հոկտեմբերի 13-ին «Իրլանդիայի անթագակիր թագաւորը» վաղ առաւօտեան ձերբակալվեց և բանտարկվեց Դուբլինի Կիլմինգամ բանտում: Այդ նոյն օրուայ երեկոյեան Գլադստօնը, Լօնդօնի պատուաւոր քաղաքացու կոչում ընդունելով, Հիլդհօլլ դահլիճում բազմամարդ ժողովի առաջ յայտնեց, որ Պարնէլլը բանտարկված է Դուբլինում:

Պարնէլլի բանտարկութեան լուրը կայծակի արագութեամբ տարածվեց ամբողջ Իրլանդիայում և աներևակայելի զայրույթ ու իրարանցում առաջ բերեց: Երկրի բոլոր անկիւններում սկսվեց հասարակական ժողովների մի շարք, ու զայրացած ամբուլը, շանթեր արձակելով Գլադստօնի կառավարութեան դէմ, սպառնում էր հիմնայատակ անել Իրլանդիայի Բաստիլիան, Կիլմինգամի բանտը: Այդ կատաղի բողոքներն առիթ տուին կառավարու-

թեան նոր լիազօրութիւններ տալ Փօրստերին, որն սկսեց անխնայ ձերբակալել ու բանտ նետել իրլանդական կուսակցութեան միւս նշանաւոր անդամներին, որոնք էին՝ Գիլլօն, Սէկստօն, Օ'Բրիէն, Օ'Կէլլի և ուրիշները: Ի պատասխան այդ ձերբակալութիւնների իրլանդական «Հողային Միութիւն» ընկերութիւնը հրատարակեց հռչակաւոր «No rent» հրովարտակը, որով ազգաբնակչութիւնը հրաւիրվում էր հողավարձ չըվճարել լէնդլօրդերին: Այդ հրովարտակը նշանաւոր գործնական հետեւանքներ չունեցաւ շնորհիւ գլխաւորապէս այն հանգամանքի, որ ազգեցիկ կաթոլիկ հոգևորականութիւնը հաւանութիւն չը տուեց նրան: Կառավարութիւնը շտապեց օգտվել «Հողային Միութեան» այդ քայլից և յայտարարեց այդ հիմնարկութիւնը ապօրինի ընկերութիւն, որով և միջոց տուեց Փօրստերին խափանել նրա գործունէութիւնը: Քիչ-քիչ խիստ միջոցների գործադրութիւնը հասաւ կատարեալ ծայրայեղութեան: 1881 թ. վերջերին և 1882 թ. առաջի քառօրդում ձերբակալութիւնների թիւը հասնում էր 918, իսկ բանտ էին նետված առանց դատարանի 600 հոգի, որոնց թւում գտնվում էր պարլամենտական կուսակցութեան մեծամասնութիւնը: «Հողային Միութեան» խափանումն և կառավարութեան միւս խստութիւնները առաջ բերեցին Իրլանդիայում գաղտնի ընկերութիւնների մի ահագին ցանց: Ամեն քայլափոխում նկատվում էին արիւնահեղ լեղափոխութեան սոսկալի նշան-

ներ: Կառավարութիւնը, սրան-նրան բանտ նետելով, աւելի ու աւելի հնարաւոր էր դարձնում արիւնահեղ լեղափոխութիւնը: Փէնիներն այստեղ-այնտեղ գլուխ էին բարձրացնում. նրանց անունն անգամ սարսուռ էր բերում խաղաղասէր մարդկանց վրայ: Իրերի այդ դրութիւնը պարզ ապացուցեց, որ 1881 թ. սկզբներին ճշմարիտ էր ասում Բրայտը թէ՛ «Խիստ միջոցները բռնակալութեան գէնքեր են միայն բռնակալների ձեռքերում»: Այդ տխուր դերը խաղացին նրանք ազատամիտների ձեռքում, որոնք սովոր էին իրանց պահպանողական հակառակորդներին «բռնակալ» անունով կնքել: Երբ խիստ միջոցներն իրանցից սպասած արդիւնքը չբտուին, 1882 սկզբներից ազատամիտների շրջանում քիչ-քիչ սկսվեց տարածվել այն համոզմունքը, որ անօգուտ է, մինչև անգամ վնասակար ու կորստաբեր է պետութեան համար այն քաղաքականութիւնը, որի գլխաւոր ոյժը բռնի միջոցներն են կազմում:

#### XIV.

Այդ համոզմունքով շուտով վարակվեց և Գլադստոնը, որը մի ըուպէ անգամ չբտատանվեց խոստովանել իր արած սխալը. նա շուտով հասկացրեց իր կողմնակիցներին, որ մտադիր է թողնել քաղաքական այն սիստեմը, որի պահպանութեան համար այնքան աշխատում էր Փօրստերը: Դեռ 1882 թ. փետրվարին շատերը զարմացմամբ նկա-

տեցին Գլադստոնի մի ճառում պարզ ակնարկ, որով նա հիմնովին փոխում էր իր հայեացքներն իրլանդական դատի, Հոմըուլի, վերաբերմամբ, իսկ մի քանի օրից լետոյ նա աւելի ևս մեծ զարմանք պատճառեց այն համակրութեամբ, որը նա ցույց տուեց իրլանդացի պատգամաւոր Պարնէլլի մօտիկ աշխատակից Ջօն Բէդմօնդի առաջարկած օրինագծին Իրլանդիայի երկրագործների ապառիկների մասին: Այդ օրինագիծը մշակել էր Պարնէլլը Կիլմինգամի բանտում: Թէև Գլադստոնը ուղղակի աջակցութիւն չը ցույց տուեց այդ օրինագծի ընդունելութեան, բայց լայտնեց, որ կառավարութիւնը շուտով կըներկայացնի պարլամենտի հայեցողութեան այգպիսի մի օրինագիծ ապառիկների հարցը վճռելու համար: Այդ զիջումը սկիզբ դրեց աւելի նշանաւոր, աւելի անսպասելի զիջումների: Ետևով լուրեր տարածվեցան, որ կառավարութիւնը մտադիր է հիմնովին փոխել իր քաղաքականութիւնը դէպի Իրլանդիան, ուստի նշանաւոր փոփոխութիւններ կըլինին կառավարչական շրջաններում, և առհասարակ տեղի կունենան «շատ օտարօտի բաներ»:

1882 թ. մարտին կառավարութիւնը դիմեց Կիլմինգամի բանտարկեալներին և լայտնեց, որ նրանք կարող են ազատութիւն ստանալ այն պայմանով միայն, որ ժամանակաւորապէս թողնեն երկիրը և հեռանան արտասահման, զօրօրինակ Պարիզ, Կոտեղից կարող են վերադառնալ հայրենիք,

երբ որ այդ նրանք կրցանկանան: Պարնէլլն ու նրա ընկերները, չընայած, որ կառավարութիւնը մի քանի անգամ զիմեց նրանց այդ առաջարկութիւնով, անպայման մերժեցին ընդունել այդ առաջարկութիւնը, յայտնելով, որ մտադիր չեն որևէ համաձայնութեան մէջ մտնել այն կառավարութեան հետ, որը նրանց բռնի կերպով բանտ է նետել: Ապրիլի սկզբներում անսպասելի լուր տարածվեց, թէ Պարնէլլն արձակված է բանտից: Բանը նրանումն էր, որ Պարնէլլն ազնիւ խօսքի գրաւականով ժամանակաւոր ազատութիւն էր ստացել Պարիզ գնալու համար՝ այնտեղ իր մի ազգականի թաղման ներկայ գտնվելու համար: Ծատերը կարծում էին, որ նա Պարիզից չի վերադառնալ բանտը, բայց ի զուր. ապրիլի վերջերին Պարնէլլը վերադարձաւ Գուբլին, Կիլմինգամ բանտը: Բայց նրա բանտարկութեան օրերը հաշւած էին արդէն, ժամանակաւոր ազատութիւնը Գլադստօնի համար մի նախապատրաստական քայլ էր նրան լիովին և վերջնական ազատութիւն շնորհելու համար:

1882 թ. մայիսի սկզբներում Գլադստօնը համայնքների ժողովում, իսկ լորդ Գրէնվիլը լորդերի ժողովում ի պատասխան իրանց հարցերով զիմող պատգամաւորներին յայտարարեցին, որ Իրլանդիայի փոխարքայ լորդ Կոուպերը հրաժարական է տուել, որի տեղն արդէն նշանակված է լորդ Սպէնսէրը. յայտնեցին նաև, որ կառավարութիւնը մտադիր է ազատութիւն շնորհել

Կիլմինգամի երեք բանտարկեալներին (Պարնէլլին, Գիլլօնին և Օ'Կէլլին) ու զբաղվել միւս բանտարկեալների դրութեամբ: Այդ յայտարարութիւններն ահագին տպաւորութիւն արին թէ Իրլանդիայում և թէ Անգլիայում: Փօրստէրը, Իրլանդիայի ստասսէկրէտարը, ստիպված եղաւ իսկոյնեւթ հրաժարական տալ: Պարնէլլը, ազատութիւն ստանալով, յաղթական գնացքով կրկին երևեցաւ Անգլիայում և, շրջապատուած իր անձնուէր ընկերներով, փառաւորապէս մուտք գործեց պարլամենտը, ուր Իրլանդիայի «անթագակիր թագաւորը» կրկին գրաւեց իր տեղն ու իր զիրքը: Շուտով յայտնվեց, որ նախ քան Պարնէլլին ազատելը Գլադստօնը առանձին լիազօրների միջոցով ունեցել է նրա հետ երկար ու ձիգ բանակցութիւններ ապագայ գործունէութեան մասին: Այդ բանակցութիւնները վերջացել էին երկու կողմերի մէջ կապած առանձին պայմանագրով, որը յայտնի եղաւ «Կիլմինգամի դաշնագիր» անունով: Այդ դաշնագրի գորութեամբ Գլադստօնը պարտաւորվում էր վերջ տալ Իրլանդիայում տիրապետող քաղաքական խիստ սիստեմին, բռնի (репрессивный) ըէժիմին, իսկ Պարնէլլը յանձն էր առնում գործ զնել իր ժողովրդականութիւնն ու ազդեցութիւնը Իրլանդիայում ներքին խաղաղութիւնը վերականգնելու համար: Կառավարութեան նոր քաղաքականութեան բարերար հետևանքներն իրանց երկար սպասել չէին տալ, եթէ այդ միջոցում Իրլանդիայում

չըպատահէր մի անսպասելի դէպք. անյայտ չարագործները Դուբլինի Ֆէնիկս-պարկ այգիում սպանեցին Իրլանդիայի նոր ստաս-սէկրէտար Յօրստէրի յաջորդ Կաւէնդիշին և նրա աշխատակից Բօրկին: Այդ դէպքը պատահեց 1882 թ. մայիսի 4-ին, Պարնէլլի ազատութիւնից երկու օր անցած: Ընդհանուր գայրոյթը մեծ էր. ևս առաւել գրգռված էր Պարնէլլը, որը Դիլլօնի ու Դէվիտտի հետ միասին հրատարակեց մի հրովարտակ Իրլանդիայի ժողովրդին ուղղած: Այդ հրովարտակի մէջ նա յայտնում էր իրլանդացիներին իր խորին վիշտը խաչտառակ ու ցաւալի դէպքի առիթով: Մայիսի 8-ին պարլամենտում նա խօսք խնդրեց և իր ճառի մէջ անողորմ դատափետելով անկոչ աստիճաններին, զայրացած նկատեց, որ նրանք այժմեան պայմանների մէջ միայն արգելքներ են ստեղծում սուրբ գործի վերջնական յաղթանակի համար: Պարնէլլի անկեղծ ճառից յետոյ անգլիացիներին, գոնէ պարլամենտում, շատ քիչերն էին մտածում, որևէ ծանր մեղադրանք բարձել տեղի ունեցած դէպքի պատճառով իրլանդական պարլամենտական կուսակցութեան վրայ: Բայց կառավարութիւնը, հասարակաց կարծիքին զիջանելով, ստիպված եղաւ պարլամենտին ներկայացնել մի նոր խիստ օրինագիծ Իրլանդիայի վերաբերմամբ, որի քննութեան ժամանակ Պարնէլլն իր իրլանդացիներով կրկին դիմեց անողորմ «օբստրուկցիօնիզմի» օգնութեան օրինագիծը տապալելու համար, մի քանի օր ու

գիշեր մաքառելով նրա դէմ 'ի նշան անպայման բողոքի, նա թողեց դահլիճն ու հեռացաւ իր բոլոր ընկերների հետ միասին:

Չը նայած, որ նոր օրինագիծն ընդունվեց, որով և օրէնքի ոյժ ստացաւ, Գլադստօնի կառավարութիւնը այնուամենայնիւ չը թողեց իր մտադրութիւնը՝ փոխել իր նախկին քաղաքականութիւնը դէպի Իրլանդիան ու դիմել նոր, աւելի մարդասէր սխտեմի: Կառավարութեան այդ նոր ընթացքը շուտով ակներև եղաւ, երբ նա առաջարկեց պարլամենտին իր խոստացած օրինագիծը Իրլանդիայի երկրագործների ապառիկներին վերաբերեալ: Այդ օրինագրծի քննադատութեան ժամանակ Պարնէլլը մեծ աջակցութիւն ցոյց տուեց Գլադստօնի կառավարութեան, որով և նպաստեց օրինագրծի ընդունելութեան:

Գլադստօնեան պարլամենտի հետևեալ նստաշրջանը (1883 թ.) աչքի չէ ընկնում իրլանդական հարցի վերաբերեալ նշանաւոր դէպքերով, բայց չը նայած դրան քիչ-քիչ պարզվեց, որ ազատամիտ Գլադստօնեան կուսակցութիւնը մտադիր է այդ հարցը իր քաղաքական ծրագրի հիմնական կէտը դարձնել և դասել հերթական ամենակարևոր խնդիրների շարքում: Ազատամիտ կուսակցութեան նշանաւոր անդամներից մինը, Ջէմս Բրայսը, որը պարլամենտի անդամ ընտրվեց 1880 թ., իր «Ինչպէս մենք հօմրուլականներ դարձանք» գրվածքով շատ պարզ կերպով նկարագրում է յեղափոխութեան այն շրջանը, որով անցաւ Գլադ-

ստօնի ազատամիտ կուսակցութիւնը իր առաջնորդի երկրորդ մինիստրութեան ժամանակ (1880—1886 թ.), և որի ընթացքում նա հիմնաւորապէս փոխեց իր քաղաքականութիւնը իրլանդական հարցի և նրա իրազօրծման միջոցների վերաբերմամբ: Ազատամիտ կուսակցութեան հայեացքները փոխվեցան աստիճանաբար, այլ ոչ թէ յանկարծակի, գլխաւորապէս շնորհիւ այն եղելութիւնների, որոնցով այնքան հարուստ է 1880—1885 թ.թ. պարլամենտի գործունէութիւնը, որի իւրաքանչիւր նստաշրջանը նորանոր հարուածներ էր տալիս ազատամիտներին՝ մի քաջ էլ առաջ շարժվելով դէպի Պարնէլլի ցոյց տուած նպատակը: Ձէմս Բրայսը հետևեալ կերպով է ձևակերպում այն պատճառներն ու եղելութիւնները, որոնք տապալեցին ազատամիտ կուսակցութեան նախկին քաղաքականութիւնը դէպի Իրլանդիան և սկիզբ դրին նորի: 1) 1881 ու 1882 թուականների յատուկ խիստ օրէնքների գործադրութիւնը, զայրույթ յարուցանելով իրլանդացիների մէջ և զարգացնելով անպատկառութիւն դէպի օրէնքն առհասարակ, պարզեց բոլորին այն ահագին վրնասն ու վտանգը, որն սպառնում էր պետութեան ներքին խաղաղութեան այդպիսի միջոցների գործադրութիւնը: 1881 թ. յատուկ օրէնքի գործադրութեան տխուր հետևանքներն ապացուցին, որ բացարձակ շարժման հալածումն առաջ է բերում գաղտնի շարժում, որն աւելի

վտանգաւոր ու կորստաբեր է: 1882 թ. օրէնքի գործադրութեան հետևանքները ցոյց տուին, որ մինչև անգամ չափաւոր կառավարութիւնը, որպիսին էր լորդ Սպէնսէրի փոխարքայութիւնը, անգոր է խաղաղութիւն պահպանել Իրլանդիայում, քանի դեռ գոյութիւն ունէր նախկին խիստ օրէնքների գործադրութիւնը: 2) 1880—1881 թ.թ. լորդերի ժողովի գործունէութիւնը, որը միշտ նուիրված էր Իրլանդիային վերաբերեալ ըէֆօրմների տապալման, համոզեց ազատամիտներին, որ անգլիական պարլամենտը անկարող է բարեխղճութեամբ վերաբերվել իրլանդական գործերին լորդերի ժողովի այժմեան կազմակերպութեան շնորհիւ: 3) Պարլամենտական գործավարութեան ձևերի անբաւարարութիւնն ու նրանց ուղղելու անաջող փորձերը ցոյց տուին ամենքին, որ կանոնաւոր պարլամենտական պարապմունքները համարեա անհնարին են այն ժամանակ, երբ ժողովի անդամների մի մասն ամեն կերպ աշխատում է խանգարել ու անպտղաբեր դարձնել այդ պարապմունքները, այսինքն դիմում է օբստրուկցիօնիզմի: Համայնքների ժողովի աշխատանքները պետութեան բոլոր երեք մասերի համար արդիւնաւետ դարձնելու նպատակով հարկաւոր էր Իրլանդիայի պատգամաւորներին կամ հաշտեցնել պարլամենտի հետ, կամ բոլորովին արտաքսել նրանց այնտեղից: Արտաքսելն անհնարին է, իսկ հաշտեցնելը հնարաւոր. պէտք է կատարել նրանց պա-

հանջներն ու լիովին բաւարարութիւն տալ իրլանդացիներին: 4) Իրլանդիային վերաբերեալ օրինագծերի քննադատութիւնը պարզեց շատերի համար, որ պարլամենտի անգլիացի անդամները շատ քիչ են ճանաչում Իրլանդիան: Ազատամիտները զգացին, որ նրանք խաւարի մէջ խարխափելով են օրէնքներ քննում Իրլանդիայի համար, որի տնտեսական և սօցիալական դրութիւնը նրանք չէին հասկանում, ուր անգլիական օգի կրող օրէնքները սաստկացնում էին միայն ընդհանուր զայրոյթը, քանի որ երկրի ազգաբնակչութիւնը թէ իր ձրգտումներով և թէ իրան օգևորող զգացմունքներով բոլորովին օտար է անգլիացիներին: Փորձը համոզեց ազատամիտներին, որ անգլիական պարլամենտի քաղաքականութիւնը դէպի Իրլանդիան անբաւարար է և երկար շարունակվել չի կարող. որ Իրլանդիայի դժգոհութիւնը շատ իրաւացի է. որ գործադրվող խիստ, բռնի օրէնքները, օտարացնելով Իրլանդիան, կարող են պատճառ լինել ոչ թէ միայն միութեան ոչնչացման, այլ և Իրլանդիայի կատարեալ անջատման ընդհանուր պետութիւնից, Անգլիայից. միակ միջոցը սպառնացող վտանգի առաջն առնելու համար կայանում է նրանում, որ Իրլանդիային առանձին պարլամենտ ունենալու իրաւունք շնորհվի:

Ահա ինչ նշանաւոր եզրակացութիւնների եկաւ անգլիական ազատամիտ կուսակցութիւնը Քլադսոնի երկրորդ միսիստրութեան ժամանակ: Այդ

բոլորը մասամբ, եթէ չասենք գլխաւորապէս, հետեւանք էր Պարնէլլի եռանդուն գործունէութեան: Վիթխարին, իր ասպարէզ դուրս գալու օրից սկսած անողորմ կոիւ մղելով պարլամենտի դէմ, կարողացաւ խորտակել նրա ոյժն ու յամառութիւնը և, իրլանդական դատը գնելով ամբողջ Անգլիայի առաջ, հասկացրեց նրան, որ այդ դատը մի առաջնակարգ այրող հարց է, որն սպասում է շուտափոյթ և բարեխիղճ վճռի, — վճռի, որ կարևոր է ոչ թէ միայն Իրլանդիայի, այլ և Անգլիայի ամենաէական շահերի համար: Դրա մէջ է կայանում Պարնէլլի յաղթանակը, որն իրաւունք է տալիս նրան նշանաւոր տեղ բռնելու ոչ թէ իր հայրենիքի, այլ և Անգլիայի ու նրա հետ ամբողջ մարդկութեան պատմութեան մէջ:

### XV.

1886 թ. Պարնէլլն ու իր կուսակցութիւնը հասան մասամբ իրանց ամենամեծ նպատակին: Այդ նպատակը թէև չիրագործվեց վերջնականապէս, բայց այնուամենայնիւ Իրլանդիայի դատը մի այնպիսի ընթացք ստացաւ, որին սկսած Օ'Կոննէլի ժամանակներից ձգտում էր իրլանդական կուսակցութիւնը: Այդ թուականին Անգլիական կառավարութիւնը ինքը ձեռք առաւ Իրլանդիայի դատի պաշտպանութիւնը, որի իրագործումը շինեց իր, ազատամիտ կուսակցութեան, լինել թէ չըլինելու հարցը: Սահմանողական երկիրներում ա-

ուաջնակարգ հարցերի իրագործումն իւրաքանչիւր կառավարութիւն կապում է իր գոյութեան հետ և շնորհիւ միայն այդ ընթացքի կարողանում է հասնել իր վերջնական նպատակին:

1886 թ. Գլադստոնի ազատամիտ կառավարութիւնը հէնց այդպէս վարվեց իրլանդական հարցի հետ. այդ էր Պարնէլլի և նրա ընկերների ամենամօտ նպատակը: Կառավարութիւնը, նախքան պարլամենտին դիմելը, մի ոչ-պաշտօնական դաշը կապեց Պարնէլլի հետ, որով վերջինս, հաւանութիւն տալով Գլադստոնի նախագծած օրինագծին, պարտաւորվում էր իր բոլոր իրլանդացիների հետ միասին պաշտպանել նրան պարլամենտում: Վերջապէս 1886 թ. մարտին Գլադստոնն առաջին անգամ առաջարկեց համայնքների ժողովին իր հրաչակաւոր «Հօմրուլ» (Hom-Rule) բիլլը, որով կառավարութիւնը պահանջում էր Մեծ Բրիտանիայի պարլամենտից շնորհել Իրլանդիային սեփական պարլամենտ և տեղական կառավարութիւն:

Գլադստոնի այդ օրինագիծը ահագին փոթորիկ առաջ բերեց նրա հակառակորդների շարքերում: Գլադստոնն ու Պարնէլլը իրանց անվերջ կրակոտ ճառերով ամբողջ ժամերով հեղեղում էին պալատը, թնդում, տատանվում ու դղրդում էր վերջինս փոթորկալից ծովի նման: Պահպանողականները ասպարէզ դուրս բերին իրանց ամենալաւ ոյժերը: Վերջիններիս յաջողվեց համոզել ազատամիտ կուսակցութեան մի մասին, որ Գլա-

դրստօնի օրինագիծն սպառնում է Մեծ Բրիտանիայի ամբողջութեան, հետեւապէս և վտանգի է ենթարկում նրա հզօրութիւնը, միջազգային դերը, տնտեսական ոյժերը, փառքը, — մի խօսքով այն բոլորը, ինչ որ ձեռք է բերել Անգլիան դարերի ընթացքում, չը խնայելով ոչ արիւն և ոչ նիւթական միջոցներ: Այդ անգլիացիների ամենաքնքոյշ «դամարները» շօշափող, բայց, ինչպէս յետոյ կը տեսնենք, բոլորովին անհիմն պատճառաբանութիւնները բաւական էին՝ իրարանցում առաջ բերելու Գլադստոնի ազատամիտ կուսակցութեան մէջ. այդ իրարանցումը նկատելի եղաւ օրինագրծի հէնց առաջին ընթերցումից յետոյ: Գլադստոնից յետ նահանջեցին մօտ 60—70 հոգի ազատամիտներ, որոնք լօրդ Հարտինգտօնի (այժմեան դուքս Ռէվօնշիրի) և Չեմբերլէնի ղեկավարութեամբ սկսեցին բացարձակ մաքառել Հօմրուլի դէմ: Հէնց դրանց շնորհով համայնքների պալատը 343 ձայնով ընդդէմ 313 մերժեց Գլադստոնի հրաչակաւոր օրինագիծը: Սակայն Գլադստոնը, չը նայած այդ անաջողութեան, փախուստ չի տուեց կուլի դաշտից. նա իսկոյն արձակեց համայնքների ժողովը ու դիմեց ուղղակի ժողովրդին նրա կարծիքն իմանալու ընդհանուր ընտրութիւնների միջոցով: Երկու հակառակ կուսակցութիւններն սկսեցին ժողովրդի շրջաններում կատաղի ագիտացիա: Նրանց հռետօրները թէ Անգլիայում և թէ Իրլանդիայում օր ու գիշեր գործում էին, երկրի զանազան կենտ-

րօններում կազմելով բազմամարդ միախնդներ: Անգլիայում և Շոտլանդիայում գործում էին Գլազգոսոնը, Մորլէյը, Հարտինգտոնը, Չեմբերլէնը և մարկիզ Սօլիսբերին իրանց կուսակիցներով, իսկ Իրլանդիայում Պարնէլլն իր իրլանդացիներով: Ենտրհիւ Գլազգոսոնից անջատված ազատամիտների՝ պահպանողականները լաղթանակը տարան . ընդհանուր ընտրութիւնները Գլազգոսոնին մեծամասնութիւն չը տուին. նա ստիպված եղաւ թողնել կառավարութեան ղեկը, որն անցաւ նրա հակառակօրդ պահպանողական լօրդ Սօլիսբերիի ձեռքը: Բայց գրանով Իրլանդիայի դատը չը խորտակվեց. ազատամիտ կուսակցութիւնը, իր մեծ առաջնորդի հետ թողնելով կառավարչական ասպարէզը, յետո՛ւ չը նահանջեց իր մեծ նպատակից, Հօմրուլից: Գլազգոսոնը իր ծրագրի ճակատին գրօշմեց «Home-Rule» (Հօմրուլ) բառը: Ազատամիտները ինչպէս և իրլանդացիները, այլ կերպ սկսվեցին կոչվել Հօմրուլականներ: Մեծ ծերունի Գլազգոսոնը մի տեսակ մարմնացում դարձաւ նրանց ձգտումների, ուստի Հօմրուլականներն սկսեցին կոչվել նաև զլազուսօնեաններ: Նրանք սկսեցին մեծ եռանդով գրծել ապագայ ընդհանուր ընտրութիւնների համար հող պատրաստելու նպատակով: 1886 թ. ընդհանուր ընտրութիւններն իսկապէս թույլ մեծամասնութիւն տուին պահպանողական կուսակցութեան, որն ընդամենը ստացել էր 1,420,000 ձայն, Գլազգոսոնի և Պարնէլլի կուսակցութիւն-

ները միասին ստացել էին 1,344,000 ձայն, տարբերութիւն կազմող 76000 ձայն վաստակել էին պահպանողականները իրենց դաշնակից և Գլազգոսոնից անջատված ազատամիտ փոքրիկ խմբի հետ միասին: Հօմրուլականներն իրենց բոլոր ոյժերը լարեցին այդ համեմատաբար չնչին թւերը ոչնչացնելու համար, որի հետեւանքը պիտի լինէր Սօլիսբերիի պահպանողական կառավարութեան տապալումն ու Գլազգոսոնի կրկին գործի գլուխ անցնելը:

### XVI.

1886—87 թուականները Իրլանդիայի համար որ և է նշանաւոր հետեւանքներ չունեցան: Պահպանողական կառավարութիւնը իր ժամանակի և ոյժերի մեծ մասը նուիրում էր արտաքին քաղաքականութեան, որի ղեկը լօրդ Սօլիսբերիի ձեռքին էր: Ներքին գործերի շրջանում ոչ մի առաջնակարգ բարեփոխում չեղաւ: Գլազգոսոնը իր ժամանակի մեծ մասը անց էր կացնում իր սիրելի Հաւարդէնում, ուր նա անձնատուր էր լինում գրական գործունէութեան, իր սիրելի Հոմերոսին, թարգմանում էր Հօրացիօյի և այլ նշանաւոր կլասիկների գրուածքները, գիւղական եկեղեցում կարդում էր Աստուածաշունչը, մասնակցում էր իր համագիւղացիների համայնական գործերին. մտաւոր պարապմունքները փոխարինում էր Փիզիքականով, Հաւարդէնի անտառում (պարկում)

կացինը ձեռքին փայտ էր կոտորում, երբեմն ա-  
 հագին ծառեր տապալելով գետին: Երեկոյեան ժա-  
 մերին առանձնացած իր գրադարանում նա մեծ  
 ուշադրութեամբ աչքի էր անցնում օրուայ լրա-  
 գիրները, որոնք միշտ առատ նիւթ էին տալիս  
 նրան քննադատելու պահանջողական կառավարու-  
 թեան անգոյն ու անբովանդակ գործունէութիւնը:  
 Պարլամենտի նստաշրջանի ժամանակ երբեմն երե-  
 ւում էր նա Լօնդօնում, կամ մասնակցում էր զա-  
 նազան քաղաքներում կազմվող միտինգներին: Կա-  
 ռավարութիւնը դեռ բաւականին ուժեղ էր, ուս-  
 տի նրան տապալելու համար Գլադստօնը փորձեր  
 չէր անում. նա իր գործունէութիւնը սահմանա-  
 փակում էր կառավարութեան գործունէութեան  
 ուսումնասիրութեամբ և իրլանդական պրօպագան-  
 ղայով:

Պարնէլլն այդ ժամանակ թէև նախկին եռան-  
 դով շարունակում էր մասնակցել պարլամենտա-  
 կան նիստերին, բայց անգոր լինելով տապալել  
 մարկիզ Սալիսբերիի կառավարութիւնը կամ ստի-  
 պել նրան որ և է վճռական քայլ անել յօգուտ  
 Իրլանդիայի, նա աւելի ուշադրութիւն էր դարձ-  
 նում Իրլանդիայում ու Անգլիայում գումարվող  
 հասարակական ժողովների վրայ, ուր նա անխնայ  
 քննադատելով կառավարութեան գործունէութիւ-  
 նը, յօյս ունէր այդպիսով հող պատրաստել ապա-  
 գայ ընդհանուր ընտրութիւնների համար: Պար-  
 նէլլն իր ընկերներից երբեմն ուղարկում էր Հիւ-

սիսային Ամերիկա, ուր նրանք այնտեղ բնակվող  
 իրլանդացիների շրջաններում քարոզում էին ազ-  
 գային անկախութեան զաղափարը և միշտ հրա-  
 ւիրում էին նրանց մասնակից լինել ընդհանուր  
 շարժման: Այդպիսի պրօպագանդաների հետեւանք-  
 ները լինում էին առատ նիւթական գոհաբերու-  
 թիւններ, որոնք անսպառ աղբիւր էին ծառայում  
 «Իրլանդական Փօնդի» համար: Վերջինիս միջոց  
 ները, ծնունդ ստանալով Օ'Կոննէլի ժամանակնե-  
 րը, 80-ական թուականների վերջերին, շնորհիւ  
 գլխաւորապէս Պարնէլլի եռանդուն գործունէու-  
 թեան, հասան մի քանի միլլիօնի, որոնք պահ-  
 պանվում էին Պարիզի բանկերում: «Իրլանդական  
 Փօնդը» երկու նպատակի պիտի ծառայէր. նախ՝  
 օգնութիւն հասցնել հողագուրկ, սնանկացած,  
 քաղցած ու երկրից արտաքսված երկրագործ-  
 ներին, երկրորդ՝ ծառայել ազգային գործի քա-  
 ղաքական նպատակներին, Իրլանդիայի ամենա-  
 գլխաւոր պահանջի իրագործման: Այդ նպատակով  
 հիմնվում էին լրագիրներ, հրատարակվում էին  
 բրօշիւրներ, կազմվում էին բազմամարդ միտինգ-  
 ներ, որոնք մեծ զարկ էին տալիս ընդհանուր շարժ-  
 ման: Իրլանդիայի ազգային ֆօնդը մեծ ոյժ  
 էր Պարնէլլի և նրա աշխատակիցների ձեռքում:  
 Այդ լաւ էր հասկանում իւրաքանչիւր իրլանդացի  
 և այդ պատճառով չէր խնայում իր լուծման գցել  
 ազգային սուրբ գանձանակը, որը ժողովվում էր  
 ո՛չ թէ վանքեր, անապատներ վերաշինելու կամ նը-

րանց պարտքերը վճարելու համար, այլ անկախութեան և ազատութեան սուրբ գործի համար:

Վրայ հասաւ 1888 թ. պարլամենտական նրատաշրջանը: Գահական ճառի մէջ որ և է նշանաւոր վերանորոգութեան մասին դարձեալ ոչ մի խօսք չը կար: Այդ բանն առիթ տուեց հօմրուլականներին բացարձակ արշաւանք սկսել Սալիսթիսթի պահպանողական կուսակցութեան դէմ: Նրանք, արդէն պատրաստ հող ունենալով հասարակական շրջաններում, սկսեցին մեղադրել կառավարութիւնը, որ նա, ամբողջ երկու տարի կառավարելով երկիրը, իսկապէս ոչինչ չէ արել յօգուտ երկրի ներքին գործերի, ոչ մի չափաւոր բաւարարութիւն անգամ չէ տուել իրլանդացիների արդարացի պահանջներին, ամեն բան ընկած է երեսի վրայ, արտաքին քաղաքականութիւնը մի լոկ փալլ է, որով նա աշխատում է թող փրչել ժողովրդի աչքերին, այն ինչ վերջինիս կենսական պէտքերն այդ չեն պահանջում և այլն: Հօմրուլականների հետ գլուխ բարձրացրին և բանւորները, որոնք սկսեցին տնտեսական վերանորոգութիւններ պահանջել: Մարկիզ Սալիսթիսթի կառավարութիւնը այդ նոր շարժումը չը տատանվեց վերագրել իրլանդացիների ինտրիգաներին և իր գործունէութիւնն սկսեց նրանով, որ Իրլանդիայի համար մի քանի նոր խիստ օրինազօծ անաջարկեց պարլամենտին: Համայնքների և լորդերի ժողովները հաճութեամբ ընդունեցին այդ օրինա-

զօծեր, որոնք ոչ թ տուին Իրլանդիայի գործերի կառավարիչ Բալֆուրին, լորդ Սալիսթիսթի մօտիկ ազգականին ու աշխատակցին, անխնայ գործ դրնել «Կանաչ կղզում» իր փայփայած սիստեմը: Պարնէլլն ու Գլադստօնը Սալիսթիսթի կառավարութիւնից լաւ բան Իրլանդիայի համար բոլորովին չէին սպասում. բայց այդ անպէտք ընթացքը այնուամենայնիւ նրանց մեծ զարմանք պատճառեց և նոր գէնք տուեց նրանց ձեռքը: Հօմրուլական կուսակցութիւնը բացարձակ կռիւ սկսեց պահպանողականների դէմ: Նրա ջանքերն անհետեւանք չը մնացին. 1888 թ. տեղի ունեցան մեծ թուով մասնաւոր ընտրութիւններ, որոնք վերջացան գլխաւորապէս յօգուտ հօմրուլականների: Պահպանողականները և նրանց դաշնակից ազատամիտ—անջատվածներն սկսեցին այս ու այն ընտրողական շրջանում պարտութիւն կրել: Այդ երեւոյթները պարզ ապացոյց էին, որ հասարակաց կարծիքը թեքվում է Մեծ Ծերունու, Գլադստօնի, կողմը և այդպիսով չի համակրում կառավարութեան բռնած ընթացքը: Վերջինս սակայն լեռ չէր դառնում իր այդ ընթացքից և միշտ ծուռ ու մուռ ճանապարհներ էր փնտռում իր գլխաւոր հակառակորդներին տապալելու համար: Այդ հակառակորդներից կառավարութեան համար ամենավտանգաւորը Պարնէլլն էր, ուստի պահպանողականները դիմեցին ամենաքստմնելի միջոցների նրան քաղաքականապէս ոչնչացնելու համար: Այդ պաշտօնը

յանձն առաւ տօրինների օրգան յայտնի «Times» լրագիրը, որը 1888 թ. կիսից մի մեծ արշաւանք սկսեց Պարնէլլի դէմ, իր անվերջ յօդուածների ճակատին դրօշմելով «Պարնէլլիզմ և յանցանք» վերնագիրը: Իր այդ յօդուածների մէջ «Times»-ը առանց քաշուելու մեղադրում էր Պարնէլլին մի շարք քաղաքական ու քրէական յանցանքների մէջ, ինչպէս՝ մարդասպանութեան, դաւադրութեան, ֆէնիական աւերիչ ձգտումների մէջ և այլն: Նշանաւոր լրագրի այդ անգուսպ յօդուածները չէին կարող իրանց վրայ չը գրաւել հասարակութեան ու պարլամենտի ուշադրութիւնը: Կառավարութիւնը կողմնակի կերպով աջակցում էր այդ արշաւանքին և սպասում էր յարմար առթի՝ Պարնէլլին բանտարկելու և դատի ենթարկելու համար: Երբ «Times» լրագրի յանդգնութիւնը հասաւ այն աստիճանի, որ յայտարարեց, թէ իր ձեռքում ունի պերճախօս դօկումենտներ, որոնցով նա կարող է դատարանում հաստատել իր բոլոր մեղադրանքները, այն ժամանակ Պարնէլլն ինքը պահանջեց, որ իր գործն առաջարկեն դատարանի քննութեան: Կառավարութիւնը մեծ ուրախութեամբ կատարեց այդ պահանջը: 1889 թ. սկզբներին լօրդերի ժողովի անդամներից կազմակերպվեց բարձրագոյն դատաստանական տոեան, որին յանձնվեց Պարնէլլի գործի քննութիւնը: Պահպանողականներից շատերն իրենց ուրախութիւնը չէին ծածկում, հաւատացած լինելով, որ հասել են իրենց

նպատակին: Գործի հէնց սկզբում նրանք յաճախ կրկնում էին. «Իրլանդիայի անթագալիք թագաւորն արագ քայլերով մօտենում է Վատերլօյին»: Բայց նրանք չարաչար սխալվեցին իրանց գուշակութիւնների մէջ: Պարնէլլի հուշակաւոր գործը շարունակվեց մի քանի ամիս: «Times»-ը լարեց իր բոլոր ոյժերը Պարնէլլին տապալելու համար: Վերջինս, անվաչել համարելով իր համար իջնել Օլիմպիայի գագաթից և անձամբ դատափետել իր ողորմելի հակառակորդներին, յանձնեց իր գործի պաշտպանութիւնը յայտնի իրաւաբան Բօսսէլին, որը հեշտութեամբ պարզեց նրա ստոր թշնամիների խօսկական նպատակները և գործ դրած զգուշելի միջոցները: Գործի մանրակրկիտ քննութիւնը ցոյց տուեց, որ «Times»-ի ներկայացրած դօկումենտները բոլորն էլ կեղծ են, կաշառքների արդիւնք են, որ նրանց հեղինակել է մի ոմն Պիգօտ՝ մի անյայտ աֆերիստ: Այդ բոլորը վերջնականապէս ապացուցվեց Պիգօտի փախուստով Իսպանիա, նրա այնտեղ գործած անձնասպանութիւնով ու մի երկտող նամակով, որի մէջ նա խոստովանում էր իր յանցանքները: Այդ անօրինակ դէպքի հետևանքըն եղաւ Պարնէլլի անպայման արդարացումը, որը պաշտօնապէս յայտարարվեց 1889 թ. վերջերին ՚ի լուր ամբողջ աշխարհի և մեծ իրարանցում առաջ բերեց թէ Անգլիայում ու թէ Իրլանդիայում: Պահպանողականներն ու Սալիսբիլիի կառավարութիւնը մեծ բարոյական պարտութիւն կրե-

ցին: Պատահեց մի անօրինակ դէպք. պահպանողական կառավարութիւնն անբուժելի վերք ստացաւ իր սեփական բանակից: 1890 թ. նստաշրջանի բացվելուն պէս պահպանողականների յայտնի պարագլուխներից մինը, լորդ Բանդօլֆ Չորչիլը, համայնքների ժողովում մի որոտալից ճառ արտասանեց Սալիսբերիի կառավարութեան դէմ, որի մէջ իր անկեղծ-համակրութիւնը յայտնելով Պարնէլլին, անխնայ դատափետեց այն ստոր դերը, որն իրեն յատկացրել էր կառավարութիւնը Պարնէլլի գործում և որն առհասարակ շատ անպատուաբեր էր Մեծ Բրիտանիայի ղեկավարների համար: Իր հռչակաւոր ճառը Չորչիլը վերջացրեց հետևեալ խօսքերով. «Ահա երի լեռը մոռկ ծնեց, և ո՞ւմ ձեռքում էիք դուք խաղալիք, — Պիգօտի, Պիգօտի, Պիգօտի...» Հետտորի ամբողջ ճառը, մանաւանդ վերջին խօսքերը, արժանացան հօմբուլականների բուռը ծափահարութեան, այն ինչ պահպանողականներն իրենց մեռելաչին լուսթիւնը չընդհատեցին մինչև վերջը:

### XVII.

Լորդ Չորչիլի ճառը մեծ զարկ տուեց այն հակապահպանողական շարժման, որն սկսած 1888 թ. նկատվում էր երկրի բոլոր անկիւններում. կառավարութիւնը շարունակում էր պարտութիւններ կրել մասնաւոր ընտրութիւնների ժամանակ: Ազատ միտներն սկսեցին պահանջել համայնքների ժողովի լուծումն ու ընդհանուր ընտրութիւններ,

ժողովրդի իսկական տրամադրութիւնն իմանալու համար: Գլադստօնը թէ պարլամենտում և թէ պարլամենտից դուրս սկսեց մեծ եռանդով գործել: Իր բազմաթիւ ճառերի մէջ նա բացի կառավարութեան ներքին քաղաքականութիւնը քննելուց, սկսեց դատափետել նաև նրա արտաքին քաղաքականութիւնը, նրա բռնած գիրքը դէպի արևելեան մասնաւորապէս դէպի հայոց հարցը: Վերջինիս վերաբերմամբ նա իր ճառում ասաց. «Այն, որ մեր աչքի առաջ կատարվում է Փոքր Ասիայի խորքերում, Հայաստանում, պատիւ չէ բերում քաղաքակիրթ Եւրոպային և վիրաւորում է իւրաքանչիւր իսկական քրիստոնեայի մարդասէր զգացմունքը: Կառավարութեան անտարբերութիւնը դէպի հայերի դրութիւնը ևս առաւել պատիւ չէ բերում Անգլիային, որը Տաճկաստանի քրիստոնեաների դրութիւնը թեթևացնելու համար յատուկ պարտաւորութիւններ ունի իր վրայ վերցրած»: Գլադստօնի ամեն մի նոր քայլը սարսափ էր տարածում կառավարութեան վրայ, որը Գլադստօնի զօրեղանալու մէջ իր սեփական անկումն էր տեսնում: 1890 թ. ամառը Հաւարդէնում տեսակցութիւն կայացաւ Գլադստօնի ու Պարնէլլի մէջ: Տեսակցութեան ժամանակ Գլադստօնը ցոյց տուեց Պարնէլլին Հօմբուլի նախագիծը և ծանօթացրեց նրան այն նոր սկզբունքների հետ, որոնք պիտի իբրև հիմնաքար ծառայէին այդ հռչակաւոր օրինագծի համար: Պարնէլլն ընդունեց օրինագիծն ամբողջ-

ընթացումը, հաւանութիւն տալով Գլադստօնի բուր Կայսերացիներին: Նրանց մէջ կայացաւ մի համաձայնութիւն ընդհանուր ընտրութիւնների ժամանակ գործելու եղանակների մասին: Հօմբուլականները յոյս ունէին այդ ընտրութիւնները շուտով հնարաւոր դարձնել: Այդ ժամանակ, 1890 թ. ամառը, պահպանողականների բանակից սկսեցին մի քանի կասկածելի լուրեր տարածվել Պարնէլլի մասին: Այդ լուրերը շուտով կատարեալ արշաւանքի փոխվեցան, ուղղված ոչ թէ Պարնէլլի, իբրև քաղաքական գործիչի, այլ Պարնէլլի, իբրև մասնաւոր մարդու դէմ: Գտնվեց մի իրլանդացի, ոմն Օ'Եի, որն իր գործակալների միջոցով սկսեց տարածել լուրեր, իբրև թէ Պարնէլլը խաբէութեամբ զայթակղել է նրա կնոջը, ոտի տակ է տուել նրա ընտանեկան պատիւն իբրև մի անբարոյական մարդ, որի համար ոչ մի սրբութիւն գոյութիւն չունի: Պահպանողական կեղծաւորներն սկսեցին աւանց քաշվելու ցեխ շարտել Պարնէլլի վրայ, պահանջել, որ նա հեռանայ քաղաքական ասպարէզից, իբրև բարոյականութեան դէմ մեղանջող մի անարժան մարդ: Պարնէլլն այդպիսիներին միայն արհամարհում էր և չէր ստորանում նրանց հետ բանակուիլ սկսելու իր մասնաւոր կեանքի վերաբերմամբ: Ազատամիտ թերթերը լուրջ նշանակութիւն չէին տալիս այդ գործին, որը պարզվել կարող էր միայն դատարանում: 1890 թ. աշնանը Օ'Եին դիմեց դատարան, ապահարզան պահանջելով իր կնոջից, ո-

րին նա մեղադրում էր ամուսնական անհաւատարմութեան մէջ: Պարնէլլն ու տիկին Օ'Եին ամենեւին չը ներկայացան դատարանին: Գործի քննութիւնը պարզեց, որ Օ'Եի ամուսիններն արդէն մի քանի տարի է, ինչ իրարից բաժանված ապրում են առանձին: Պարզվեց, որ տիկինը սիրում է «Իրլանդիայի անթագակիր թագաւորին» թողնելով իր անարժան ամուսնուն, որին միայն նիւթական շահերն ու դրամական հաշիւներն են միշտ կապելիս եղել իր կնոջ հետ. նա գնացել է սիրած տղամարդի յետևից: Գատարանը հիմնվելով այդ փաստերի վրայ, ապահարզան տուեց «Շի ամուսիններին և այդպիսով պարզաբանեց ամբողջ գործը: Պարնէլլի հակառակորդները հէնց այդ էին ցանկանում. նրանց ուրախութեանը չափ չը կար: Սկսեցին գոռալ, գոչել, որ Պարնէլլը, իբրև «անարժան» մարդ, անարժան է մեծ գործի և մի ամբողջ ժողովրդի ղեկավար լինելու, նա պիտի հեռանայ ասպարէզից ու ոչնչանայ, իբրև քաղաքական գործիչ: Անգլիացիները իրանց կեղծ, առօրեայ կեանքի ու սալօնի պահանջներին յարմարեցրած «բարոյականութիւնը», երեսանց շիտակութիւնը վերաւորված էին համարում: Իրլանդիայում Պարնէլլի դէմ ձայն բարձրացրին կաթօլիկ փարիսեցիները, կեղծաւոր պատերները, որոնք առաջ էլ Պարնէլլի վրայ նայում էին, իբրև մի վտանգաւոր մարդու վրայ, որովհետև Պարնէլլը բողոքական «անաստուած» էր, ինչպէս բողոքական Կօշու-

ար Ունգարիայի կաթօլիկ պատէրների համար: Այդ միջոցին, 1890 թ. նոյեմբերի սկզբներին, բացվեց պարլամենտի աշնանային նստաշրջանը: Սկսած շարժումն արդէն վտանգաւոր կերպարանք էր ստացել. ազատամիտ—գլադստօնեանների և մինչև անգամ իրլանդական կուսակցութեան շրջաններում Պարնէլլին հակառակ հոսանք էր նըշմարվում: Նրանք ասում էին, որ հասարակական կարծիքը մեղմացնելու համար Պարնէլլը պիտի ժամանակաւորապէս գոնէ հեռանայ գործի ղեկավարութիւնից. բայց ոչ ոք վճռական քաջ չէր անում. սպասում էին, թէ ինչ կ'ստի Գլադստօնը: Վերջապէս նա յայտնեց իր կարծիքը: Առանց Պարնէլլի հետ տեսնվելու, նամակով դիմեց Պարնէլլի աշխատակից ծերունի Մակ-Կարտինին, որի մէջ, խոստովանելով իր անզօրութիւնը՝ ընդդիմանալ գոյութիւն ստացած հակապարնէլլական հոսանքին, խնդրում էր յայտնել «յարգելի ջէնտլմէնին», Պարնէլլին, որ նա չը նայած իր ազգին մատուցած մեծ ծառայութիւններին, մնալով ներկայ հանգամանքներում գործերի ղեկավար, կարող է վնասել իր փայլալայած մեծ նպատակների իրագործման, ուստի պիտի գոնէ ժամանակաւորապէս հեռանայ քաղաքական գործունէութեան ասպարէզից: Մակ-Կարտին Գլադստօնի նամակը կարգաց իրլանդական կուսակցութեան մասնաւոր ժողովում, որին նախագահում էր ինքը Պարնէլլը: Վերջինս, նախ և առաջ իր զժգոհութիւնը յայտնելով, որ

Գլադստօնը նախ քան այդ վճռին գալը իւր հետ չի խորհրդակցել, բացարձակ յայտնեց, որ մինչև վերջին շունչը չի թողնիլ իր ձեռքից Իրլանդիայի դրօշակը, որի վրայ գրած է. «անողորմ կռիւ Անգլիայի դէմ»: Նա ասաց, որ դաշը կապելով Գլադստօնի հետ, նա երբէք չի մտածել անգամ ենթարկվել նրա պահանջներին. նա, Պարնէլլը, առաջնորդ է ոչ թէ մի պարլամենտական կուսակցութեան, այլ համայն իրլանդական ազգի, որը վաղուշ պիտի դուրս խլի իր անկախութիւնը անգլիացիների ձեռքից, լինին նրանք պահպանողական, թէ ազատամիտ: Կռիւ մղողը պիտի աշխատի յաղթել, որ ինքը առաջարկի թշնամուն հաշտութեան պայմանները, այլ ոչ թէ իր դրօշակը խոնարհեցնի նրա առաջ ու վիզը ծռած զթուփիւն խնդրի: «Եթէ ազատամիտները,—ասաց Պարնէլլը,—սպառնում են լետ նահանջել Հօմրուլից, թող քաջութիւն ունենան անել այդ. այն ժամանակ մենք կը դիմենք տակտիկային, որի շնորհիւ Կիլմինգամի բանտում նստած զինաթափ արինք մեր թշնամիներին ու թելադրեցինք նրանց մեր պահանջները»: Սակայն Պարնէլլի կրակոտ ճառը նրա ցանկացած հետևանքները չունեցաւ. նրան հաւատարիմ մնաց կուսակցութեան փոքրամասնութիւնը, աւելի երիտասարդ մասը, այն ինչ մեծամասնութիւնն ընդունեց Գլադստօնի առաջարկութիւնը և, իրան ղեկավար ընտրելով Մակ-Կարտին, միացաւ Գլադստօնի հետ, որը պաշտօնապէս խոստացաւ նրան

Հօմրուլն իր կուսակցութեան ծրագրից չը հանել  
և շարունակել իրլանդական ագիտացիան:

### XVIII

Այդ օրուանից իրլանդական կուսակցութիւնը  
բաժանվեց երկու մասի—Պարնէլլական և Հակա-  
պարնէլլական կուսակցութիւններէ: Վերջիններս  
միացան ազատամիտների հետ, իսկ առաջինները,  
զբա մէջ վտանգաւոր չափաւորութիւն տեսնելով,  
կռիւ սկսեցին միացեալ գլադստօնեան ու հակա-  
պարնէլլական կուսակցութիւնների դէմ. Պարնէլլ  
անմիջապէս դիմեց իրլանդական ժողովրդին մի  
հրովարտակով, որի մէջ նա իր ազգի ուշադրու-  
թիւնն էր դարձնում այն հանգամանքի վրայ, որ  
իրլանդական պատգամաւորների Գլադստօնի առաջ  
խոնարհվելը մի կորստաբեր կօմպրօմիս է, որի  
հետեանքը պիտի լինի իր, Պարնէլլի, հաւանու-  
թիւնն ստացած Հօմրուլի նախագծի ազաւաղումն  
'ի վնաս Իրլանդիայի, որն այդպիսի պատուհասից  
ազատվելու համար պիտի շարունակի իր երկարա-  
մեայ սոսկալի կռիւը, այլ ոչ թէ գնայ այն ճանա-  
պարհով, որով մի ժամանակ ընթանում էր «շի-  
տակ» Բեօտորը, և որն այժմ ընտրել են իրանց  
համար նրա հակառակորդ հակապարնէլլականները:  
Իր հռչակաւոր հրովարտակը Պարնէլլը վերջացնում  
էր հետեւեալ խօսքերով. «Ես յուսով եմ, որ իր-  
լանդական ժողովուրդը իր ազգային դատն ու հա-

ւատարիմ առաջնորդներին չի շարտիլ բրիտանա-  
կան գալլի բերանը, որի սուր ժանիքներն այն-  
քան բազմաթիւ վերքեր են թողել նրա բազ-  
մաշարջար մարմնի վրայ և այժմ էլ նորանոր  
գոհների են սպասում»: Այդ հրովարտակը հրա-  
տարակելուց յետոյ, Պարնէլլն անձամբ գնաց Իր-  
լանդիա, ուր իսկոյն և եթ սկսվեց կատաղի կը-  
ռիւ պարնէլլականների ու հակապարնէլլականների  
մէջ: Իրլանդիայի արեւելեան ափում Պարնէլլին  
հանդիպեց ժողովրդի մի ահագին բազմութիւն,  
որն ուղղեկցեց իր «անթագակիր թագաւորին»  
մինչև Գուլբիւն մայրաքաղաքը: Պարնէլլի դէմ գըլ-  
խաւորապէս դործում էր կաթօլիկ հոգևորականու-  
թիւնը, որը մեծ ազդեցութիւն ունի Իրլանդիա-  
յում: Պատէրներն այնքան ճարպիկ մարդիկ էին,  
որ բացարձակ չէին ուրանում Պարնէլլի մատու-  
ցած մեծ ծառայութիւնները. «բայց,—ասում էին  
նրանք,—նա այժմ ուզում է իր բոլոր շինածը  
քանդել, միայն թէ ինքը չը կորչի. նա փառամոլ  
մարդ է և այժմ ուզում է ամեն բան գոհել իր  
այդ ախտին. նա իր դերը կատարել է արդէն, այժմ  
պիտի թողնի ասպարէզն ուրիշներին. նրա ղեկավա-  
րութիւնն այժմ վնասակար է և կարող է կորստա-  
բեր հետեանքներ ունենալ սուրբ գործի համար,  
որն այսօր-վաղը իր վճիռը պիտի ստանայ»: Այդ  
մտքով էին խօսում առհասարակ բոլոր հակապար-  
նէլլականները, և հասարակ ժողովուրդը, գլխաւո-  
րապէս երկրագործ դասակարգը, հաւատում էր

նրանց, այն ինչ երիտասարդութիւնը, ժողովրդի ինտելիգենտ մասը գնում էր Պարնէլլի լետեկից: Սկսած 1890 թ. վերջերից մինչև 1891 թ. ամառը Պարնէլլն անդադար չըջում էր Իրլանդիայում, թափանցելով երկրի ամենախուլ անկիւններն անգամ: Ամեն տեղ նրան հանդիպում էին ոգևորված ցոյցերով: Հակապարնէլլականներն ամեն կերպ աշխատում էին գցել Պարնէլլի ժողովրդականութիւնը, իրանց աջակից ունենալով պատէրներին: Նրանք չէին արհամարհում ոչ մի միջոց. Պարնէլլի կեանքի դէմ մի քանի փորձեր եղան, բայց անաջող:

1891 թ. յունվարին Կիլկէն քաղաքում չարագործներից մինը միտինգի ժամանակ մի բուռը կիր նետեց նրա աչքերին, որից Պարնէլլը բարեբաղդաբար զգալի կեղւում չըվնասվեց: Հակապարնէլլականներից ամենից կատաղին էր Դէվիտտը: Նույն Կիլկէնում Պարնէլլի հետ պատահած դժբաղդ դէպքից մի քանի օր առաջ բազմամարդ միտինգում խօսում էին Պարնէլլն ու Դէվիտտը, իրանց շուրջն ունենալով կողմնակիցների ահագին բազմութիւն: Միտինգը կազմված էր բաց երկնքի տակ, քաղաքային հրապարակի վրայ: Հոետորներին ամբիոնի տեղ ծառայում էին հասարակ գիւղական կառքեր, արաբաներ, քրոնց բարձրութիւնից նրանք անխնայ հարուածում էին միմեանց: Դա մի հոետորական տուրնիր էր, որը լիշեցնում էր միջնադարեան ասպետներին: Դէվիտտը, այլ ևս ուժ

չունենալով տանել Պարնէլլի հարուածները, թըռաւ իր կառքից և ահագին մահակը ձեռքին դիմեց դէպի Պարնէլլը: Սակայն նա չը հասաւ իր նպատակին. պարնէլլականները նրա առաջը կտրեցին. հակապարնէլլական ամբօխը յարձակվեց պարնէլլականների վրայ. սկսվեց կատաղի փայտեկոխ, որը քողաքի հրապարակից անցաւ փողոցները, ուր տեղեց մի քանի ժամ: Այդպիսի դէպքեր 1891 ու 1892 թ.թ. ընթացքում մի քանի անգամ պատահեցին Իրլանդիայում, որ սպառնում էր կրկին արիւնհոսեղ տեսարանների ասպարէզ դառնալ:

1891 թ. սկզբներին Ամերիկայից լետ դարձան Եւրոպա իրլանդացի պատգամաւորներ Դիլլօն և Օ'Բրիէյն. նրանք Ամերիկա էին գնացել հանգանակութիւն անելու յօգուտ Իրլանդիայի երկրագործների, որոնք այդ ժամանակ նեղ դրութեան մէջ էին շնորհիւ գետնախնձորի անաջող հուսնի: Նրանց բացակայութեան ժամանակ անգլիական դատարանը դատապարտել էր նրանց կէս տարուայ բանտարկութեան, յանցաւոր ճանաչելով նրանց այն բանում, որ նրանք 1890 թ. ամառը Տիպերարի քաղաքում իրանց արտասանած ճառերում առաջարկել էին գիւղացիներին հողահարկ չըտալ լէնդ-լորդերին և հարկ պահանջած դէպքում դիմադրել իշխանութեան: Դիլլօն և Օ'Բրիէյն բանտից մի առ ժամանակ ազատ մնալու համար եկան Փրանսիա և այնտեղից փորձ փորձեցին համաձայնութիւն, կամ մի օր և է կոմպրօմիս կայացնել

պարնէլլականների և հակապարնէլլականների մէջ: Նրանց հրաւիրմամբ Փրանսիա ժամանեցին Պարնէլլը, Մակ-Վարտին և մի քանի ուրիշ պատգամաւորներ: Բուլօն-դէ-Սիւր-Մէր քաղաքում դորանց մէջ մի շարք խորհրդակցութիւններ կայացան, բայց առանց դրական հետեւանքի, քանի որ Պարնէլլը կրկին յայտնեց, որ իր պաշտպանած գործը նա երբէք երեսի վրայ չի թողնիլ: Գիլլօնն ու Օ'Բրիէյնը, Պարնէլլի ջերմ երկրպագուները լինելով, նրան բացարձակ թշնամութիւն չը ցոյց տուին, բայց այնուամենայնիւ հակվեցան հակապարնէլլականների կողմը, անպայման հաւատ ընծայելով Գլադստօնի նախկին խոստումներին: Սակայն նրանց շնորհով հակապարնէլլականները սանձահարեցին իրանց թշնամական ձգտումները դէպի իրանց նախկին ղեկավարը. այդ պատճառով Պարնէլլի բարոյական ոյժը կրկին իր նախկին չափ ու կշիռն ստացաւ: 1891 թ. պարլամենտական նստաշրջանի ժամանակ համայնքների ժողովում նա դարձեալ հանդիսանում էր իբրև իրլանդական պարլամենտական կուսակցութեան գերագոյն հրամանատար, որի իւրաքանչիւր խօսքը մեծ ուշադրութեամբ էր լսվում, թէ կողմնակիցների և թէ հակառակորդների բանականերում: Գիլլօնն ու Օ'Բրիէյնը Բուլօնի խորհրդակցութիւններից յետոյ նաև նստեցին և լաւ իմանալով իրանց սպասող վիճակը, ուղևորվեցան Անգլիա, ուր ափ իջնելուն

պէս, ոստիկանները ձերբակալեցին նրանց և տարան Իրլանդիա, ուր և բանտարկեցին:

Իր բազմաթիւ ճառերի և հրովարտականների մէջ Պարնէլլը գլխաւորապէս քննադատում էր 1886 թ. կազմած Հոմըուլի նախագիծը և այն հայեացքները, որ Գլադստօնն ունէր հողային հարցի վերաբերմամբ: Իր իրլանդացի հակառակորդների վրայ, նրանց թույլ թշնամիներ համարելով, նա այնքան էլ մեծ ուշադրութիւն չէր դարձնում: Իր ճառերից մինում Մակ-Վարտու մասին նա ասաց հետեւեալը. «Մակ-Վարտին մի պատկառելի ծերունի է, որի հետ շատ հաճելի է զրոյց անել թէյի սեղանի մօտ. բայց նա մի անեռանդ մարդ է, որի արեան և ուղեղի մէջ չը կայ պողպատի մի մսխալ անգամ»: Հակապարնէլլականները, իրանց ղեկավար ունենալով այդ մարդուն, Պարնէլլի համար վտանգաւոր հակառակորդներ չէին. նրանք, ինչպէս կը տեսնենք, ենթարկվում էին նրա բոլոր պահանջներին: Քննադատելով Հոմըուլի նախագիծը, Պարնէլլը հասկացնում էր ժողովրդին, որ Գլադստօնը իրան, Պարնէլլին, մի քանի գրաւոր խոստումներ է արել, որոնք պաշտօնապէս յայտարարված չեն և մնում են գաղտնիք իր ու Գլադստօնի մէջ: Եթէ Գլադստօնը այժմ պահանջում է նրա հեռանալը, թող հրապարակապէս յայտնի 1889 թ. Հաւարդէնում կայացած համաձայնութեան այն կէտերը, որոնք էական փոփոխութիւններ են մտցնում 1886 թ. պարլամենտին ներկայացրած Հոմ-

րուլի նախագծի մէջ. բացի դրան Պարնէլլը պահանջում է, որ Գլադստոնը պաշտօնապէս խոստանայ Հոմրուլի նախագծի մէջ մտցնել այդ կէտերը: Գլադստոնը պատասխանեց, որ նա յարմար չէ գրտնում հրատարակել նախագիծը, քանի դեռ նա օրինագծի ձև չէ ստացել և չէ առաջարկվել պարլամենտի քննադատութեան: Պարնէլլը, դորա մէջ վտանգաւոր խաղ տեսնելով, իրաւունք համարեց իր համար՝ օգտվել իրան յայտնի տեղեկութիւններէրից: Նա յայտնեց, որ Իրլանդիայի ապագայ ինքնավարութիւնը մի փայլուն օպերային դեկորացիա կըլինի ժողովրդի համար, եթէ իրլանդական պարլամենտը իր իրաւունքի տակ չունենայ երկրի ներկայ կարգապահութիւնը ապահովող հիմնարկութիւններ, որոնք են՝ ոստիկանութիւնը, ազմինիստորացիան, տեղական զօրքը, ժանդարմերիան և դատարանները, առանց որոնց պարլամենտին ենթարկվող տեղական կառավարութիւնը, մինիստրութիւնը, մի անզօր, անպէտք մարմին կը լինի: Բացի այդ հողային յարաբերութեան վերաբերեալ հարցերն ու օրէնսդրութիւնը պիտի լիովին ենթարկվեն իրլանդական պարլամենտի իրաւասութեան, այլ ոչ թէ ընդհանուր պետականին, որը մինչև այժմ բաւարարութիւն չէ տուել Իրլանդիայի երկրագործ ազգաբնակիւթեան արդարացի պահանջներին: «Գլադստոնը,—ասում էր Պարնէլլը,—այդ բոլորը խոստացել է տալ Իրլանդիային, և եթէ նա այդ չանի, այն ժամանակ իրլանդացի պատգամաւոր-

ները մեծ յանցանք գործած կըլինին, եթէ գնան նրա լետեից»: Հակապարնէլլականները, տեսնելով ինչ զօրեղ զէնք ունի Պարնէլլն իր ձեռքում, անմիջապէս բանակցութիւններ սկսեցին Գլադստոնի հետ, նրա հայեացքների հետ ծանօթանալու համար: Գլադստոնը պատասխանեց, որ ճշմարիտ է, ինքն առանձին խորհրդակցութիւններ է ունեցել «պատուական ջէնտլմէնի» (Պարնէլլի) հետ, բայց երբէք նրա հայեացքները քաղաքական գաղտնիք չեն եղել իր ու Պարնէլլի մօտիկ աշխատակիցների համար. այն, ինչ որ այժմ Պարնէլլը պահանջում է, արդիւնք են փոխադարձ զիջումների ու համաձայնութեան. նրա, Գլադստոնի, հայեացքները այժմ էլ նոյնն են, ուրեմն իրլանդացի պատգամաւորները կարող են հանգիստ մնալ և եռանդով հող պատրաստել ապագայ ընդհանուր ընտրութիւնների համար: Այդպիսով Գլադստոնը կողմնակի կերպով խոստացաւ Հոմրուլի ապագայ նախագրծի մէջ մտցնել այն կէտերը, որոնց մասին 1889 թ. Հաւարդէնում վերջնական համաձայնութիւն էր կայացել նրա, Պարնէլլի և նրանց մօտիկ աշխատակիցների մէջ: Պարնէլլը իր ճառերի մէջ հէնց այդ էր պահանջում. նա փառաւորապէս հասաւ իր նպատակին, կրկին անգամ զգալ տալով իր հակառակորդներին, թէ ինչքան մեծ է իր ոյժը:

XIX.

1891 թ. ամառը Պարնէլլը Լօնդօնում ամուսնացաւ տիկին Օ՛Շիի հետ և դրանով վերջ տուեց այն աննպաստ ու կեղտոտ լուրերին, որոնք համարեա մի ամբողջ տարի հեղեղի նման թափվում էին նրա գլխին: Տիկին Օ՛Շիի ու Պարնէլլի մէջ գոյութիւն ունեցող յարաբերութիւնները, ինչպէս տեսանք, պատմական մեծ հետեանքներ ունեցան: Ամուսնանալով նրա հետ, Պարնէլլը նպատակ ունէր ազատել սիրելի կնոջ կեղծ դրութիւնից և օրինաւոր ձև տալ այն մտերիմ կապերին, որոնք գոյութիւն ունէին նրանց մէջ: Այդ ամուսնութիւնը Պարնէլլին չըտուեց ոչ հարստութիւն, ոչ նոր կապեր, քանի որ տիկին Օ՛Շին ոչ հարուստ էր, ոչ մեծ տան զաւակ: Բայց այդ կինը պատկանում էր Իրլանդիայի այն կանանց թուին, որոնք ներշնչված հայրենիքի ազատութեան գաղափարով և առաջադէմ մտքերով, կարողանում էին իրանց ամուսիններին նոր ոյժ տալ, նրանց համար ոգևորութեան աղբիւր դառնալ: Տիկնոջ առաջին ամուսինը նրանցից չէր, որ հասկանար ու գնահատէր իր կնոջ վսեմ ձգտումները, իսկ երկրորդն էր նա, որի անուսնով ոգևորվել են շատ տիկիներ և օրիորդներ, իրլանդացի կանայք. այդ երկրորդն էր «Իրլանդիայի անթագալիր թագաւորը»:

Այդ ամուսնութիւնը Պարնէլլին մի բոլորէ անգամ լետ չըքաշեց գործունէութեան ասպարէզից:

Նոյն 1891 թ. ամառը նա Իրլանդիայում հիմնեց երկու մեծ քաղաքական օրաթերթ: ձառեր տեղի էին ունենում թէ Իրլանդիայում և թէ Անգլիայում: Այդ ժամանակ նա Քլադստօնի առաջ դրեց մի նոր պահանջ:

1886 թ. Հոմբուլի օրինագիծն առաջարկում էր՝ Իրլանդիային սեփական պարլամենտ տալուց յետոյ, Մեծ Բրիտանիայի պարլամենտից հեռացնել իրլանդացի պագամաւորներին և նրանց գործունէութիւնը սահմանափակել Իրլանդիայում բուն իրլանդական գործերով, իսկ Լօնդօնի պարլամենտում թողնել միայն բուն Անգլիայի, Շոտլանդիայի և Ուելսի պատգամաւորներին: 1886 թ. Պարնէլլը, չըցանկանալով այդ համեմատաբար ոչ այնքան կարեւոր կէտի համար զօհել ամբողջ օրինագիծը և Քլադստօնի թշնամիների բանակն անցնել, ուղղակի ընդգիծագրութիւն չը ցոյց տուեց Քլադստօնին այդ կէտի վերաբերմամբ. մնալով առանձին կարծիքի, նա մտադիր էր օրինագծի երկրորդ ընթերցանութիւնից յետոյ, երբ համայնքների ժողովն սկսում է օրինագծի իւրաքանչիւր յօդուածի մանրամասն քննադատութիւնը, առաջարկել՝ Իրլանդիայի պատգամաւորների Մեծ Բրիտանիայի պարլամենտում թողնելու հարցը՝ իբրև յաւելուած Քլադստօնի ներկայացրած օրինագծի: Բայց որովհետև 1886 թ. Հոմբուլի օրինագիծը երկրորդ ընթերցումից յետոյ անմիջապէս մերժվեց, ուստի Պարնէլլն առիթ չունեցաւ առաջարկել իր յաւելուածը:

Այդ հարցը մնաց անորոշ գրութեան մէջ մինչև 1891 թ. ամառը: Իր նախկին պահանջներին Պարնէլին աւելացրեց և այդ պահանջը: Իր բազմաթիւ ճառերի մէջ նա ասում էր մօտաւորապէս հետևհետև. «Գլադստօնը իր նախագծած Հօմրուլով պէտք է տայ Իրլանդիային ո՛չ թէ անպայման անկախութիւն, այլ մի ներքին աւտօնօմիա, ինքնավարութիւն: Իրլանդիան մնալու է դարձեալ Միացեալ թագաւորութեան մի խոշոր մասը. նրա պարլամենտի բոլոր վճիռները պիտի ենթարկվեն Մեծ Բրիտանիայի թագի գերագոյն հայեցողութեան: Բացի այդ Իրլանդիան որոշ չափով պէտք է մասնակցի ընդհանուր պետական գործերին, ինչպէս՝ արտաքին քաղաքականութեան, պետութեան պաշտպանութեան, առևտրական, տնտեսական և սօցիալական հարցերին վերաբերեալ գործերին: Այդ բոլորը ենթարկուած է ընդհանուր պետական պարլամենտի իշխանութեան, ուստի Իրլանդիան էլ պիտի մասնակից լինի այդ պարլամենտի պարամօնունքներին, այսինքն նա պիտի ունենայ այնտեղ սեփական պատգամաւորներ, ինչպէս այժմ այդ գոյութիւն ունի: Զրկել Իրլանդիան այդ իրաւունքներից, այդ միւսնօյն է տալ անգլիացիներին ՚ի սոսկալի գէնք, որի միջոցով նրանք միշտ կարող են խորտակել Գուբլինի ապագայ պարլամենտը, երբ այդ կը պահանջեն Անգլիայի շահերը»: Պարնէլի այդ ճառերն այն հետևանքն ունեցան, որ հակապարնէլականները նոր բանակցութիւններ

սկսեցին Գլադստօնի հետ: Գլադստօնը խոստացաւ իրլանդացիների այդ պահանջն աչքաթող չանել Հօմրուլի ապագայ նախագիծը կազմելիս. դրանով նա ակնարկեց, որ այդ հարցի վերաբերմամբ նա ունի նոյն կարծիքը, որ արդէն յայտնել էր Պարնէլը: Հակապարնէլականները կրկին անգամ շօշափեցին իրանց նախկին առաջնորդի ոյժը, որի խօսքն ու գրիչը այդպիսով Գամօկլեան սրի պէս իւրաքանչիւր ըրպէ սպառնում էին նրանց անգոր գլուխներին: Պարնէլը չէր կարող հաշտվել այդ թօյլ ու անգոյն մարդկանց հետ: Նրանց ղեկավարութիւնը Պարնէլի կարծիքով վտանգ էր սպառնում իրլանդական գործին, ուստի նա 1891 թ. աշնան սկզբներից սկսեց մեծ եռանդով գործել Իրլանդիայում, նպատակ ունենալով հող պատրաստել ապագայ ընդհանուր ընտրութիւնների համար և զրկել իր հակառակորդներին ժողովրդի քուէներից: Պարնէլի այդ եռանդուն գործունէութիւնը սակայն ողբալի հետևանքներ ունեցաւ. նրա առողջութիւնը քայքայվեց. նրա Ֆիզիքական կազմուածքը մի թօյլ կեղև էր նրա երկաթէ կամքի ու վիթխարի հոգու համար: Զղային ցնցումներ յաճախ պատահում էին նրա հետ: Զընայած կնոջ և ընկերներների խորհուրդներին, նա մի ըրպէ անգամ հանգիստ չէր առնում. «Մինչև իմ վերջին շունչը ես պիտի գործեմ ու կովեմ. այդ է պահանջում ինձանից Իրլանդիան, նրա ամբողջ անցեալը, ներկան ու ապագան», — լինում էր Պար-

նէլլի սովորական պատասխանը: Իրլանդացի բարդը, ժողովրդական երգիչը, իր «անթագակիր Կօնօնգի» այդ խօսքերին կաւելացնէր՝ «Իմ սուրը, դրօշակը ես պիտի կրեմ». և ճշմարիտ, Պարնէլլը մինչև իր կեանքի վերջին րոպէն իր ձեռքում կրեց հայրենիքի ազատութեան դրօշակը: 1891 թ. սեպտեմբերի 20-ին Իրլանդիայի ամենախուլ անկիւններից մինում, շտապելով Հալվէյ քաղաքը, ճանապարհին նա ամբողջ գիշերը ստիպված եղաւ անցկացնել սաստիկ անձրևի տակ, չրկամենալով լետաձգել Հալվէյում նշանակված միտինգը: Նա մրսեց. բայց բոլորովին ուշ չը դարձնելով դրա վրայ, եկաւ Հալվէյ բազմամարդ միտինգում արտասանեց իր հռչակաւոր ճառերից մինը, որը եղաւ նրա վերջին ճառը: Զգալով հիւանդութեան սաստիկութիւնը, նա Հալվէյից անմիջապէս վերադարձաւ Անգլիա, ուր Բրայտօն քաղաքում ապրում էր այդ ժամանակ նրա ընտանիքը, տիկին Պարնէլլն իր դուստր օրիորդ Օ՛Շիի հետ միասին: Պարնէլլը Բրայտօն վերադարձաւ բոլորովին հիւանդ և ուժասպառ. թոքերի սաստիկ բորբոքումն ու ջղալին ցնցումները նրան անկողին նետեցին: Բժիշկներն անգօր գտնվեցան բռնել անողորմ մահի առաջը. սեպտեմբերի 25-ին, երեկոյեան, տիտանը քնեց յաւիտենական քնով: Իրլանդական ժողովուրդը զրկվեց իր «անթագակիր թագաւորից», իսկ մարդկութիւնը, ազատութեան ու եղբայրսիրութեան համար մեծ մարտնչողներից մէկից: Մահուան տագ-

նապի ժամանակ Պարնէլլը, երբ զգաց, որ հասել է իր կեանքի վերջին վայրկեանը, լարեց իր բոլոր ոյժերը, բացեց աչքերը և դառնալով շրջապատողներին, բացազանչեց. «Յայտնեցէք իրլանդական ազգին և իմ հաւատարիմ ընկերներին, թէ ինչպիսի անհուն սիրով ես սիրում էի նրանց». ասաց և խորը հառաչանք քաշելով յաւիտեան փակեց իր աչքերը:

Պարնէլլի մահուան լուրը կայծակի արագութեամբ տարածվեց ամեն կողմ. Իրլանդիայում նա անօրինակ իրարանցում առաջ բերեց: Իրլանդական ժողովրդի համար՝ ճակատագրի մի ծանր հարուած էր ազգային հերոսի կորուստը, և նա մեծից սկսած մինչև փոքրը անկեղծ սրտով ողբում էր իր «անթագակիր Կօնօնգի» վաղաժամ մահը: Պարնէլլի թաղումը տեղի ունեցաւ հոկտեմբերի սկզբներին Դուբլինում: Բրայտօնից մինչև այդ քաղաքը նրա մնացորդների տեղափոխումը նմանվում էր մի յաղթական գնացքի: Ի նշան իրանց խորին ցաւակցութեան անգլիացիները, հաւատարիմ մնալով իրանց բնածին ազնուութեան, երկաթուղու կայարանները սև էին հագցնում, փողոցները զարդարում էին սև դրօշակներով, պասկներ էին դնում նրա դագաղի վրայ, մի րոպէ անգամ չը մտածելով այն բանի վրայ, որ դա այն մարդու դագաղն է, որը միշտ ասում էր իր զինակիցներին ու ժողովրդին. «Կոխ Անգլիայի ու անգլիացիների դէմ. Իրլանդիայի ոխերիմ թշնամին Ալբիօնի զա-

լակն է. մենք պէտք է խորտակենք նրա բռնակալութիւնը:» Իրլանդիայի ափերում Պարնէլլի դիակին հանդիպեց հարիւր հազարաւոր ամբոխ, որը մինչև Դուբլին իր ուսերի վրայ տարաւ իր ազգային սրբութիւնը, այն հասարակ փայտէ արկղը, որի մէջ պառկած էր իր «անթագակիր թագաւորը»: Թաղման օրը Իրլանդիայի բոլոր ծայրերից ժողովվել էր Դուբլին համարեա միլիօնաչափ ամբոխ: Գերեզմանատնում կարողացան տեղաւորվել միայն պատգամաւորութիւններն իրանց պսակներով. ամբոխը ծածկել էր բոլոր փողոցները, պատշգամբներն ու կտուրները: Դուբլինը ամբողջապէս ծածկված էր սև գրօշակներով ու կտորներով: Պարնէլլի դագաղի վրայ գրված էին, նրա ցանկութեան համեմատ, որը նա քանիցս անգամ յայտնել էր իր մօտիկ ընկերներին, հետեւեալ երեք խօսքերը. «Չարլզ Ստիւարտ Պարնէլլ:» Ամեն մի իրլանդացու համար պարզ էր այդ խօսքերի դիւթական նշանակութիւնը, ուստի ուրիշ բառեր աւելորդ էին: Թաղման հանդէսը վերջացաւ ուշ երեկոյեան: Ծէսը կատարում էր բողոքական հոգևորականութիւնը. Պարնէլլը բողոքական էր: Երբ դագաղը իջեցրին գերեզման, մուսլլ ամպերի տակից դուրս լողաց լուսինը, մոմերը հանգան, քահանան կարդաց իր վերջին աղօթքը, երգեցողութիւնը տեղի տուեց անթիւ ամբոխի տխուր ողբին. ժողովուրդը ողբում էր և իր արտասուքով ողորդում էր իր անմահ դիւցազնի գերեզմանը: Այդ

սրտաշարժ տեսարանով վերջացաւ տխուր հանդէսը: Ամբոխը ցրվեց, տանելով իր հետ մի մի հատ այն սգի գրօշակներից, որոնցով զարդարված էր գերեզմանատունը և Դուբլինը: Գրօշակների վրայ գրուած էին Պարնէլլի Հալվէյում արտասանած ճառի վերջին հետեւեալ խօսքերը. «Եւ երբ կը հասնի ժամը՝ թողնել ինձ այս փոթորկալից աշխարհը, իմ սկսած գործը չի մեռնիլ, իմ յարուցած կռիւր չի ընդհատվիլ: Նրանք, որոնք այսպիսի անձնանուիրութեամբ առաջ են ընթանում իմ ցոյց տուած շաւղով, նրանք, որոնք տարիների ընթացքում արեան ու կրակի միջով անցել են իմ յետեւից, անվեհեր քաջութեամբ կը շարունակեն այդ սուրբ գործը, որովհետև իմ գաղափարները ձուլվել են նրանց և համայն իրլանդական ազգի ամբողջ էութեան հետ:» Մարդկութեան մեծ առաջնորդներին այդ միտքն է ոգևորում ու մխիթարում միշտ: Նրանք գործում են, մի բոպէ անգամ չը լուսահատվելով. նրանք գիտեն, որ այսօր կամ վաղը անողորմ մահը դուրս կը խլի նրանց կենդանի մարդկանց շարքից, բայց այն համոզմունքը, որ իրանցից լետոյ կենդանի կը մնան իրանց քարոզած գաղափարները, որ իրանց փայլաչափ իդէալները կը շարունակեն ոգևորել անթիւ սերունդներ, — նոր ոյժ և ոգի է ներշնչում նրանց, ամրացնում է նրանց եռանդը, որը չի թուլանում մինչև նրանց վերջին շունչը:

Պարնէլլի գերեզմանն այժմ Իրլանդիայի հա-

մար մի ազգային սրբութիւն է, որին իրլանդացիները գալիս են երկրպագելու մինչև անգամ ուկրանոսի միւս կողմից, հեռու Ամերիկայից: 1891 թ. նոյեմբերին Դուբլինում տեղի ունեցաւ մի նըշանաւոր գէպք. Պարնէլլի գերեզմանին երկրպագելու եկան և նրա վրայ կենդանի ծաղիկներից հիւսած մի գեղեցիկ պսակ դրին Վիկտորիա թագուհու երկու թոռները, Ուէլսի իշխանի, Մեծ Բրիտանիայի թագաժառանգի՝ պատանի որդիները, որոնց հայրը պատկանում է Պարնէլլի, իբրև անգուղական պարլամենտական հոգատորի, երկրպագուների թուին: Պարնէլլի, ինչպէս և Գլադստոնի նշանաւոր ճառատութիւնների ժամանակ համայնքների ժողովի վերնատան օթեակներում ժողոված ունկնդիրների թուում Ուէլսի իշխանը միշտ աչքի է ընկել:

Պարնէլլի մահը մեծ նիւթ տուեց լրագրներին: Անգլիական թերթերից «Times» և «Daily News» յայտնեցին հետեւեալ կարծիքները: Առաջինն ասաց. «Պարնէլլն անմահացրեց իրան ընդհանուր պատմութեան էջերում. յանձին նրա գերեզման իջաւ տասնեկիններորդ դարու ամենամեծ մարդկանցից մինը: Նա ուժեղ ու անվեհեր էր, ինչպէս առիւծ, յանդուգն ու անզուսպ, ինչպէս վագրը»: Երկրորդն ասաց. «Պարնէլլն մի անզուգական վիթխարի էր. նա բոլորովին մենակ պատերազմ սկսեց անգլիական պարլամենտի դէմ և վերջը յաղթեց հսկաների այդ ժողովարանը ու մինչև ան-

գամ հնազանդեցրեց իրան: Այդպիսի յաղթութիւն Կեսարին անգամ չը յաջողվեց, երբ նա կռւում էր Հռոմի ծերակոյտի դէմ:»

XX.

Պարնէլլի մահից յետոյ նրա կողմնակիցների և հակառակորդների մէջ գոյութիւն ունեցող թըշնամութիւնն աւելի ևս սաստկացաւ: Պարնէլլականները, որոնց գլուխն անցաւ երիտասարդ Ջոն Թէդմօնդը, բացարձակ սկսեցին մեղադրել հակապարնէլլականներին, որ նրանք կողմնակի կերպով նպաստեցին Պարնէլլի կորստեան: Պարզ էր, որ Պարնէլլը զոհ գնաց իր տենդային գործունէութեան. նրան դրդում էին այդպէս գործել իր հակառակորդները, ուստի բնական էր պարնէլլականների զայրոյթը: Իրլանդիայում տեղի ունեցան մի շարք ընդհարումներ երկու հակառակ կուսակցութիւնների մէջ. տեղի ունեցան անկարգութիւններ, արիւնահեղ դէպքեր, որոնք առիթ տուին Սոլիսբերիի կառավարութեան կրկին գործադրել խիստ միջոցները: Կառավարութեան այդ քայլը աւելի ևս սաստկացրեց անկարգութիւնները: Իրլանդական գործերը կրկին քաօսական դրութեան մէջ ընկան: Այդպէս շարունակվեց մինչև 1892 թ. ամառը: Մարկիզ Սոլիսբերին վճռեց օգտվել իրլանդական կուսակցութիւնների ներքին երկպառակութիւններից և կրկին յուսալի պարլամենտական մեծամասնութիւն ձեռք բերել: Այդ նպատակով նա 1892

Թ. յունիսին լուծեց համայնքների ժողովը և ընդհանուր ընտրութիւններ նշանակեց: Թէ ազատամիտները և թէ իրլանդական կուսակցութիւնները, տեսնելով, ինչ մեծ վտանգ է սպառնում ընդհանուր գործին, Հօմրուլին, թողեցին իրանց տնային հաշիւները և համախմբեցան Գլադստօնի դրօշակի տակ: Յուլիսին կայացան ընդհանուր ընտրութիւններ: Հօմրուլականները չաղթող հանդիսացան: «Մեծ Ծերունին» մեծամասնութիւն ստացաւ և յուլիսի վերջերին նրա գլուխն անցած մուտք գործեց համայնքների ժողովը: Կառավարութիւնը, պարտութիւն կրելով, հակառակ ընդունված սովորութիւններին, իսկոյն և եթ հրաժարական չը տուէց: Լօրդ Սօլիսբիւրին յոյս ունէր, որ Հօմրուլականների մէջ ընդհանուր ընտրութիւններից յետոյ նախկին երկպառակութիւնները կը սկսվեն, որի պատճառով Գլադստօնը հնար չի ունենալ կառավարութեան ղեկը ձեռք առնել: Եթէ Սօլիսբիւրիի այդ յոյսերն իրագործվէին, այն ժամանակ նա հիմք կուներնար կրկին անգամ լուծել համայնքների ժողովը և նշանակել նոր ընտրութիւններ, որ այդ անգամ կարող էին նրան մեծամասնութիւն տալ: Հօմրուլականներն այդ բոլորը շատ լաւ էին հասկանում. ուստի նրանք նստաշրջանի հէնց առաջին օրից սկսեցին համերաշխ գործել: Գլադստօնի երիտասարդ աշխատակից Ա. սկվիտի առաջարկութեամբ համայնքների ժողովը ձայների մեծամասնութեամբ իր դժգոհու-

թիւնը յայտնեց պահպանողական կառավարութեան, որն այդ մահացու հարուածն ստանալուց յետոյ, իսկոյն իր հրաժարականը ներկայացրեց Վիկտորիա թագուհուն: Թագուհին 1892 թ. օգոստոսի 3-ին ընդունեց մարկիզ Սալիսբիւրիի հրաժարականը, իսկ Գլադստօնին հրաւիրեց կազմել նոր կառավարութիւն:

Գլադստօնը շուտով կազմակերպեց մինիստրութիւնը: Իրլանդիայի պատասխանատու վարչական ղեկը նա յանձնեց իր մօտիկ աշխատակից Ջօն Մօրլէյին: Այդպիսով 82 ամեայ զառամեալ «Մեծ Ծերունին» կրկին իր հօր ձեռքն առաւ Մեծ Բրիտանիայի կառավարութեան ղեկը, աւետելով ոչ միայն իրլանդացիներին, այլ և ուրիշ շատերին, նոր յոյսեր, երջանիկ ու բաղդաւոր օրեր...

Կառավարութիւնը վերջնականապէս կազմակերպելուց յետոյ Գլադստօնն արձակեց պարլամենտը և իր ընկերների հետ միասին սկսեց մեծ ետեւանդով պատրաստվել 1893 թ. նստաշրջանի համար: 1892 թ. մնացած չորս ամիսը և 1839 թ. յունվարը նա նուիրեց մի շարք օրինաբիծների մշակման, որոնց մասին նա խոստումներ էր արել ընտրողներին դրանից մի տարի առաջ, 1891 թ. սեպտեմբերին Նիւ-Կէստլում արտասանած իր հռչակաւոր ճառի մէջ: Այդ օրինաբիծների մէջ գլխաւոր տեղը բռնում էր Հօմրուլը, որին նուիրվեց մինիստրական խորհուրդների ամենամեծ մասը: Վրայ հասաւ 1893 թ. նստաշրջանը. յունվարի

վերջերում բացվեց պարլամենտը: Կառավարութիւնը գահական ճառում պարզ ու որոշ կերպով յայտարարեց, որ նա «իր սրբազան պարտքն է համարում պարլամենտի բարեհաճ ուշադրութիւնը հրաւիրել Իրլանդիայի վրայ, որի արգարացի պահանջները պէտք է վերջապէս իրանց օրինաւոր վճիռն ստանան»: Շատ հասկանալի էր, թէ ինչ են նշանակում այդ խօսքերը: Լօրդերն ու կոմօնէրները (պատգամաւորները) մեծ հետաքրքրութեամբ ու անհամբերութեամբ սկսեցին սպասել այն օրին, երբ Գլադստօնը պարլամենտի առաջը կը դնի իր օրինագիծը: Հասաւ և այդ պատմական օրը, 1893 թ. փետրվարի 1-ը: Իւրաքանչիւր պատգամաւոր զգում էր, որ այդ օրը տեղի է ունենալու մի նիստ, որի նմանը դարերի ընթացքում մի քանի հատ է պատահում, որը պարլամենտի պատմութեան մէջ պիտի մի ամբողջ դարագլուխ կազմի: «Մեծ ժողովը վերջապէս կայացաւ, — գրում է մի թղթակից, — այս ըոպէիս նրան մանրամասն նկարագրելու հնար չը կայ: Մի քանի ժամ շարունակ սպասելը, յետոյ ուշադրութեան բոլոր ոյժերը լարելը, վախենալով՝ մի գուցէ մի որ և է բան բաց թողնել, չը լսել, կամ չը հասկանալ, անօրինակ ու միւս անգամ չը կըրկնվող տեսարանով յուզվելը, — այդ բոլորը էլեքտրական հոսանքի նման այնպէս են գրաւել բոլոր ջղերդ ու համարեա ամբողջ էութիւնդ և վերջը ուժասպառ արել քեզ, որ կարծես մի ան-

տանելի ծանրութիւն ես կրել ուսերիդ ու մէջքիդ վրայ: Միևնոյն ժամանակ զգում ես, որ անկարելի է չը խօսել այն զգացմունքների ու տպաւորութիւնների մասին, որոնցով լցված է սիրտդ, որոնք վառում են երևակայութիւնդ ու պատկերացնում նրա մէջ այն կախարդական տեսարանները, որոնք անցան աչքերիդ առաջով մի քանի ժամերի ընթացքում, — ժամերի, որոնք տարիներ էին թւում: Փողոցներում և շուկաներում տեղի ունեցող իրարանցումներն ու ընդհարումները ամեն տեղ սովորական բաներ են. բայց տեսնել նոյն տեսակ իրարանցում, համարեա թէ բազկակռիւ երկրագնդիս առաջի օրէնսդրական ժողովարանում, դա մի անսպասելի, անօրինակ բան է, և գուցէ անհաւատալի թուայ դա ձեզ: Իմանալով, թէ ինչ իրարանցում կարող է պատահել այսօրուայ նիստի սկզբում, սպիկէրը նախօրօք հրամայել էր փակել համայնքների ժողովի դահլիճի դռները և բանալ նրանց ուղիղ կէսօրուայ ժամը 12-ին: Սկսած ժամի 10-ից պալատի բազմաթիւ նախասենեակներում ու անցքերում սկսվեց կուտակվել տոմսակաւոր այցելուների, լօրդերի ու պատգամաւորների ահագին բազմութիւն, որը, խմբված դռների մօտ, անհամբեր սպասում էր նրանց բացվելուն: Խփեց 12 ժամը. ժողովարանի դռները մի անգամից բացվեցան, և Մեծ Բրիտանիայի ընտրեալների խմբերը անզուսպ ալիքների պէս դահլիճի ներսը խուժեցին: Շատերը նրանցից, ուշ չը դարձնելով հա-

րեանի բողոքներին, թուշելով նրա գլխով, աշխատում էին յարմար տեղ բռնել, որ լաւ տեսնեն ու լսեն «նրան», որը մի քանի ըուպէից յետոյ պատմական ծրարը ձեռքին պիտի ներս մտնէր դահլիճը: Նոյնպիսի անգուսպ արշաւանք գործեցին ազնիւ լօրդերը դէպի ժողովարանի վերնատան օթեակները, որտեղից նրանք պիտի լսէին առասպելական ծերունուն: Ազնիւ լօրդերն այնքան հեռու գնացին անկարգութիւնների մէջ, որ նրանց կարգի հրաւիրելու համար սպիկէրն ստիպված եղաւ ուղարկել պօլիսմէնների (ոստիկանների) մի ամբողջ խումբ: Աերջիններս լօրդերին զուգ-զուգ կանգնեցրին նախագաւթում և հերթով թողեցին դէպի օթեակները: Ամենից ուշ եկաւ Ուէլսի իշխանը, թագաժառանգը, որն շտապով մտաւ, աւելի լաւ է ասել, ներս թռաւ իր օթեակը, կարծելով, թէ ուշացել է: Բարեբաղդաբար նա չէր ուշացել. ուղիղ երեք ըուպէից յետոյ համայնքների դահլիճը ներս մտաւ «նա», ալեգարդ «Մեծ Ծերունին»: Նրանք, որոնք տեսել էին «նրան» վերջին օրը, համեմատում էին ծերունուն առիւծի կամ արծուի հետ: Այդ համեմատութիւններն ալժամ ոչոքի համար չափազանցութիւններ չէին թւում: Մարդկային խելքը շատ թույլ էր՝ երևակայել և պատկերացնելու այն վեհ տեսարանը, որ ներկայացնում էր իր արտաքինով ճշամեայ Գլադստօնը, որի հոգու խորքում այդ ըուպէին կենտրօնանում էին հազարաւոր մարդկանց միտքն ու բազմաթիւ սերունդ-

ների դարաւոր ձգտումները: Ծերութեան հետքեր նրա վրայ նկատվում էին, երբ նայում էիք նրա հասակի, գանգի, մազերի և առհասարակ ամբողջ ֆիզիքական կազմածքի վրայ. բայց այդ տպաւորութիւնը ըուպէական էր լինում: Նայում էք աւելի խորը, աւելի ուշադրութեամբ և ձեր առաջ տեսնում էք մի վիթխարի, մի հզօր առիւծ, որի իւրաքանչիւր շարժումը, ամենափոքր միմիկան անգամ արտայայտութիւն է խոր և անսահման մտքի: Նայում էք նրա կրակոտ աչքերին, որոնց մէջ զառամեալ հասակի հետքեր ամենևին չեն երևում և ձեր առաջ բացվում է հզօր ու յաւիտենական մտքի մի անսահման աշխարհ, մի փոթորկալի ովկիանոս: Նա սկսում է խօսել, և դուք մի ըուպէաչափ՝ մնում էք ապշած, տեսնելով, ինչպէս այդ մտքի տիտանը հանգիստ ու հանդարտ ձեռնամուխ է լինում այն գործին, որին տենդային իրարանցումով ու ակամայ սարսուռով սպասում էին այնքան մարդիկ, ազտութեան ծարաւով տանջվող մի ամբողջ ժողովուրդ: Մի տեսակ սարսափ էք զգում, տեսնելով, ինչպէս մի մարդու հսկայական ոյժերը, ծովի ալիքների նման միմեանց վրայ կուտակվելով, լանկարծակի փշրվում ու ողողում էին նրա հակառակորդներին, սպառնալով իսպառ լափել նրանց...»

Հակառակորդները խորին պատկառանքով ու լռութեամբ լսում էին նրան. կողմնակիցները հրրճվում էին, իրլանդացիներն անգուսպ ծափահարում

էին, ընդհատում տեղ-տեղ ճառը և կատաղի թը-  
ռիչքներ գործում գէպի Գլադստօնը, ոչ թէ յարձակ-  
վելու, խորտակելու նրան, այլ համբուրելու նրա  
ոտքերը, երկրպագելու նրան, որն այդ ընդհանր  
իրլանդացիների համար մի մարմնացած գաղափար,  
մի սրբութիւն, մի ազատիչ հրեշտակ էր: Գլադ-  
ստօնն արժանի էր իրլանդացիների ցոյցերին. նրա  
ներկայացրած Հօմրուլը բաւարարութիւն էր տա-  
լիս նրանց արդարացի դարաւոր պահանջներին:  
Պարնէլլի առաջարկած կէտերն աչքաթող չէին  
արված: Օրինագծի գլխաւոր կէտերը ձևակերպված  
էին հետևեալ կերպով. I. Իրլանդիան ստանում  
է սեփական պարլամենտ, որը բաղկացած պիտի  
լինի երկու պալատներից, վերին ու ստորին: II.  
Վերին պալատը կազմում են 48 անդամ, իսկ ստո-  
րինը 103: III. Վերին պալատի անդամներն ըն-  
տրրվում են ութ տարով, իսկ ստորինի անդամները  
հինգ տարով: IV. Իրլանդիայի փոխարքան, որը  
ոչ մի քաղաքական կուսակցութեան չը պէտք  
է պատկանի, նշանակվում է վեց տարով կենտրո-  
նական (անգլիական) կառավարութեան կողմից: V.  
Երկրի վարչական մասը (ադմինիստրացիան) պէտք  
է գտնուի փոխարքայի գաղտնի կատարող կօմիտե-  
տի ձեռքում, որի անդամներին նշանակում է ինքը  
փոխարքան: Այդ կօմիտէտը Իրլանդիայի պարլա-  
մենտի առաջ պիտի հանդիսանայ իբրև պատաս-  
խանատու մինիստրութիւն: VI. Իրլանդական պատ-  
գամաւորները, թւով 81 հոգի, մնում են անդամ

ընդհանուր պետական պարլամենտի: Այդ պատ-  
գամաւորները ոչ մի մասնակցութիւն չը պէտք  
ունենան այն առաջարկութիւնների ու օրինագիծ-  
ների քուէարկութեան մէջ, որոնք վերաբերում  
են բուն անգլիական ու շոտլանդական գործերին:  
VII. Իրլանդիայի այժմեան ոստիկանութիւնը աս-  
տիճանաբար ոչնչացնվում է ու նրա տեղը նշանակ-  
վում է բուն իրլանդական ոստիկանութիւն ու  
ժանդարմերիս: VIII. Ընդհանուր պետական ծախ-  
սերին Իրլանդիան մասնակից պիտի լինի այն չա-  
փով, ինչ չափով այդ պահանջում են արդարութեան  
տարրական սկզբունքները:

Գլադստօնն իր հռչակաւոր ճառը, որը շարու-  
նակվեց ամբողջ երկու ժամ, վերջացրեց հետևեալ  
խօսքերով. «Առաջարկուած օրինագիծը կամրացնի  
Մեծ Բրիտանիայի զօրութիւնը, փառքը և նրա  
մասերի միութիւնը: Սրա ընդունելութիւնը կը  
լինի եղբայրսիրութեան, բարու քաղաքականու-  
թեան և արդարութեան մի վսեմ, ոգևորող ու  
մխիթարիչ լաղթութիւն:» Գլադստօնի կողմնակից-  
ներն ու իրլանդացիները բուռն ոգևորութեամբ  
առաջնորդեցին նրան գէպի ժողովարանի նախա-  
սենեակը և այնտեղից փոզոցը, ուր ամբոխը հան-  
գիպեց ալեգարդ «Մեծ Ծերունուն» որոտալի կեց-  
ցէներով և ոգևորված ցոյցերով:

Օրինագծի այդ առաջին ընթերցանութիւնը  
նպատակ ունէր պատգամաւորներին ծանօթացնել  
նրա մանրամասնութիւնների հետ: Անգլիական

պարլամենտում իւրաքանչիւր օրինագծի ճակատագիրը որոշվում է երկրորդ ընթերցանութիւնից յետոյ, երբ տեղի են ունենում վիճաբանութիւններ ու վերջը քուէարկութիւն, որով օրինագիծն ընդունվում է կամ մերժվում: Երկրորդ ընթերցանութիւնից յետոյ, եթէ օրինագիծն ընդունվում է, ժողովն սկսում է քննադատել ու քուէարկել օրինագծի իւրաքանչիւր յօդուածն առանձին: Այդ ժամանակ պատգամաւորներն առաջարկում են լաւելուածներ կամ փոխում են օրինագծի այս կամ այն դարձուածքը: Քննադատութեան այդ շրջանը կոչվում է կօմիտէտական, իսկ համայնքների ժողովը դառնում է կօմիտէտ: Վերջինս զանազանվում է սովորական ժողովից նրանով, որ կօմիտէտում սպիկէրի տեղ նախագահում է մի պատգամաւոր կառավարութեան կողմնակիցներից: Կօմիտէտական քննադատութիւնն առհասարակ շատ դժուար ու մանրակրկիտ է լինում: Կառավարութեան հակառակորդները, դիմելով շատ անգամ օբստրուկցիօնիզմի օգնութեան, ամեն կերպ աշխատում են հարուածել նրան, օրինագծի մի որ և է նշանաւոր յօդուած տապալել և ՚րահետ միասին խորտակել ամբողջ կառավարութիւնը, ուստի վերջինս իր կողմնակիցների հետ միասին լարում է իր բոլոր ոյժերը՝ օրինագծի ամեն մի յօդուածը յաջողութեամբ օնցկացնելու համար անողորմ քննադատութեան բովով: Երբ այդպիսով բոլոր յօդուածներն ընդունվում են, տեղի է ունե-

նում ամբողջ օրինագծի երրորդ ընթերցանութիւնը, որ առաջի շրջանների աջողութեան դէպքում միայն ձեւական նշանակութիւն ունի, ուստի վերջնականապէս ընդունվում է համայնքների ժողովի կողմից:

Ընդունված օրինագիծը համայնքների ժողովից անցնում է յօրգերի ժողովը, ուր նրան սպասում է նոյն բարդ պրօցէդուրան: Կօրգերի ժողովը օրինագիծը մերժում է, ուղղում կամ ընդունում. առաջի դէպքում օրինագիծը մընում է մեռած տառ, գոնէ ժամանակաւորապէս, և համայնքների բոլոր աշխատանքները զուր են կորչում, երկրորդ դէպքում օրինագիծը կրկին յետ է ուղարկվում համայնքների ժողովը, յօրգերի լաւելուածները կամ նրանց մտցրած փոփոխութիւնները քննելու համար, իսկ երրորդ դէպքում, երբ յօրգերն առանց փոփոխութեան ընդունում են ամբողջ օրինագիծը, նա ներկայացնվում է թագուհու բարձր հայեցողութեան ու հաստատութեան, որն ըստ երկարամեայ աւանդութեան միշտ տեղի է ունենում:

Հօմբուլի երկրորդ ընթերցանութիւնը տեղի ունեցաւ 1893 թ. մարտի վերջերին: Մինչև այդ ժամանակ նրա հետ մօտիկ կարողացան ծանօթանալ թէ կողմնակիցները և թէ հակառակորդները: Վիճաբանութիւնները շատ տաք ու երկար էին: Պահպանողականներից աւելի աչքի էր ընկնում իր ճառերով Բալֆուրը, իսկ նախկին գլադստօնեան

աղատամիտներից (ունիօնիստներից) Չէմբերլէնը: Նրանք իրանց բազմաթիւ ճառերի մէջ կրկնում էին հին երգերը, թէ Հօմրուլն Անգլիայի փառքի, միութեան ու զօրութեան անկումն է նշանակում. բացի այդ՝ նրանք մատնացոյց էին անում այն հանգամանքների վրայ, որ Իրլանդիայի ժողովրդի մի մասը մեծ թշնամութեամբ է վերաբերվում առաջարկած օրինագծին: Այդ մասը, որին վերաբերում էին նրանց խօսքերը, իսկապէս մի աննշան փոքրամասնութիւն է, որն ապրում է հիւսիս-արեւելեան Իրլանդիայում գտնվող Օլստեր գաւառում և կենտրոնացած է գլխաւորապէս Բէլֆաստ քաղաքում: Նրանք բողոքականներ են և յայտնի են «օրանժիստ» անունով. ռիսերիմ թշնամի են ոչ թէ Իրլանդիայի ինքնավարութեան, այլ այդ երկրի բուն կաթօլիկ ազգաբնակչութեան: Պահպանողականները օգտուում էին օրանժիստների կրօնական ատելութիւնից դէպի Իրլանդիայի կաթօլիկները և գործ էին ածում նրանց իրանց քաղաքական նպատակների համար, կազմելով Բէլֆաստում բազմամարդ միտինգներ Հօմրուլի դէմ բողոքելու համար: Այդ միտինգներից մինում 1893 թ. Գլադստօնի պատկերը փառաւորապէս այրեցին Բէլֆաստի քաղաքային մեծ հրապարակում: Գլադստօնն ու նրա կողմնակիցները մի ըոպէ անգամ չէին ընկճվում իրանց հակառակորդների առաջ և աջողութեամբ շարունակում էին կռիւր: Երկրորդ ընթերցանութեան ժամանակ իր արտասանած ճա-

ռը Գլադստօնը վերջացրեց հետևեալ խօսքերով. «Ընդդիմադրող կուսակցութիւնը թող ինքն իրան հարցնէ՝ ո՞ւր, ի՞նչպէս և ե՞րբ պիտի վերջանայ դաւաւոր վէճը: Այդ հարցն ամբողջ եօթը տարի ուէ շի՛ ուշով ուսումնասիրելով, ես եկայ այն խորը եզրակացութեան, որ միայն Հօմրուլը կարող է արդարօցի վճիռ տալ նրան: Իրլանդական հարցը բրիտանական պարլամենտի համար եղել է և մընում մինչև այժմ իբրև մի կատարեալ անէճք, քանի որ նա միշտ արգելք է հանդիսանում քաղաքական, սօցիալական, հասարակական, ևս առաւել տնտեսական բարձր առաջադիմութեան:» Բալֆուրը, Չէմբերլէնը, Գիկս-Բիչը ու նրանց կողմնակիցները միայն այն արին, որ մի քանի օր ձգձգեցին քննադատութիւնները, որոնք պսակվեցան Հօմրուլի ընդունելութեամբ: Այդ նշանաւոր դէպքը տեղի ունեցաւ ապրիլի սկզբներին: Երբ սպիկէրը յայտարարեց քուէարկութեան հետևանքները, գլադստօնեանների ու իրլանդացիների ուրախութեան չափ ու սահման չը կար: Տեղի ունեցան դէպքեր, որոնք չէին պատահած երբէք անգլիական պարլամենտում և որոնց մասին Անգլիայի նախկին գործիչները գուցէ երբէք չէին էլ երևակայիլ: Անգլիացիներն ու իրլանդացիներն գրրկախառնվում, համբուրվում և ուրախութիւնից արտասվում էին: Դարերի ընթացքում գոյութիւն ունեցող թշնամութիւնը կարծես մի տեսակ դիւթական ոչժի շնորհով միանգամից ոչնչացած լի-

ներ: Իրլանդացիներն անխտիր, թէ պարնէլլականները և թէ հակապարնէլլականները, շրջապատեցին Քլադստօնին ու այնպիսի ոգևորութեամբ համբուրում էին նրա ձեռներն ու փշերը, որ նա, պարլամենտի «հօր առիւծը», չը կարողացաւ զսպել իրան և արտասովեց... Դա մի վեհ պատկեր էր, արժանի հանճարեղ նկարչի վրձինին 83 ամեայ արտասովոյ «Մեծ Ծերունին» շրջապատված երախտագէտ իրլանդացիներով: Անգլիայի մի քանի քաղաքներում, ևս առաւել Իրլանդիայում, տեղի ունեցան մի շարք տօնախմբութիւններ ոգևորված ցոյցերով ՚ի պատիւ «Մեծ Ծերունու»: Հօմբուլի ընդունելութիւնն ամենից փառաւոր տօնովեց Դուբլինում, ուր բազմաթիւ պատգամաւորութիւններ գնացին Քլազնեվէնեան գերեզմանատունը և պսակներ գրեցին Պարնէլլի, Օ'Կոննէլի և այն բոլոր հերոսների գերեզմանների վրայ, որոնք ծնվել, ապրել, մեռել ու նահատակվել են Իրլանդիայի համար: 1893 թ. մայիսին սկսվեց Հօմբուլի կոմիտէտական քննադատութիւնը, որը տւեց մինչև յուլիսի վերջերը: Թէ ինչ հրէշաւոր աշխատանք էր կատարում համայնքների ժողովը, գրան կարող է ապացոյց լինել այն հանգամանքը, որ Քլադստօնը հնար չը գտաւ մի օրով գոնէ ընդհատել նրա նիստերը Ուէլսի իշխանի մեծ որդու պսակագրութեան հանդէսի առիթով, որը տեղի ունեցաւ յունիսին Լօնդօնում շատ բարձրագիր անձանց ու թագակիր հիւրերի ներ-

կայութեամբ: Քլադստօնը, իբրև առաջին նախարար, պարտք համարեց մի քանի ժամ զոհել՝ հարսանեաց հանդէսին ու խնճուղիին ներկայ գտնվելու համար: Պատմում են, որ այդ ժամանակ նա անընդհատ տէլէֆօնով մանրամասն տեղեկութիւններ էր ստանում, թէ ինչ է կատարվում համայնքների ժողովում և հարկաւոր հրահանգներ էր տալիս իր նախարարներին ու հօտորներին: Թագուհին դժգոհ էր երևում, բայց կարող էր նա բողոքել պարլամենտի դէմ, որը, —ասում են միշտ անգլիացիները պարծանքով,—կարող է ամեն բան անել, բացի այն, որ չէ կարող կնոջը տղամարդ դարձնել, իսկ տղամարդուն կին: Նրա գերագոյն իշխանը ինքը ժողովուրդն է: Հօմբուլի կոմիտէտական քննադատութեան մասին կարելի է ասել, որ այդ հուշակաւոր օրինագիծն անցաւ կատարեալ կրակի միջով, մինչև որ աջողութեամբ հասաւ երրորդ ընթերցանութեան: Քլադստօնի կատարած աշխատանքն այդ շրջանում, նրա ցոյց տուած եռանդն ու տոկունութիւնը աներևակայելի ու անօրինակ են: 83 տարեկան հասակում միայն նորա պէս վիթխարին կարող էր աջողութեամբ մղել այն սոսկալի կռիւր, որը տեղի ունեցաւ համայնքների ժողովում 1893 թ. ամառը: Պահպանողականները մաքառում էին Հօմբուլի իւրաքանչիւր կէտի, իւրաքանչիւր նախադատութեան, դարձուածքի և մինչև անգամ իւրաքանչիւր բառի դէմ, բայց բոլոր կէտերում նրանք ջարդվում էին, քանի որ

Գլադստօնի մեծամասնութիւնը նրան միշտ հաւատարիմ էր մնում: Այդպիսով Գլադստօնին աջողվեց կօմիտէտում անցկացնել Հօմրուլն ու ապահով հասցնել նրան երրորդ ընթերցանութեան, որը տեղի ունեցաւ յուլիսի վերջերին: Նշանաւոր մեծամասնութեամբ Հօմրուլը վերջնականապէս ընդունվեց համայնքների ժողովի կողմից և անցաւ լօրդերի պալատը: Գլադստօնին ու նրա կողմնակիցներին լաւ յայտնի էր, թէ ինչ ընդունելութիւն են ցոյց տալու ազնիւ լօրդերը Հօմրուլին: Պահպանողական ահագին մեծամասնութիւն կազմելով, նրանք մարկիզ Սալիսբիւրիի առաջարկութեամբ երկրորդ ընթերցանութիւնից յետոյ անպայման մերժեցին Հօմրուլը, և այդպիսով այդ հռչակաւոր մարդասէր օրինագիծը ժամանակաւորապէս մնաց մեռած տառ ու ձգվեց պարլամենտի արխիւները: Լօրդերի այդ համարձակ, յանդուգն քայլը գլադստօնեաններին ու իրլանդացիներին մեծ գայրոյթ պատճառեց, բայց նրանք ամենևին չը յուսահատվեցին, քանի որ նոյն լօրդերը միշտ այդպէս են վարվել Գլադստօնի ու բոլոր ազատամիտների հռչակաւոր վերանորոգութիւնների հետ: Սակայն Գլադստօնը երբէք զենքը ձեռքից ցած չի դրել և վերջ է վերջոյ, սպառնալով, որ կը վերանորոգի կամ կը ոչնչացնի լօրդերի պալատը, հնազանդեցրել է նրանց իրան և ընդունել է տուել իր առաջարկութիւնը: Հօմրուլը լօրդերը մի անգամից չէին ընդունիլ. այդ շատ

լաւ գիտէր Գլադստօնը: Ներկայացնելով համայնքների ժողովին իր օրինագիծը, որի տապալվելը լօրդերի ժողովում անխուսափելի էր, նա նպատակ ունէր հոգ պատրաստել լօրդերի դէմ մաքառելու և նրանց վերջնականապէս ընկճելու համար: Սկսած 1893 թ. օգոստոսից մինչև իր հրաժարման օրը Գլադստօնը գործում էր գլխաւորապէս այդ նպատակի համար: Լօրդերին խոնարհեցնելու համար բաւական չէր համայնքների ժողովի հօմրուլական մեծամասնութիւնը: Գլադստօնին պէտք էր հասարակական կարծիքի աջակցութիւնը, ժողովրդի մեծամասնութեան համակրութիւնը: Այդ համակրութիւնը պետական մարդը կարողէ ձեռք բերել կենդանի պահանջ դարձած ժամանակի ոգուն համապատասխան վերանորոգութիւններով, ուստի Գլադստօնը համայնքների ժողովին առաջարկեց երկու ուրիշ նշանաւոր օրինագծեր. մինը յօգուտ բանւորների, որոնք Անգլիայում միլիօններ են կազմում, իսկ միւսը յօգուտ տեղական, բուն տնտեսական հարցերին վերաբերեալ ինքնավարութեան: Առաջին օրինագիծը շօշափում էր ունեւորների, գործարանատէրերի շահերը յօգուտ բանւորների, մեծ բարեփոխութիւններ խոստանալով վերջիններիս: Համայնքների ժողովում ահագին դժուարութիւններով յաջողվեց այդ օրինագիծն անցկացնել: Լօրդերը, այս անգամ քաջութիւն չունենալով բացարձակ մերժել նրան, մտցրին նրա մէջ այնպիսի փոփոխութիւններ, որոնց շնորհով մարդասէր օ-

ըրնագիծը հեշտութեամբ կարող էր դառնալ գործարանատէրերի ձեռքում մի գէնք, որով նրանք միշտ կարող էին կռվել բանւորների դէմ ի մեծ վնաս վերջիններիս. ուստի Գլադստօնը հրաժարվեց ընդունել այդ այլանդակված օրինագիծը և յետ վերջրեց նրան: Բանւորների յայտերը զուր անցան: Սակայն լօրդերի այդ քայլը նրանց դէմ մեծ շարժման նշաններ առաջ բերեց երկրի մէջ: Երեւան եկան բազմաթիւ միտինգներ, ուր «կորչին լօրդերը» և այլ դրա նման շարագուշակ բացազանչութիւնները սովորական երևոյթների շարքն անցան:

Այդ շարժումը, զօրեղանալով, կարող էր կորստաբեր հետեանքներ ունենալ լօրդերի համար: Գլադստօնը այդ լաւ հասկանում էր: Յետ վերցնելով լօրդերի ձեռքով այլանդակված օրինագիծը, նա բանւորական դասակարգն ազատեց սպառնացող վտանգից և ցոյց տուեց նրան իր իսկական թշնամիներին, որոնց խորտակելը շատ հեշտ էր, եթէ միայն ժողովուրդը, ազգի մեծամասնութիւնը, այդ ցանկանար:

Յօգուտ տեղական ինքնավարութեան Գլադստօնն առաջարկեց ծխական խորհուրդների վերանորոգումն: Ծխական խորհուրդներն Անգլիայում վաղուց գոյութիւն ունին: Ի թիւս այլ արտօնութիւնների Գլադստօնի վերանորոգութիւնն այդ խորհուրդներին տալիս է իրաւունք՝ գնել հողատէրերից որոշ չափով հող ու դարձնել նրան ամ-

բողջ ծխի կամ նրա անդամների մասնաւոր սեփականութիւն: Այդ իրաւունքից ծխական խորհուրդը կարող է օգտուել մինչև անգամ այն դէպքում, եթէ մեծ հողատէրերը չեն համաձայնում ծախել իրանց ամբողջ հողը կամ նրա մի մասը: Այդ դէպքում ծխական խորհուրդը կարող է իրան հարկաւոր հողի կտորը արդարացի կերպով զնահատել ու գնել մինչև անգամ հակառակ հողատէրերի կամքին, որոնք ստիպված կը լինին իրանց փողն առնել ու լռել: Անգլիայում և Իրլանդիայում, ուր լօրդերն ահագին հողեր ունին, այդ օրէնքը մի մեծ քայլ էր տնտեսական առաջադիմութեան գործում: Սակայն նա վերաբերվում էր միայն Անգլիային, Շոտլանդիային ու Վալիսին: Համայնքների ժողովում դարձեալ մեծ դժուարութիւններով անցկացնելով իր այդ օրինագիծը Գլադստօնը առաջարկեց նրան լօրդերի պալատին: Վերջինս այլանդակեց այդ օրինագիծը և յետ դարձրեց նրան համայնքների ժողովը: Այս անգամ պատգամաւորների զայրոյթին չափ ու սահման չը կար. մինչև անգամ պահպանողականների շարքերում լօրդերի դէմ բողոքող ձայներ լսվեցին: Գլադստօնը օգտուեց համայնքների այդ տրամադրութիւնից. նա առաջարկեց ժողովին մերժել լօրդերի փոփոխութիւնները և օրինագիծը նախկին խմբագրութեամբ կրկին ուղարկել լօրդերին: Վերջիններս այս անգամ կորցրին իրանց քաջութիւնը և, մի քանի աննշան փոփոխութիւններ մտցնե-

լով, ընդունեցին առաջարկած օրինագիծը, որը թագուհու հաստատութիւնն ստանալով, օրէնքի ոյժ ստացաւ:

XXI

1894 թ. յունվարի վերջերին տխուր լուրեր տարածվեցան Գլադստօնի առողջութեան մասին. ասում էին, որ նրա տեսողութիւնն ու լսողութիւնը թուլացել են: Սկզբում այդ լուրերը հերքվեցան, բայց քիչ ժամանակից յետոյ պարզվեց, որ այդ բոլորը ճիշտ է: Փետրվարին Գլադստօնի հիւանդութիւնը, աչքերի ցաւն ու տեսողութեան թուլութիւնը այնպէս սաստկացաւ, որ բացարձակ խօսեցին նրա հրաժարականի մասին: Այդ լուրերին սկզբում շատերը չէին հաւատում, աւելի լաւ էր ասել, չէին ուզում հաւատալ, բայց դառն իրականութիւնը շուտով պարզվեց: Փետրվարի վերջերին Գլադստօնը մինիստրական խորհրդում յայտնեց իր աշխատակիցներին, որ 84 տարեկան հասակը հնար չի տալիս նրան աջողութեամբ մաքառել հիւանդութեան ու կենսական ոյժերի ընդհանուր անկման դէմ, ուստի սրտի խորին ցաւով, անկեղծ կսկիծով, նա թողնում է իր ընկերներին ու կառավարութեան ղեկը և յանձնում է այդ մեծ գործը իր հաւատարիմ աշխատակիցներին, որոնց հետ նա միշտ բաժանել է ուրախութեան ու վրշտի օրերը... Գլադստօնը սաստիկ յուզված էր երե-

ւում: Նրա աշխատակիցները, մինիստրները, չը կարողացան զսպել իրանց արտասուքը: Համայնքների ժողովում նա այդպիսի յայտարարութիւն չարաւ: Իր վերջին ճառի մէջ, ուղղված համայնքներին, նա կտակեց իր կողմնակիցներին միշտ հաւատարիմ մնալ ազատամիտ կուսակցութեան վսեմ սկզբունքներին, բարձր պահել նրա դրօշակը և լուրջ ուշադրութիւն դարձնել այն երեւոյթների վրայ, որոնք վերջին տարիներս սպառնում են իսպառ տապալել առաջագիմովութեան ու ընդհանուր բարօրութեան սուրբ գործը: Գլադստօնի խօսքերը լօրդերի ժողովին էին վերաբերվում, որի հիմնական վերանորոգման կամ ոչնչացման վճիռը կը տալ ինքը ժողովուրդն, երբ նա աւելի մօտիկ կը ծանօթանայ հարցի հետ և կը ճանաչի այդպիսով իր իսկական թշնամիներին ու բարեկամներին: Ազատամիտ կուսակցութիւնը պարտաւոր է բանալ ժողովրդի աչքերը և այդպիսով փրկել սահմանադրական մեքենայի կանոնաւոր ու բարերար գործունէութիւնը, որը արդիւնք է անթիւ սերունդների դարաւոր բազմաչարչար ու անձնուէր աշխատանքի,—մի խօսքով Գլադստօնը կտակեց իր կուսակցութեանը՝ անխնայ կռիւլ լօրդերի դէմ ու այդպիսով տապալել նրանց տոհմական գերիշխանութիւնը, որն այժմս մի կատարեալ անախրօնիզմ է: Գլադստօնի քաղաքական այդ մեծ կտակը բացեց ազատամիտ կուսակցութեան առաջ գործունէութեան մի լայն ասպարէզ, հրապարակ հանեց

մի մեծ հարց, որի վճռից կախված է, ոչ թէ միայն Իրլանդիայի, այլ համայն Միացեալ պետութեան ամբողջ ապագան:

Գլադստօնի խորհրդով թագուհին կառավարութեան ղեկը յանձնեց լորդ Բօզբերուն, որը հրապարակապէս խոստացաւ իր կողմնակիցներին հաւատարիմ մնալ իր մեծ նախորդի դաւանած սկզբունքներին ու ծրագրին և իր ոյժերի մեծ մասը նուիրել նրա վերջին կտակի կատարման: Սակայն Բօզբերին ոչինչ չը կարողացաւ անել Իրլանդիայի համար: 1894 ու 95 թուականին նա ստիպված եղաւ իր ժամանակի մեծ մասը նուիրել արտաքին քաղաքականութեան: 1895 թ. յունիսին Բօզբերին պարտութիւն կրեց համալքների ժողովում և այդ պատճառով ստիպված եղաւ թողնել կառավարութեան ղեկը, որն անցաւ Գլադստօնի նշանաւոր հակառակորդ պահպանողական լորդ Սալիսբիլիի ձեռքը: Ազնիւ մարկիզը խկոյն և եթ լուծեց համայնքների ժողովը ու նշանակեց ընդհանուր ընտրութիւններ: Այդ ընտրութիւնները տեղի ունեցան յուլիսին: Ազատամիտներն և իրլանդացիները լարեցին իրանց բոլոր ոյժերը, բայց աշողութիւն չունեցան: Սալիսբիլին ստացաւ ահագին մեծամասնութիւն, որը մի մեծ հարուած է Իրլանդիայի դատի համար: Սակայն պահպանողականների այդ յաղթութիւնը իրլանդական ինքնավարութեան վերջնական տապալումը չի նշանակում. նրա ընդունելը մնում է ժամանակի հարց: Իրլանդիան գի-

տէ կռվել, յաղթել ու պաշտպանվել: Նա ծնել է հերոսների ամբողջ սերունդներ և դարձեալ կը ծնի: Այդ գիտեն բոլոր անգլիացիները, ուստի վաղ ուշ նրանք զինաթափ կը լինին, և Իրլանդիան իր դարաւոր ձգտումներն իրագործված կը տեսնի:





2013

« Ազգային գրադարան »



255  
595

NL0039574

